№ 4—5 (287—288) XXIX ՏԱՐԻ ԱՊՐԻԼ—ՄԱՅԻՍ

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
organe
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 4-5
AVRIL-MAI
1929
PARIS (France)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

# ՅԱՅՏԱԳԻՐ
# Հ. Յ. Դ. ԺԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ընկերնե՛ր և հայրենակիցնե՛ր․

Հ. Յ. Դաշնակցութեան 11րդ Ընդհանուր Ժողովը, որ տեւեց աւելի քան մէկ ու կէս ամիս, լարուած ուշադրութեամբ և ընկերական ջերմ մթնոլորտի մէջ քննութեան առաւ բազմատեսակ ազգային-քաղաքական և զուտ կազմակերպական հարցեր և յանգեցաւ յուսալից հետեւանքներու: Մեր բոլոր մարմինները և ընկերները կը սպասեն ակընդէտ իրենց Գերագոյն Ժողովի որոշումներուն, ճշտելու համար իրենց վերաբերումը մեր կեանքի բազմապիսի հարցերու հանդէպ և գծելու առաջիկայ տարիներու գործունէութեան ուղին: Պատմութեան բերումով Հ. Յ. Դաշնակցութիւնը դարձած է քաղաքական զօրաւոր ազդակ մը հայութեան կեանքին մէջ, ուստի անոր որոշումներուն կը սպասեն նաեւ հայ ժողովրդի լայն զանգուածները և մեզ ու մեր դատի հակառակորդ ուժերը: Հաւատարիմ մեր աւանդութեան՝ պիտի փորձենք համառօտ բայց մեկին՝ ուրուագծել Հ.Յ.Դաշնակցութեան գործունէութեան ուղին առաջիկայ տարիներու համար:

Այն խորին համոզումով, որ ազգի ճակատագրի մէջ զօրաւոր ազդակ է բուն իսկ ազգի կամքը, Ընդհանուր Ժողովը ազգի հոգեբանական կացութիւնը առաջին պայմանը կը նկատէ քաղաքական ազդու գործունէութեան: Արդ՝ Ժողովը գոհունակութեամբ կարձանագրէ, որ անցնող չորս տարիներու ընթացքին բաւարար չափով լուծուած են տարագիր զանգուածներու տեղաւորման և օրապահիկի մտահոգիչ խնդիրները, որու հետեւանքով տարագրութիւնը ժամանակ գտած է անդրադառնալու իր քաղաքական կացութեան: Տարագիր կեանքի դառնութիւնները ընդհանուր առմամբ որոշած են գաղութահայ զանգուածներու քաղաքական ուղին և ձգտումներու նպատակը: Քաղաքական եռուն տրամադրութիւններ աւելի ցայտուն երեւան կուգան նորահաս որբերու խիտ շարքերու մէջ, որ անվերապահ խանդավառութեամբ փարած են քաղաքական հատուցման և ազատ հայրենիքի գաղափարին: Քաղաքական տրամադրութեանց նոյն զօրացումը կը նկատուի նաեւ բուն իսկ Երկրի մէջ, ուր չնայած անլուր ճնշումներուն, որոնց ենթարկուած է հայ ժողովուրդը և հակառակ անօրինակ հալածանքներուն, որ կը հարուածեն գիտակից և ըմբոստ տարրը մեր հայրենիքի՝ — մէկ կողմէն ժողովրդի մէջ կը զօրանայ ժխտական վերաբերումը դէպի խորհրդային կարգերը, միւս կողմէն մեր աքսորական և բանտարկուած ընկերներու բաց ձգած դիրքերու մէջ կանգնին նորանոր խանդավառ շարքեր:

Ժողովրդական զանգուածներու տնտեսական ապաքինումը և քաղաքական զարթօնքը պայծառօրէն հանդէս եկան շրջաններու զեկուցումներու մէջ, և Ընդհանուր Ժողովը միաձայնութեամբ յանգեցաւ այն եզրակացութեան, թէ վերջանալու մօտ պէտք է նկատել վերակազմութեան և ուժերու ամփոփման շրջանը և պէտք է ժամանակը հասած համարել աշխուժացնելու պայքարը արտաքին ճակատներու վրայ:

Այս պայքարի կարգախօսը պէտք է լինի․ «Միացեալ և Անկախ Հայաստան», որ արդէն դարձած է հայ զանգուածներու նշանաբանը: Ընդհանուր Ժողովի խորին համոզումով հայոց հարցի ուրիշ ոեւէ լուծում անկարող է ապահովել հայութեան գոյութիւնն իբր ազգ և տալու

digitised by A.R.A.R.@

անոր ազատ ստեղծագործութեան և բարգաւաճման հնարաւորութիւն: «Միացեալ և Անկախ Հայաստանի» գաղափարն է միայն, որ պայծառօրէն և լիապէս կարտայայտէ հայ ժողովրդի դարաւոր տենչանքը ազատ և ուրոյն գոյութեան: Ազատ Հայաստանն է միայն, որ կարող է արդար հատուցում նկատուել մեր արիւնազանգ պայքարի և անօրինակ մարտիրոսագրութեան: Այդ պահանջը յենուած է աշխատաւոր մարդկութեան բարձր սկզբունքին՝ ազգերու ինքնորոշման մասին և հիմք ունի միջազգային դաշնագրեր, որ ճանաչուած են տիրապետող ազգերու կողմէն: Այս մարդկային և արդար պահանջի տեսակէտէն պէտք է գնահատուին իրադարձութիւնները մեր և հարեւան ազգերու կեանքին մէջ և չահագրգիռ պետութեանց վերաբերումը մեր հարցին: Այդ պահանջը պէտք է կազմէ անկիւնաքարը բոլոր քաղաքական բանակցութեանց և պայմանագրութեանց: Այս պահանջի իրացման պէտք է դիմեն ազգային և կուսակցական գործունէութեան բոլոր շաւիղները և անոր շուրջը պէտք է համախմբուին բովանդակ հայութեան քաղաքական ուժերը: Պէտք է ստեղծուի մէկ ճակատ հայութեան քաղաքական պայքարի, բովանդակ ազգը պէտք է ունենայ մէկ նպատակ — «Միացեալ և Անկախ Հայաստան», և պէտք է ցուցադրէ մէկ կամք՝ այդ նպատակին հասնելու համար:

Մեր պայքարի ճամբին առաջին ոյժը, որուն կը հանդիպինք, Խորհրդային Ռուսաստանն է, մէկը մեծագոյն պատասխանատուներէն Անկախ Հայաստանի խորտակման: Հանդուրժելով հայաբնակ գաւառներու անջատումը Հայաստանէն և անոնց կցումը հարեւան հանրապետութեանց՝ Խորհրդային Ռուսաստանը մինչեւ իսկ Կովկասի վարչական բաժանման մէջ կը շարունակէ ցարական Ռուսաստանի աւանդական քաղաքականութիւնը՝ գերազանցելով անոր բռնութեան միւս մարզերու մէջ: Վերջ տալով մամուլի և խօսքի ազատութեան՝ ան օտար մտածումն է, որ կը պարտադրէ Ռուսաստանի այլազան ազգերուն և իր արտառոց քաղաքականութեամբը տնտեսական մարզի մէջ՝ յետին չքաւորութեան կը հասցնէ երկիրն ու աշխատաւոր զանգուածները: Հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և իմացական ազատագրութեան առաջին պայմանն է խորհրդային կարգերու վերացումը Ռուսաստանի մէջ: Ժողովը կը կարծէ, սակայն, որ այդ կարգերու խորտակումը պէտք է կատարուի բուն իսկ ռուս ժողովուրդի ճիգերով, իբր անխուսափելի հետեւանք տնտեսական ահաւոր սնանկութեան և այն պառակտումի, որ սկսած է անցնող չորս տարիներու ընթացքին և գնալով կը խորանայ մեծամասնական կուսակցութեան մէջ: Արտաքին ամէն ճնշում միմիայն արգելք կարող է դառնալ այդ փրկարար քայքայումին, ուստի Ընդհանուր Ժողովը վճռապէս կը մերժէ ոեւէ աջակցութիւն դրսի օտար ուժերուն, որ կը ձգտին խորհրդային կարգերու բռնի վերացման: Միւս կողմէն նկատի ունենալով մեր ժողովուրդի սահմանափակ կարողութիւնը և ուժերու ինքնամփոփման գերագոյն պահանջը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը պէտք է ջանայ մասնակցութիւն չունենալ նաեւ Ռուսաստանի ներքին կռիւներուն մէջ: Ան կը շարունակէ մնալ գաղափարական հակառակորդ խորհրդային կարգերու, արթուն պահելու համար հայ զանգուածներու քաղաքական մտածումը:

Գալով Հայաստանին՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը դէմ լինելով այնտեղի խորհրդային կարգերուն, միաժամանակ դէմ է և այդ կարգերու բռնի վերացման փորձերուն: Լինելով Ռուսաստանի մէկ նահանգը և միեւնոյն ռուս համայնավար կուսակցութեան մէկ կալուածը՝ Հայաստանի քաղաքական կացութիւնը հիմնովին կարող է փոխուել միայն այդ կուսակցութեան քայքայման և Ռուսաստանի խորհրդային իշխանութեան խորտակման հետեւանքով: Գնահատելով ամէն ճշմարիտ շինարարութիւն, յորդորելով ուրիշներուն՝ օժանդակել և անձամբ աջակցելով Հայաստանի վերաշինութեան մեծ գործին՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը կը շարունակէ գաղափարական ընդդիմադիրի իր դերը կատարել Հայաստանի ապազգային կառավարութեան հանդէպ՝ խարանելով անոր ապիկարութիւնը հայ ժողովրդի բախտի տնօրինութեան մէջ և յանցաւոր թուլամորթութիւնը աշխատաւոր հայութեան շահերու պաշտպանութեան գործին մէջ Կովկասի խորհրդային « հանրապետութեանց » և Ռուսաստանի հանդէպ: Մեր գլխաւոր նպատակը պէտք է լինի Երկրի հայութեան ուշադրութիւնը դարձնել իր ինքնապաշտպանութեան և անոր յարակից խնդիրներու վրայ: Մեր համոզումով ինքնապաշտպանութիւնը անհրաժեշտ կը դառնայ Ռուսաստանի ներքին յեղաշրջման ժամանակ, երբ ռուսական զօրքերը խուճապով հեռանան հիւսիս և հայ ժողովուրդը մենակ մնայ թիւրքական աւերիչ ուժերու և իր համակիրներու հանդէպ: Անմտութիւն կը լինէր յուսալ, որ այս հիմնական գործի կազմակերպութիւնը իր վրա կառնէ Հայաստանի ապազգային կառավարութիւնը. ան առաջինը կերթայ խուճապահար ռուս զօրքի հետ դէպի Ռուսաստան, ինչպէս եկած էր անոր սուինի պաշտպանութեամբ Հայաստանը վարելու: Այս մեծ գործը պէտք է նախաձեռնէ և գլուխ հանէ հա՛յ ժողովուրդը:

Մեր ազատագրական պայքարի ճամբին երկրորդ ոյժը, որուն կը հանդիպինք, Թիւրքիան է, որ բնաջնջած է հայութիւնն իր պատմական հայրենիքին մէջ և այն մոլար համոզումն ունի, թէ սրով մաքրած է իր հաշիւները պայքարող հայութեան հետ և առմիշտ թաղած

digitised by A.R.A.R.@

է հայոց հարցը։ Ընդհ. Ժողովը որոշած է զարկ տալ անոր դէմ մղուող պայքարին և յարաճուն գործօն դիմադրութեամբ ստիպել Թիւրքիային ճանաչելու հայ ժողովուրդի քաղաքական իրաւունքները Եփրատէն արեւելք ընկած հայկական հողերու վրա։ Այս պայքարի յաջողութեան համար անհրաժեշտ է մէկ ճակատ ստեղծել հայութեան ծոցին մէջ և բնական դաշնակից նկատել այն բոլոր տարրերը, որ այս կամ այն ձեւով կը նպաստեն Թիւրքիոյ տկարացման։ Ընդհանուր Ժողովը յատկապէս կողջունէ քիւրդերու ըմբոստացումը Թիւրքիոյ դէմ, այդ շարժումը կը նկատէ նպաստաւոր հայ և քիւրդ դատի համար և գիտակից հայութեան ուշադրութիւնն ու համակրանքը կը հրաւիրէ այդ անհաւասար և հերոսական պայքարին վրա։

Անհաւասար պայքարի մէջ, որ պատմութեան հարկադրանքի տակ և յանուն ազատ և անկախ հայրենիքի կը վարէ Դաշնակցութիւնը սիրով, իբր մարտական կազմակերպութիւն, ան մինակ է հայութեան քաղաքական դիրքերուն վրա։ Հայրենիքն ու ազատութիւնը, սակայն, համազգային արժէքներ են, և բովանդակ ազգը պարտաւոր է աշխատելու անոնց իրացման համար. անհրաժեշտ է, որ աւելի լայն զանգուածներ իրենց բարոյական և նիւթական աջակցութիւնը բերեն այս բախտորոշ պայքարին։ Վերակազմութեան և ինքնամփոփումի համար բաւական եղան մեր կազմակերպութեան սեփական միջոցները. աւելի ազդու քաղաքական դեր խաղալու համար անհրաժեշտ են նիւթական աւելի լայն միջոցներ։ Քաղաքական տհասութեան հետեւանքով հայութեան ունեւոր դասը գիտակցութիւնը չունի պատմական այն մեծ գործին, որ կը կատարէ Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ ձգտելով Միացեալ և Անկախ Հայաստանի իրացման, և որ, սակայն, պարտական է ունենալ. ան պարտական է բոլորուիլ Հ.Յ. Դաշնակցութեան շուրջը և զօրավիգ լինել հայ ժողովուրդի ազատարար պայքարին։ Կուսակցական և հանրային բոլոր բեմերէն և մամուլի մէջ պէտք է լայնօրէն քարոզուի ազատասէր տարրերու գործակցութեան գաղափարը, մինչեւ որ դառնայ խորին համոզում և կենդանի գործ։

Մեր քաղաքական նպատակները այնքան աւելի յամառ ու ջերմապէս կը հետապնդուին, որքան հայ զանգուածները հաւատարիմ մնան մեր ազգային նկարագրին և դարաւոր արժէքներուն։ Այս պատճառով մենք կը շարունակենք նեցուկը մնալ Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան, որ այսօր կը հանդիսանայ անկախ Հայաստանի աւանդապահ հաստատութիւնը և որուն վաղը վիճակուած է քաղաքական կարեւոր դեր խաղալ մեր կեանքին մէջ։ Գալով ազգային-կրթական խնդիրներուն՝ Ընդհանուր Ժողովը կը հրահանգէ իր բոլոր մարմիններուն պահպանել եղած ազգային կազմակերպութիւնը, ստեղծել նոր ազգային կազմակերպութիւն այն վայրերու մէջ, ուր չկան։ Միաժամանակ կը հրահանգէ բոլոր ընկերներուն մասնակցիլ և աջակցիլ այն բոլոր մշակութային ձեռնարկներուն, որոնց նպատակն է հայը հայ պահել գաղութներու մէջ։ Այս ասպարէզին վրա մեր հիմնական ձգտումը պէտք է լինի ոչ այնքան անձամբ վարել գործերը, որքան արթնացնելով զանգուածներու ազգային գիտակցութիւնը և հանրային պարտականութեան զգացումը՝ ապահովելով լաւագոյն տարրերու մասնակցութիւնը ազգավարութեան գործին մէջ։

Թեւակոխելով գործունէութեան նոր շրջան՝ Ընդհանուր Ժողովը իր հիացումը կը յայտնէ հայ ժողովուրդին, որ հակառակ բախտի ծանր հարուածներուն կը շարունակէ աննկուն հոգով հետամուտ լինել իր քաղաքական ազատութեան։ Մեր սրտագին ողջոյնը կուղղենք մեր անձնուէր ընկերներուն, որ յանուն Հայրենիքի ազատութեան կը տառապին աքսորի ճամբաներուն, բանտերու և բեւեռամերձ ու Սիբերիական բնավայրերու մէջ. Հաւատարիմ Հ. Յ. Դաշնակցութեան սրբազան աւանդներուն՝ անոնք զոհեցին և կը շարունակեն զոհել ամէն ինչ հայ ժողովուրդի բարօրութեան համար։

Ընկերնե՛ր և հայրենակիցնե՛ր.

Ոչ մէկ իրաւակարգ յաւերժական չէ, բայց մանաւանդ ոչ մէկ անիրաւ կարգ, որ բարոյական արդարացում չունի։ Թիւրքիան չկարողացաւ մեռցնել հայոց հարցը, թէեւ հարիւր հազարներով հայ ջարդեց, և ոչ խորհրդային բռնապետութիւնը պէտք է կարողանայ վերջնապէս թաղել ազատ Հայաստանի գաղափարը, թէեւ հազարներով բանտերն ու աքսորավայրերը կը լեցնէ։ Ներքին քայքայումը բաժինն է երկու յանցապարտ դաշնակիցներուն, և հեռու չէ ժամանակը, երբ անիրաւ կարգերը պիտի խորտակուին շառաչով երկու անիրաւ երկիրներու մէջ ալ։ Անոնց քայքայումին զուգահեռ կը բարձրանայ հայ զանգուածներու նկուն տրամադրութիւնը և կաշխուժանայ պայքարը հին խրամատներու մէջ։ Մեզ հետ է մարդկութեան առողջ բնազդը, իրաւունքն ու արդարութիւնը. մեր թշնամին բարոյական յենարան չունի իր անօրինակ բռնութեան համար։ Սուինն ու կացինը, որոնց յենուած են անոնք, ինքնին դատապարտութիւն են անոնց համար։ Ճշմարտապէս կիշխէ ան, որ կիշխէ ժողովուրդի սիրտերուն։ Այդ սիրտերը մեզ հետ են նոյնիսկ մեր թշնամիի խոստովանութեամբ։ Այդ սիրտերն անսպառ կորով և ոգեւորութիւն կը ներշնչեն բոլոր պայքարողներուն՝ բռնութեան դէմ խիզախելու աւելի վճռական և յանդուգն։

Մեր վերջին խօսքը մենք կուղղենք հայ նորահաս սերունդին։ Անցնող սերունդը ազատութեան տենչով խանդավառ՝ կարողացաւ

digitised by A.R.A.R.@

*համախմբել բովանդակ հայութեան ուժերը և պատեհութիւնը օգտագործելով՝ պատմական փոշիներէն վերստեղծել ազատ Հայաստան: Ոչ թէ դարեր, այլ տարիներ առաջ կորսնցուցած ազատութիւնն է, որ կը վիճակւի վերագրաւել և ստեղծել Միացեալ և Անկախ Հայաստան: Պէ՛տք է գիտակցիլ այն բախտորոշ դերը, որ պատմութեան բերումով վիճակւած է մեզ: Պէ՛տք է ներքուստ և վճռապէս զինուորագրւիլ Նոր Հայաստանին: Մարտական Հ. Յ. Դաշնակցութիւնն է, որ այս յորդորն ու կոչը կուղղէ մեզ: Անոր հիմունքները շաղախւած են հազարաւոր մարտիկներու արիւնով, որ ընկած են ազատութեան ճամբին: Բայց քանի դեռ չկայ Միացեալ և Ազատ Հայաստանը, նորահաս սերունդներու պատմական դերը չէ՛ վերջացած:*

*Հաւաքւեցէ՛ք, ուրեմն, Հայրենիքի դրօշին տակ, Հ. Յ. Դաշնակցութեան փորձառու ղեկավարութեամբ վերագրաւելու կորած ազատութիւնը.*

*Կեցցէ՛ տոկուն և հերոսական հայ ժողովուրդը,*

*Կեցցէ՛ Միացեալ և Անկախ Հայաստանը:*

2 Մայիս, 1929.

# Հ. Յ. Դ. ԺԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

*Հ. Յ. Դաշնակցութեան 11րդ Ընդհանուր Ժողովը բացւեց մարտ 17-ին արտասահմանի և Երկրի պատգամաւորների մասնակցութեամբ: Հ. Յ. Դ. Բիւրոյի ներկայացուցիչ ընկերը բացման ճառի մէջ, ի՛ միջի այլոց, ասաց հետեւեալը.*

*«Ընդհանուր Ժողովները մեզ մօտ այն չեն, ինչ որ ազատ երկրների քաղաքական կուսակցութիւնների մէջ: Այնտեղ ընդհանուր ժողովները գումարւում են ամէն տարի, մի երկրի սահմաններում գործող կազմակերպութիւններից և քննում կարճ ժամանակամիջոցի հարցեր, որոշումներ տալիս կարճ ժամանակւայ համար: Այլ են մեր ընդհանուր ժողովները: Մեզ մօտ հաւաքւում են 4–5 տարին մէկ անգամ. ժողովին մասնակցում են պատգամաւորներ այլազան երկրներից: Մի տեսակ տիեզերական ժողովներ են մեր Ընդհանուր Ժողովները: Եւ, բնականաբար, մեր աշխատանքներն էլ տեւում են երկար, օրակարգի հարցերը լինում են չափազանց կնճռոտ և դժւար լուծելի: Այդ պատճառով մեզանից պահանջւում է առանձին լուրջ և ուշադիր վերաբերում»:*

*Ապա յիշեց վերջին չորսամեակում Հ. Յ. Դաշնակցութեան տւած զոհերը.*

*«Երբ մեր հայեացքը ուղղում ենք դէպի յետ, մեր տեսողութեան առջև անմիջապէս պատկերանում են դէմքերը մեզանից ընդմիշտ հեռացած ընկերների: 10րդ Ընդհանուր Ժողովից յետոյ, այս չորս տարւայ ընթացքում, մենք ունեցել ենք մի շարք կորուստներ — «խաղաղ ժամանակի» զոհեր: 1925թ. հոկտ. 15-ին, Շաւիլում, վախճանւեց ընկ. Յովս. Արղութեանը՝ Խանասորի Իշխանը: Գրեթէ նոյն ժամանակ, խորհրդային սահմաններում մեռաւ մի հին, երախտաւոր ընկերուհի՝ Նատալիա Մատինեանը: 1926թ. փետր. 9-ին, Թաւրիզում, մեռաւ ընկ. Բենօ Գէժոյեանը, մարտ 10-ին, Ֆրանսայում՝ հին յեղափոխական Քրիս Ֆեներճեանը: Նոյն տարւայ աշնանը եղերական մահով զոհւեց ընկ. Վահ. Վարդապետեանը, Բէյրութում: 1927թ. յուն. 11-ին մեռաւ Տիար Անտոնը՝ Ժընեւի մեր տան արթուն պահակը, փետր. 13-ին Մարսէյլում մեռաւ դր. Քիպրիթչեանը, մարտ 25-ին՝ ռազմիկ Լորտօն, յունիս 15-ին՝ Ցրոնքցի Մուրատը, օգոստ. 30-ին՝ Անդրանիկը, որ թէև հեռացել էր մեզանից, բայց այն, ինչով որ նա Անդրանիկ է, մնում է կապւած Դաշնակցութեան հետ: 1928թ. մարտ 15-ին մի դժբախտ արկածի զոհ գնաց Ե. Ֆրանգեանը: Յիշենք և Տէր-Արսէնի մահը Պարսկաստանում, Գ. Վարշամեանին, որ մեռաւ Թաւրիզում, Գառնիկ Շահրիկեանին՝ Փարիզում: Յիշենք Երկրում մեռածներին — Ծովակին ու Խլերնիկեանին, Գեղամին ու Մելիտոսին: Յիշենք Յով. Բուղաղեանին, որ իր հանգիստը գտաւ Ֆրանսական հողում: Եւ ուրիշներին, որոնց անունը վրիպում է մեր յիշողութիւնից. յիշե՛նք և յարգենք նրանց յիշատակը* (ժողովը լուռ ոտքի է կանգնում):

*«Յետոյ, երբ դարձնում ենք մեր հայեացքը դէպի ողջերը, չենք կարող զսպել հիացումի բուռն զգացումը հանդէպ մեր այն ընկերների, որոնք ահա քանի տարի է բոլշեւիկեան լծի տակ, բանտերում և աքսորավայրերում, գիւղերում և քաղաքներում պահում են բարձր Դաշնակցութեան գաղափարական դրօշը: Հպարտութեամբ կարող ենք պարծենալ մեր այդ ընկերներով: Ուղարկե՛նք նրանց մեր եղբայրական ջերմ ողջոյնները:*

*Մենք անսահման հպարտ ենք և մեր ժողովրդով, չարքաշ— պողպատի պէս ամուր, աշխատասէր և նա-*

digitised by A.R.A.R.@

մուսի տէր հայ ժողովրդով, որ հարստահարուած իր հայրենիքում, ցան ու ցիր ամբողջ երկրագնդի երեսին, շարունակում է յուսալ ու հաւատալ և աննկուն կամքով հետևել քաղաքակրթութեան և ստեղծագործութեան: Մենք գիտենք — նրա յոյսերը պէ՛տք է արդարանան»:

Եւ յետոյ, մի յետադարձ ակնարկ նետելով «10րդ Ընդհանուր Ժողովի նախօրեակի և այսօրւայ քաղաքական երևոյթների վրա», իր ճառը վերջացրեց հետևեալ խօսքերով.

«Մեր երիտասարդութեան մէջ նկատւում է տրամադրութիւնների բարձրացում, գործօնութիւն: Կազմակերպութիւնը կենսունակ է և ամուր ու նոր ուժերի զգալի հոսանք է նկատւում դէպի կուսակցութիւնը: Կայ միայն շեշտուած դժգոհութիւն կրաւորականութիւնից: Գործ են պահանջում, յեղափոխական կենդանի աշխատանք: Մի աւելորդ ապացոյց, որ հայ ժողովուրդը չի ընկճուել ապրած ահաւոր փորձութիւններից. չէ՞ որ Հ. Յ. Դաշնակցութիւնը հայ ժողովրդի կազմակերպուած ու գործօն կամքի արտայայտութիւնն է:

«Ահա՛, ընկերներ, ուր ենք մենք այսօր: Զինուած անցեալի փորձով, ամրապինդ մեր ժողովրդի վստահութեամբ, նահատակ ընկերների կենդանի օրինակը մեր աչքի առջեւ, համախմբուած Հ. Յ. Դաշնակցութեան նուիրական դրօշի շուրջ, լիքը փոխադարձ յարգանքով ու հաւատով դէպի յաղթական ապագան՝ անցնե՛նք մեր աշխատանքներին»:

Եւ սկսուեց եռուն աշխատանքը գաղափարական համերաշխութեան և ընկերական ջերմ մթնոլորտի մէջ: Ժողովը մանրամասնօրէն լսեց Բիւրոյի և շրջանների զեկուցումները և գոհունակութեամբ արձանագրեց, որ, սակաւ բացառութեամբ, ամէն տեղ նկատւում է ներքին եռուն աշխատանք և հասարակութեան կողմից կենդանի հետաքրքրութիւն դէպի մեր կուսակցութիւնը: Մասնաւորապէս բուռն է երիտասարդ սերնդի ձգտումը դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը, մի երևոյթ, որ 10րդ Ընդհանուր Ժողովում էլ նկատուել էր և որը այնուհետև աւելի լայն ծաւալ ու թափ է ստացել: Ժողովը զբաղուեց նաև այն մի շարք թերութիւններով, որոնք նկատուել էին այս կամ այն շրջանի կազմակերպութեան կամ ընդհանուր կուսակցական գործունէութեան մէջ: Տրուած որոշումները միանգամայն բաւարար եղան վերացնելու համար այդ թերութիւնները:

Ընդհանուր Ժողովում առանձնապէս ուշադիր և մանրակրկիտ քննութեան առարկայ դարձան օրակարգի քաղաքական մասերը — ներքին և արտաքին քաղաքականութեան հարցերը: 10րդ Ընդհանուր Ժողովից յետոյ մի շարք կարևոր հարցեր էին ծագել և հներն էլ ստացել էին որոշ ձևակերպում, թէ դրսի և թէ ներքին-ազգային կեանքը առաջադրել էր անյետաձգելի լուծում պահանջող մէկից աւելի խնդիրներ. Ընդհանուր Ժողովը բոլորին էլ տուեց համապատասխան լուծում և գծեց այն քաղաքական ուղին, որով այսուհետև ընթանալու է մեր կուսակցութիւնը:

Յստակ ու որոշ լուծում ստացան և՛ ազգային ու կազմակերպական խնդիրները, որոնց լուսաբանութեանը «Դրօշակ»-ը հետզհետէ կը նուիրէ յատուկ յօդուածներ:

ԺԱ Ընդհանուր Ժողովը եկաւ բաւարարելու կեանքի հասունացրած պահանջներին: Նա նոր թափ ու ոգեւորութեան նոր աղբիւրներ բերեց մեր ընկերական շարքերին: Բայց նրա դերը սահմանափակուած չէ միայն կուսակցութեան շրջանակով: Փորձով գիտենք, որ Դաշնակցութիւնը, իբր մեծագոյն գործօնը այսօրւայ հայ կեանքի, հզօր ազդեցութիւն ունի և իրենից դուրս՝ և՛ բարեկամների, և՛ հակառակորդների վրա: Այդ գիտակցութեամբ ահա, մենք պէտք է շարունակենք մեր աշխատանքը՝ կատարելու համար այն պատմական դերը, որ կեանքը դրել է մեր վզին: Որովհետև աշխատել Դաշնակցութեան մէջ՝ նշանակում է աշխատել հայ ժողովրդի համար:

# ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

## Հ.Յ.Դ. XI ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ

Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովներից քչերն են կուսակցութեան ներքին, կազմակերպական խնդիրներին վերաբերուել այն ուշադրութեամբ, ինչ որ մենք տեսանք 11րդ Ընդհանուր Ժողովում: Վերջինիս հետ, այս տեսակէտից, կարող են որոշ չափով համեմատուել 4րդ (Վիէննայի) և 9րդ (Երևանի) Ընդհանուր Ժողովները. մնացած բոլորից նա անպայմանօրէն գերազանցում է կազմակերպական աշխատանքների որակով և քանակով:

Սրա պատճառները երկուս են. առաջին՝ որ կուսակցութիւնը պահ մի զերծ լինելով այն արիւնահեղ պայքարներից, որոնք առաջները ամբողջապէս կլանում էին նրա ժամանակն ու եռանդը, վերջին տարիներս աւելի՛ միջոց ունէր իր ներքին հարցերով զբաղուելու, քան երբ և իցէ, և երկրորդ՝ որ Հայաստանի Հանրապետութեան տապալումից ի վեր Դաշնակցութեան գործունէութեան համար ստեղծուած նոր պայմաններն այլ ևս անյետաձգելի էին դարձնում կուսակցական մեքենան կատարելագործելու և կազմակերպական աշխատանքները նոր պայմաններին յարմարեցնելու պահանջները:

Դժբախտաբար, շրջապատի պայմանները չեն թոյլատրում Ընդհանուր Ժողովի որոշումները ամբողջութեամբ հրապարակ հանել: Սակայն, յետագայ գլուխներում ընթերցողը կը գտնի իմաստն ու ոգին այն որոշումների, որոնց մէջ խտացուել են 11րդ Ընդհանուր

digitised by A.R.A.R.@

ժողովի տրամադրութիւնները Դաշնակցութեան ներքին կազմակերպական աշխատանքների խնդրում։

I

Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի վերաքննութիւնը.

11րդ Ընդհանուր Ժողովի կազմակերպական զբաղումների մէջ առաջին տեղը տրուած էր Դաշնակցութեան ծրագրի վերամշակութեան խնդրին։

Համաշխարհային պատերազմին յաջորդած յեղափոխութիւններն ու ընկերային շարժումները վերին աստիճանի պատասխանատու դրութիւն ստեղծեցին ընկերվարական կուսակցութիւնների համար դրեթէ բոլոր քաղաքակիրթ երկիրներում։ Նրանցից շատերին վիճակուեց երկրի իշխանութեան ղեկին տիրանալ, շատերի համար կարճ ժամանակի խնդիր դարձաւ իշխանութեան հասնելը, իսկ մնացածները, կարելի է ասել առանց բացառութեան, խիստ մեծ կշիռ ստացան իրենց երկրի քաղաքական կեանքի մէջ։

Ընկերվարական կուսակցութիւնների այս հուժկու վերելքը միանգամից մղեց ընկերվարութեան իրականացման ուղիների և միջոցների հարցերը դէպի առաջին գծերը։ Ի՞նչ պէտք է անէ ընկերվարական կուսակցութիւնը քաղաքական իշխանութիւնն իր ձեռքն առնելուց յետոյ. արդեօք նա պէտք է փշրէ՞ ազնուապետական մնացորդների և բուրժուազիայի ստեղծած պետական ապարատը, թէ՞ կարող է օգտագործել այն իր նպատակների համար. արդեօք նա պէտք է միանգամից խորտակի՞ դրամատիրական տնտեսակարգը՝ թէ՞ բարեշրջումի ուղին պէտք է բռնէ այդ տնտեսակարգը աստիճանաբար ընկերվարական սկզբունքների համաձայն փոխակերպելու համար։ Այս գործնական և կենսական հարցերին համաշխարհային պատերազմից առաջ կազմուած ընկերվարական ծրագրները կա՛մ բնաւ պատասխան չէին տալիս և կա՛մ շատ անորոշ պատասխան էին տալիս։

Պակասաւոր էր՝ այդ ծրագրների մէջ և ընկերվարութեան տեսական հիմնաւորումը։ Դեռ համաշխարհային պատերազմից առաջ, ընկերվարութեան տեսաբանները մատնանշել էին, որ տնտեսական և ընկերային զարգացման տեսութիւններից շատերը, որոնք ժամանակակից ընկերվարութեան հիմքն են կազմում, չեն համապատասխանում իրականութեան, կամ, առնուազն, շատ միակողմանի կերպով են անդրադարձնում իրենց մէջ այդ իրականութիւնը. Համաշխարհային պատերազմի առաջ բերած տնտեսական և ընկերային շարժումներն աւելի՛ ևս սնունդ տւին այսօրինակ քննադատութիւններին։ Սրանց ազդեցութեամբ գրեթէ բոլոր ընկերվարական կուսակցութիւնների մէջ նոր հայեացքներ էին առաջացել տնտեսութեան կենտրոնացման, դրամագլխի կուտակման, դասակարգային շերտաւորման հանրային կեանքի միջազգայնացման և այլ բազմաթիւ հարցերի շուրջը — հայեացքներ, որոնք խիստ ակնբախ հակասութեան մէջ էին գտնւում գոյութիւն ունեցած պաշտօնական ծրագրների հետ։

Այս ամէնը աչքի առաջ ունենալով՝ գրեթէ բոլոր ընկերվարական կուսակցութիւնները, համաշխարհային պատերազմից անմիջապէս յետոյ, օրակարգի խնդիր դարձրին իրենց ծրագրի վերաքննութիւնն ու վերամշակումը։ Դաշնակցութեան 9րդ Ընդհանուր Ժողովը ևս զբաղուեց այս հարցով և նւազագոյն ծրագրի մէջ անյետաձգելի փոփոխութիւնները կատարելուց յետոյ՝ հրահանգեց Բիւրոյին, որ վերամշակուած ու ամբողջական ծրագրի մի նախագիծ ներկայացնի յետագայ Ընդհանուր Ժողովի քննութեանը։

Այս աշխատանքը կարելի չեղաւ կատարել մինչև 11րդ Ընդհանուր Ժողովը։ Պատճառներից գլխաւորն այն է, որ խորհրդային կարգերը, խաթարելով մեր ժողովրդի տնտեսական և ընկերային զարգացման բնական ընթացքը և արհեստական դրութիւններ ստեղծելով՝ Հայաստանում՝ խիստ դժուարացնում են ծրագրային ձևակերպութիւնը այն հարցերի, որոնք անհրաժեշտաբար պէտք է ցցւեն ամէն մի ընկերվարական կուսակցութեան առաջ խորհրդային կարգերի փլուզումից յետոյ։ Անգամ այնպիսի մի խիստ կարևոր հարց, որպիսին է հողային հարցը, լուրջ քննութեան է կարօտում նոր ստեղծուած պայմանների հաշւառութեամբ, թէև այդ հարցի մասին մեր կուսակցութիւնը միշտ յստակ տեսակէտ է ունեցել։ Սրա վրա պէտք է աւելացնել նաև, որ բոլշևիկեան բռնապետութեան տակ գտնւող մեր ընկերները հնարաւորութիւն չունէին մասնակցելու ծրագրի վերամշակութեանը ինչպէս հարկն է, իսկ արտասահմանում գտնւած ձեռնհաս ընկերներն էլ ցրւած լինելով հեռաւոր տարածութիւնների վրա, տեխնիքապէս չէին կարողանում հաւաքական աշխատանքի լծւել այս գործի համար։

Նկատի առնելով այս ամէնը՝ Ընդհանուր Ժողովը որոշեց, մինչև վերոյիշեալ աննպաստ պայմանների փոխւելը, յետաձգել ծրագրի վերաքննութիւնը՝ միաժամանակ յանձնարարելով Բիւրոյին շարունակելու դրա համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները։

Այս գործի յետաձգումը առանձին անպատեհութիւններ չէ ստեղծում մեր կուսակցութեան համար։ Նախ՝ որովհետև, ինչպէս ասացինք, նւազագոյն ծրագրում արդէն կատարուած են (9րդ Ընդհանուր Ժողովի կողմից) այն փոփոխութիւնները, որոնք անհրաժեշտ են Միացեալ և Անկախ Հայաստանի պահանջին — որ ներկայիս մեզ համար ամենաէական պահանջն է — ծրագրային հիմնաւորում տալու համար։ Այնուհետև՝ ընկերվարական քաղաքականութեան հետ կապուած գործնական հարցերից շատերը, որոնք ծրագրային հիմնաւորում են պահանջում, իրերի բերումով առժամապէս յետին գծերի վրա են ընկած։ Եւ, վերջապէս, մեր ծրագրի հիմնական մասը այնքան իրատեսօրէն է կազմւած, որ վերջին տասնամեակի ընկերային յեղաշրջումներից և փորձերից յետոյ ևս մեծ փոփոխութիւնների չէ կարօտում։ Սրանում համոզւելու համար բաւական է աչքի առաջ ունենալ այն անժխտելի փաստը, որ թէ՛ գերմանական, թէ՛ աւստրիական և թէ՛ այլ կուսակցութիւնների ծրագրները, շատ լուրջ փոփոխութիւնների ենթարկւելով հանդերձ, այսօր աւելի՛ մօտ են կանգնած մեր ծրագրին, քան երբէք…

Դաշնակցութիւնը, հակառակ ուրիշ շատ կուսակցութիւնների սովորութեան, միշտ վերին աստիճանի շրջահայեցողութեամբ է վերաբերւել իր ծրագրի վե-

digitised by A.R.A.R.@

րաքննութեան հարցին: 1892-ի ծրագրով մօտ 15 տարի գործելուց յետոյ միայն, նա Վիեննայի Ընդհանուր Ժողովում (1907) փոփոխութեան ենթարկեց այդ ծրագիրը և փոփոխութիւնը կատարեց այնպիսի մի ձևով, որ կուսակցութիւնը այսօր ևս, առանց մեծ անպատեհութիւնների, կարող է գործել իր այժմեան ծրագրով, թէև մեր շուրջը ամբողջ աշխարհներ են փլել:

Ծրագրի խնդրում շրջահայեաց լինելու այս գեղեցիկ աւանդութիւնը պարտադրում է մեզ մեծ զգուշութեամբ մօտենալու նրա վերաքննութեան հարցին: Վնաս չունի, որ այս վերաքննութիւնը մի քանի տարի ևս յետաձգուի· կարևորն այն է, որ վերամշակելիք ծրագիրը զերծ լինի պատահական տրամադրութիւններից և ընդգրկէ հայ քաղաքական, ընկերային, տնտեսական, հանրային և մշակութային հարցերը ամենայն լրջութեամբ և խորութեամբ: Սրա համար մի քանի տարուայ համբերութիւնն ու ժամանակամիջոցը երկար չպէտք է նկատել:

## II

### Հ· Յ· Դ· խորհրդի հարցը

Իր գործունէութեան պայմանների դժուարութեամբ կարելի է ասել ոչ մի կուսակցութիւն չի կարող համեմատուել Դաշնակցութեան հետ: Հարկաւ, ուրիշ կուսակցութիւններ էլ զգացել են Աբդիւլ Համիդի բռունցքը, ցարական ռեժիմի դաժանութիւնը և խորհրդային բաշիբոզուկութեան վայրագութիւնները· բայց նրանցից ոչ մէկը չէ ունեցել Հ·Յ·Դաշնակցութեան տարածուն վիճակը՝ կապի պահպանութեան բազմապիսի դժուարութիւններով՝ ինչպէս և չէ ունեցել Դաշնակցութեան պատրաստակամութիւնը՝ անվերապահօրէն զոհաբերելու առաջադրուած նպատակների համար — մի պատրաստակամութիւն, որ կատաղեցնում է նրա բոլոր թշնամիներին և բացառիկ հալածանքների դրդում մեր կուսակցութեան դէմ:

Այս կրկնակի դժուարութիւնները յաճախ արգելք են հանդիսացել, որ Հ· Յ· Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովները որոշած ժամանակին գումարուեն: 11րդ Ընդհանուր Ժողովն ևս նոյն պատճառներով սահմանուած ժամանակից երկու տարի ուշ գումարուեց:

Աւելորդ է ասել, թէ քաղաքական և կազմակերպական ընդհանուր հարցերի համար վերին իրաւասութիւն ունեցող գերագոյն ժողովի գումարման անորոշութիւնը ի՜նչ անպատեհութիւն է ներկայացնում մի կուսակցութեան համար և այն էլ Հ· Յ· Դաշնակցութեան պէս մի կուսակցութեան, որ, հայ ժողովրդի համար ստեղծուած աննորմալ կացութեան հետևանքով, միշտ կարող է զրկուել ծանր որոշումներ կայացնելու անհրաժեշտութեան առաջ: Չէ՞ որ ոչ մի Ընդհանուր Ժողով չի կարող գուշակել, թէ երեք-չորս տարի յետոյ ի՛նչ նոր դրութիւններ կը ստեղծուեն, որպէսզի ըստ այնմ գործունէութեան հրահանգ տայ իր գործադիր մարմնին· չէ՞ որ այդքան տարիների ընթացքում իր գործադիր մարմինն էլ կարող է պատահականութիւնների ենթարկուել...

Այս մտահոգութիւններից մղուած՝ մեր մարմիններից և ընկերներից ոմանք հարց էին դրել առաջ բերելու Դաշնակցութեան կամքը ներկայացնող մի մարմին, Հ· Յ· Դաշնակցութեան Խորհուրդ անունով, որի դերը պէտք է լինէր Ընդհանուր Ժողովի անունից գործունէութեան հրահանգ տալ Բիւրոյին այն հարցերում, որոնք Ընդհանուր Ժողովի իրաւասութեանն են վերաբերում: Սահմանափակ թուով անդամներ ունեցող և դիւրաշարժ Խորհուրդը, հարց դնողների կարծիքով, կը թեթևացնէր Բիւրոյի գործը, երբ վերջինս Ընդհ· Ժողովի որոշումներից շեղուելու կամ ծանր պատասխանատուութիւն հրաւիրող որոշում կայացնելու հարկադրանքի առաջ զգար ինքզինքը:

Ընդհանուր Ժողովը հանգամանօրէն քննեց այս հարցը, բայց նպատակայարմար չնկատեց նրան դրական լուծում տալ: Ընդհանուր Ժողովը չէր անգիտանում, ի հարկէ, լրջութիւնը այն պատճառաբանութեան, որ ներկայացնում էին Հ· Յ· Դաշնակցութեան Խորհրդի կողմնակիցները· բայց նա հաշուի էր առնում և այն ընկերների կարծիքը, որոնք պնդում էին, թէ Խորհրդի գոյութիւնը կը թուլացնի Բիւրոյի դիրքը կուսակցութեան մէջ, կը կաշկանդի նրա նախաձեռնութեան ոգին և կը թուլացնի վճռական վայրկեաններին պատասխանատուութիւն ստանձնելու կամքը:

Մերժելով հանդերձ Հ· Յ· Դ· Խորհրդի առաջարկը՝ Ընդհանուր Ժողովը աւելորդ չնկատեց մի քանի թելադրութիւններ անել Բիւրոյին, որոնցով սա կարող է ղեկավարուել այն պարագաներում, որոնց համար Խորհրդի պահանջն էր առաջադրուում ոմանց կողմից:

Ա· ՋԱՄԱԼԵԱՆ

(Կը շարունակուի)

digitised by A.R.A.R.@

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
## Հ. Յ. Դ. XI ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ

Քաղաքական տեսակէտով, այն պայմանները, որոնց մէջ գումարուեց Հ. Յ. Դաշնակցութեան 11րդ Ընդհանուր Ժողովը, 10րդ Ընդհանուր Ժողովի համեմատութեամբ, անկասկած, աւելի պարզ էին ու որոշ. Թէև մի կողմից ո՛չ հայ իրականութեան մէջ և ո՛չ էլ միջազգային կեանքում առաջ չէին եկել քաղաքական կացութիւնը արմատապէս փոխող դրութիւններ, միւս կողմից երկու բնագաւառներում էլ, բայց, մանաւանդ, մեծ պետութիւնների փոխյարաբերութեանց մէջ տեղի էին ունեցել դէպքեր, որոնք բաց էին անում ընդարձակ քաղաքական հեռանկարներ և թոյլ էին տալիս անելու գործնական որոշ եզրակացութիւններ: 11րդ Ընդհանուր Ժողովի նախօրեակին քաղաքական հորիզոնը անհամեմատ աւելի լայն էր, քան չորս տարի առաջ:

Ամենից առաջ իրականացել էր 10րդ Ընդհանուր Ժողովի հիմնական նախատեսութիւնը՝ միջազգային կեանքի կայունացումն ու խաղաղութեան ամրապնդումը: Մինչ բոլշևիկները պնդում էին և այսօր էլ կրկնում են անընդհատ, թէ դրամատիրական երկրները շարունակում են զարգանալ ներքին և արտաքին բախումների ուղղութեամբ և թէ մօտ է պատերազմական նոր բռնկումների շրջանը, մեր 10րդ Ընդհանուր Ժողովը, շատ աւելի իրատես ու կեանքին հարազատ, արձանագրել էր, որ, ընդհակառակը, բացի մի քանի սահմանափակ շրջաններից (Թիւրքիա, Խորհրդային Միութիւն) համաշխարհային խաղաղութիւնը աւելի և աւելի ամրանում է և միջազգային փլուզումների մօտաւոր յոյսը դառնում է անիրական:

Կեանքը ըստ ամենայնի արդարացրեց այս նախատեսութիւնը: Լոկարնօն ու Գերմանիայի մուտքը Ազգերի Լիգան, Ընկերվարական ու Արհեստակցական Միջազգայինների ձեռնարկները, պարտադիր իրաւարարութեան մի շարք դաշինքներ, իտալեթիւրքական դաշինքը, համանման դաշինքներ Թիւրքիայի ու Պարսկաստանի, Պարսկաստանի ու Խորհրդ. Միութեան, Իտալիայի և Յունաստանի և ուրիշ երկրների միջև, վերջապէս, Դաուսի ծրագրի վերաքննութեան և հատուցումների խնդրի քաղաքական մասի հաշուեյարդարի ճիգերը—այս ամենը մի կողմից յատկանշում է մարդկութեան յամառ ձգտումը խաղաղութեան ապահովութեան, միւս կողմից արդէն իսկ ներկայացնում է որոշ գործնական երաշխիք այդ ուղղութեամբ:

Բոլշևիկները չեն ուզում հաշուի առնել այս փաստերը, աւելի ճիշտ, չեն ուզում հաշտուել նրանց հետ, որովհետև խորհրդային աշխարհը տակաւին դուրս չէ եկած պատերազմական մթնոլորտից. նա դեռ ապրում է պաշարուած վիճակի մէջ, շրջապատուած թշնամիներով: Նրա ներքին պայմանները ոչնչով չեն տարբերւում պատերազմական դրութիւնից: Պատերազմը բոլշևիկների համար ո՛չ միայն հոգեբանական հարց է, այլ և գործնական անհրաժեշտութիւն: Որովհետև նրանցից ոչ ոք լրջօրէն չի հաւատում «առանձնացած մի երկրում սոցիալիզմ կառուցելու» հնարաւորութեանը. «համաշխարհային յեղափոխութիւնը», այսինքն՝ միջազգային սուր բախումներն ու պատերազմները շարունակում են մնալ նրանց փրկութեան միակ խարիսխը, յաղթանակի վերջնական երաշխիքը: Աշխարհի տնտեսական ու քաղաքական կայունացումը մահացու վտանգ է բոլշևիկների համար:

Կեանքի փորձը հաստատեց այս պարագան. 4–5 տարի առաջ մեծ պետութիւնները իրար յետևից իրաւական ճանաչում շնորհեցին խորհրդային իշխանութեան, և բոլշևիկները դուրս եկան համաշխարհային կեանքի ասպարէզ ո՛չ միայն իբրև քարոզիչներ ու յեղափոխութեան հրձիգներ, այլ և որպէս դիւանագէտներ ու տնտեսավարներ, որպէս գործի մարդիկ: «Բուրժուական շրջապատը» շատ շուտով սկսեց իր դրոշմը դնել Մոսկուայի քաղաքականութեան ու գործիչների վրա: Եւ իսկոյն ծայր տուին ներքին սուր հակամարտութիւններ ու պառակտումներ չափաւորների և ծայրայեղների միջև: Խորհրդային իշխանութիւնը կանգնեց մի վերին աստիճանի անախորժ երկընտրանքի առջև. կամ խորացնել դիւանագիտական յարաբերութիւնները բուրժուական երկրների հետ և արագացնել նահանջն ու ներքին քայքայումը, կամ վերադառնալ «յեղափոխական աւանդութիւններին» և զրկուել դրամատիրական աշխարհի նիւթական շնորհքներից: Յաղթեց, ինչպէս յայտնի է, վերջին տեսակէտը, և հետևանքները չուշացան. յարաբերութիւնների խզում և խայտառակ արտաքսում Անգլիայից, փաստական խզում Ֆրանսայի հետ, պաղութիւն Մոսկուայի ու Բերլինի և Մոսկուայի ու Հռովմի միջև, վերապահութիւն Ամերիկայի կողմից; Արևմուտքի բոլոր երկրներում և ամէն ճակատի վրա՝ պարտութիւն պարտութեան յետևից:

Նոյն անյաջողութիւնները և Արևելքում: Ամէն կողմ՝ հիասթափութիւն: Չինական ճակատը ջախջախուեց ամենաանփառունակ կերպով: Աւղանիստանը, Ամանուլլահի փախուստով, դուրս եկաւ խորհրդային ազդեցութեան շրջանակից: Բոլշևիկեան ռազմավարու-

digitised by A.R.A.R.@

թիւնը ուրախանալու առիթներ չունի ո՛չ Հնդկաստանում, ո՛չ ուրիշ «ճնշուած ու գաղութային ժողովուրդների» մէջ: Հնդիկ յեղափոխականների «աշխուժացումը» վերջերս, անշուշտ, նպատակ ունի միայն ազդել աֆղանական դէպքերի վրա և ինքնուրոյն արժէք չի կարող ներկայացնել:

Շատ փայլուն չեն խորհրդային «նուաճումները» և Թիւրքիայում, ուր վերջին չորս–հինգ տարիների ընթացքում նկատւում է ուժեղ ձգտում ձերբազատուելու Մոսկւայի խնամակալութիւնից և աւելի սերտ յարաբերութիւնների մէջ մտնելու արևմտեան պետութիւնների հետ:

Արտաքին անյաջողութիւններն, ի հարկէ, մեծապէս անդրադառնում են և Խորհրդ. Միութեան ներքին կեանքում, ինչպէս և արտասահմանի կոմունիստական շարժման վրա: Դուրսն ու ներսը բոլշևիզմը պառակտուած ու կազմալուծուող բանակ է. արտասահմանում ամէն տեղ կոմունիստական շարժումը տեղատուութիւն է ապրում, նուազում է քանակով և աւելի ու աւելի կորցնում իր քաղաքական կշիռը: Թրոցկու երևումը Պոլսում աւելի ևս սաստկացրեց այս երևոյթը. ներքին թշնամութիւններն ու կռիւները նոր սնունդ ստացան:

Բայց կոմունիզմի և խորհրդային իշխանութեան այլասերումի և փտութեան իրական ազդակները հասունանում են այնտեղ, Խորհրդային Միութեան մէջ, Կոմկուսի ծոցում: Մի կողմից անհաշիւ և անյաղթելի դժւարութիւններ տնտեսական ու ելևմտական ասպարէզներում, որոնց հետևանքով արագ աճում են սովը, աղքատութիւնն ու թշւառութիւնը, միւս կողմից՝ թայֆայական կռիւների արտակարգ լարում տիրող կուսակցութեան շարքերում: Ստեղծուել է մի կախարդական շրջանակ. գիջումներն ու տնտեսական որոշ ազատութիւնները տանում են դէպի դիկտատորութեան տկարացումն ու Կոմկուսի տապալման վտանգը. Կոմկուսի դիկտատորութեան սաստկացման հետևանքը լինում է երկրի արտադրական ուժերի անկումն ու ժողովուրդի թշւառութեան աճումը: Երկու դէպքում էլ՝ ներքին դժգոհութիւններ, մոլեգին վէճ ու կռիւ: Պառակտումն ու ներկուսակցական պայքարը ահա քանի տարի է Կոմկուսի ծոցում դարձել են կենցաղային երևոյթ. «թեքում»-ները աճում են սունկի պէս: Զանազան գաղափարական ցուցանակների տակ «կուսապարատի» ղեկավարները վարում են կատաղի աթոռակռիւ. ո՞ւմ ձեռքին է գտնուելու իշխանութեան սանձը: Այս ակնոցով պէտք է դիտել «ձախ» Թրոցկու ըմբոստութիւնը Ստալինի դէմ. նոյն բովանդակութիւնն ունին և «աջ» Ռիկովի, Բուխարինի, Տոմսկու և Կալինինի «ելոյթները»: Այդ բոլոր աղմուկներն ու իրերակերութիւնը բնական արդիւնքն է դիկտատորութեան. քանի շարունակւում է Կոմկուսի միահեծան ինքնիշխանութիւնը, «թեքում»-ները անխուսափելի են, աւելի ևս անխուսափելի կը լինի և իշխանութեան կռիւը: Հետևաբար, կը պակասի և Կոմկուսի իրական ոյժը թէ՛ արտաքին աշխարհում և թէ՛ խորհրդային սահմաններից ներս:

Վերջին արտայայտութիւնը Կոմկուսի ներքին պայքարի՝ խորհրդային տնտեսութեան «հնգամեայ հեռանկարային պլանն» է, որ հաստատուեց կուսակցութեան և խորհուրդների վերջին համագումարներում՝ ապահովելով մի նոր յաղթանակ Ստալինի համար: Այդ «պլանը» զուտ քաղաքական երևոյթ է և նպատակ ունի, նոր ձևերով, խորհրդային տնտեսութիւնը տանել դէպի քաոսական թւականները՝ «ռազմական կոմունիզմի» օրերը: Նրա հետևողական կիրառումը կեանքում անխուսափելիօրէն առաջ պիտի բերէ դասակարգային հակամարտութիւնների նոր սրում, նոր բախումներ, հետևաբար և նոր բարդութիւններ ներքին քաղաքականութեան ճակատում: Անշուշտ, իրաւացի է Բուխարինը, երբ Ստալինի այդ «պլան»-ը անւանում է քաղաքացիական նոր կռիւների և գիւղացիական ապստամբութիւնների նոր աղբիւր: Բայց, իր տեսակէտից, իրաւացի է և Ստալինը, որովհետև «նէպի» ու «նոր-նէպի» յետագայ զարգացումը անհրաժեշտօրէն պիտի տանէր դէպի դիկտատորութեան սահմանափակում և, ուրեմն, խորհրդ. իշխանութեան գոյութեան վտանգում: «Վերադարձ դէպի նախկին դիրքերը» — այս է Ստալինի «պլանի» իմաստը, բայց կարելի՞ է 10 տարով յետ դառնալ այն ժամանակ, երբ ամբողջ աշխարհ անզուսպ թափով առաջ է շարժւում...

Խորհրդային իշխանութեան և Կոմկուսի ներսը զարգացող դէպքերը բնորոշ անդրադարձում են ունենում և Խորհրդ. Միութեան սահմաններում ապրող ոչ-ռուս ազգութիւնների մէջ: Կենտրոնի «տնտեսական» վէճերն ու կռիւները այստեղ ստանում են գործնական ազգային բնաւորութիւն: Բոլշևիզմը գաղափարականօրէն քակեց ազգային բոլոր կապանքները» հռչակելով «ազգային ինքնորոշման» բացարձակ իրաւունքը և իր պետական կեանքը ջանալով կառուցանել ազգային հիմքի վրա: Այդ քաղաքականութիւնը տուել է արդէն իր պտուղները, որից սկսել են սարսափել Մոսկւայում: Ուկրայինա, Կովկաս, Թուրքեստան արդէն ատամներ են ցոյց տալիս կենտրոնին: Կոմկուսի «ձախ» թեքումի գլխաւոր արտայայտութիւններից մէկն էլ ազգային-անջատական ձգտումն է. Թրոցկու կուսակիցների շարքերում ահագին թիւ են կազմում «ազգային» կոմունիստները — տարրեր, որոնք պաշտպանում են իրենց երկրի իրաւունքները կենտրոնի «ոտնձգութիւնների» և «աշխարհակալութեան» դէմ:

Այս ասպարէզում հետզհետէ հասունանում է և մի ուրիշ երևոյթ. «ազգայնական» կոմունիստները փորձեր են անում հասկացողութեան լեզու գտնելու ոչ-կոմունիստ ազգային խաւերի հետ: Այս ուղղութեամբ, առանձնապէս առաջ են գնում ուկրայինական և վրացի կոմունիստները, որոնց մէջ ազգային շեշտը խիստ ուժեղ է և որոնք ձգտում են դառնալ իրենց ազգային կեանքի օրգանական մէկ մասնիկը: Այդ երևոյթը հասկանալի անհանգստութիւն է պատճառում Մոսկւային, որովհետև նրա բնական զարգացումը անխուսափելի կերպով կարող է տանել դէպի «մենշևիզմ» ու «դաշնակիզմ»: Զարմանալի չէ բնաւ այն մոլեգնութիւնը, որով Կոմկուսը կռւում է ազգային գունաւորում ստացող ներքին ընդդիմադիրների դէմ. Թրոցկիզմը բոլշևիկների աչքին «մենշևիզմին» ու «դաշնակիզմին» հաւասար, միևնոյն վերաբերումի արժանի թշնամի է: Այդ պատճառով Ռուսաստանի ու Սիբիրի աքսորավայրերն ու բանտերը այժմ լեցուն են ո՛չ միայն էսէրներով,

digitised by A.R.A.R.@

մենշեւիկներով ու դաշնակցականներով, այլեւ Թրոցկու կուսակիցներով: Եթէ ոչ դուրսը, բանտերում ստեղծւում է «ճակատի միութիւն»:

Կոմկուսի ներքին պառակտումը, բնականաբար, ուժգնօրէն անդրադառնում է և խորհրդային իշխանութեան միջազգային կշիռի վրա: Այդ բանը առանձնապէս նկատւում է Թիւրքիայի օրինակի վրա. կոմունիստական բոլոր շարժումները Մուսթաֆա Քեմալի տիրապետութեան սահմաններում ճնշւում են ամենադաժան միջոցներով, և «դաշնակից» Մոսկւան ոչինչ չի կարողանում ասել, Աւելին դեռ. Թիւրքիան, ինչպէս յիշեցինք, զգուշաւոր, բայց հետևողական քայլերով աշխատում է մօտենալ «դրամատիրական» աշխարհին և, առանց խզելու բարեկամական կապերը Մոսկւայի հետ, ընդհակառակը, օգտագործելով խորհուրդների բոլոր առաւելութիւնները՝ ձգտում է Արևմուտքի միջոցով ապահովել իր երկրի անձեռնմխելիութիւնը «հիւսիսային վտանգից»:

Թիւրքիան վերջին չորս–հինգ տարիների ընթացքում մեծ ճիգ թափեց կազմակերպելու և բարեկարգելու համար նոր պետութիւնը: Արտաքին քաղաքականութեան տեսակէտով նա ունեցաւ մի շարք ակներև յաջողութիւններ, որոնք մի առ ժամանակ երաշխաւորում են նրա սահմանների անդորրութիւնը: Ներքին կեանքում էլ կան արձանագրելիք մի շարք աչքի զարնող փաստեր. ամենից առաջ բարենորոգումների ծաւալն ու խորութիւնը, որոնք ինչ ընթացք և ունենան, հազիւ թէ կորչեն անհետ. խալիֆայութեան վերացում, աշխարհիկ օրէնքների հրատարակութիւն, հարեմի և կանանց քօղի ջնջում, լատինական տառերի ներմուծում, աշարի ջնջում ու հողային օրէնսդրութիւն, երկաթուղային շինարարութիւն, թիւրք ազգային արդիւնաբերութեան, արհեստների և առևտրի ստեղծման ջանքեր — սրանք երևոյթներ են, որոնք չեն կարող հետևանքներ չունենալ՝ անկախ նրանից, թէ ի՞նչ կը լինի քեմալականների ճակատագիրը կամ, վերջ ի վերջոյ, ի՞նչ սահմանների մէջ կամփոփւի նոր Թիւրքիան, որը բռնել է Օսմանեան կայսրութեան տեղը:

Որ Թիւրքիայի սահմանները պէտք է փոխւեն, այդ մեզ համար անվիճելի է. դէպքերն ընթանում են ա՛յդ ուղղութեամբ: Թիւրք ժողովուրդը իր քանակով անկարող է լցնել, մշակել ու սեփականօրէն պահել Թիւրքիայի սահմանների մէջ մտնող բոլոր հողերը: Եթէ Արևմտեան Անատոլիան, ընդհանուր առմամբ, կարող է համարւել թիւրքերով բնակեցւած երկիր, «թիւրքի հայրենիքը», Արևելեան Անատոլիայի անծայրածիր տարածութիւնները կամ ամայի են ու անմշակ (Հայաստանը), կամ՝ կիսաւեր; բռնւած քիւրդերով (Քիւրդիստան): Այստեղ թիւրք չկայ. թիւրքի հայրենիք չեն այս հողերը: Նրանց իրական տէրը՝ հայերն ու քիւրդերը կենդանի են ու չեն ուզում հրաժարւել իրենց իրաւունքներից: Եւ եթէ հայերը, խորհրդային ռեժիմի հետևանքով, չեն կարողանում բաւական ազդու ձայնով ներկայացնել իրենց պահանջները, քիւրդ ժողովուրդը ահա թևակոխել է ազգային զարթօնքի շրջանը և դրել իր հայրենիքի պահանջը: Քրդական շարժումը, իր ներկայ ձևով, բոլորովին նոր երևոյթ է Թիւրքիայի կեանքում. այլ ևս այս կամ այն աշիրէթապետի հարց կամ քրդական ներքին բարենորոգումների խնդիր չէ մէջտեղ դրւածը, այլ ազատ Քիւրդիստանի կազմակերպութիւնը Թիւրքիայից բոլորովին անկախ: Քիւրդերը դուրս են եկել պատմական կեանքի ասպարէզ, և այլ ևս ո՛չ մի ոյժ չի կարող հանգցնել նրանց մէջ ազգային գիտակցութեան կրակը:

Միւս կողմից, քրդական հարցը ճակատագրական կերպով կապւում է հայկական հարցի հետ: Այդ երկու ժողովուրդների հայրենիքներն ու կեանքը այնքան սերտ կապերով են միացած իրար հետ, որ ամենևին տարօրինակ չպիտի երևայ այն փաստը, որ քրդական ազգային զարթօնքը տեղի է ունենում հայերի բարեկամական աջակցութեամբ: Զարմանալի չպէտք է համարւի և այն անհանգստութիւնը, եթէ չասենք վախը, որ երևան են բերում Թիւրքիայի վարիչները. մի չէյխ Սայիդի ապստամբութիւն Թիւրքիային նստեց 50,000 մարդկային զոհ և մօտ 100 հազար լիրա կորուստ—իսկ դեռ ի՞նչ անակնկալներ է խոստանում քրդական շարժման զարգացումը...

Թիւրքիայի մասին խօսելիս մոռացութեան չպէտք է տրւեն և միւս ոչ–թիւրք ազգերը. լազեր, չէրքէզներ և ուրիշներ, որոնք, անկասկած, չօշափելի գործօն են Թիւրքիայի ներքին կեանքում: Նրանք էլ չեն հաշտւում քեմալական ազգայնական իշխանութեան հետ: Այս տարրը ամուր յենարան է և գործիք միաժամանակ թիւրք ընդդիմադիրների՝ նախկին իթթիհատականների, իթիլաֆականների, խալիֆայականների և այլոց ձեռքին, որոնք նոյնպէս չեն հաշտւում քեմալական ռեժիմի հետ և, արտասահմանի այլ և այլ կենտրոններում և Թիւրքիայի զանազան անկիւններում նստած՝ շարունակում են երազել հին օրերի վերադարձը: Ոմանք էլ գործօն աշխատանքներ են կատարում տապալելու համար Քեմալի ինքնակալութիւնը:

Անհրաժեշտ է հաշւի առնել և այն իրողութիւնը, որ Քեմալի կուսակից «Խալք» կուսակցութիւնն էլ չի ներկայացնում միաձոյլ մի զանգւած: Նրա ներքին մթնոլորտն էլ բաւական թունաւորւած է. սուր դժգոհութիւններ, չգոհացւած տենչեր, նախանձ, պայքար աթոռի և իւղոտ պատառի համար... Այս ամենը ստեղծում է պարարտ հող ամէն տեսակ դաւերի և կռիւների համար — անխուսափելի ճակատագիրը բոլոր բռնապետութիւնների...

Երկու խօսք էլ Հայաստանի դրկից հարևան՝ Պարսկաստանի մասին: Ուրախութեամբ պէտք է արձանագրել, որ վերջին չորս տարիների ընթացքում այս երկիրը արագ քայլերով դիմում է դէպի յառաջդիմութիւն. կատարւում են լայն բարենորոգչական և շինարարական աշխատանքներ: Հաջի Բաբայի յետամնաց, աւատապետական կարգերում հիւծւող, ծուլութեան և զանգազաշարժութեան դասական օրինակ համարւող հայրենիքը կենսունակութեան արտակարգ թափ երևան բերեց: Ներքին վերակազմութեան և ամրապնդման հետ զուգընթաց աճում է և Պարսկաստանի արտաքին կշիռը, ինչպէս և ազատագրութիւնը օտար ուժերի խնամակալութիւնից ու ճնշումից: Մենք հաճոյքով ենք դիտում Պարսկաստանի վերածնունդը, ո՛չ միայն նրա համար, որ նա միշտ բարեացակամ է եղել դէպի իր

digitised by A.R.A.R.@

երկրի հայ տարրը, այլև այն պատճառով, որ պարսիկ և հայ ժողովուրդները ունեն միևնոյն քաղաքական շահերը: Այդ շահերի անսխալ ըմբռնումը անպայման բարիք է երկու կողմերի համար էլ:

Ահա ընդհանուր և խոշոր գծերով բնորոշումը միջազգային կացութեան, որ կար Հ. Յ. Դաշնակցութեան 11րդ Ընդհանուր Ժողովի նախօրեակին. 10րդ Ընդհանուր Ժողովի համեմատութեամբ որոշ փոփոխութիւններ տեղի էին ունեցել և ներքին–ազգային տեսակէտով:

10րդ Ընդհանուր Ժողովը տոգորուած էր մէկ շեշտուած մտահոգութեամբ. պահպանել հայ ժողովրդի համրանքը, ապահովել նրա հանապազօրեայ հացը, նստակեաց դարձնել տարագիր բազմութիւնները, կազմակերպել գաղութները, պայքարել նոր սերնդի ուծացման դէմ: Եւ իբրև համադարման այս բոլորի՝ ներգաղթ, հոգեկան և մարմնաւոր կենդանի հաղորդակցութիւն Հայաստանի և գաղութների միջև: Զորս տարուայ աշխատանքը հիմնովին չլուծեց այս խնդիրները, բայց որոշ չափով կազդուրեց գաղութների կեանքը: Այլևս հացի անմիջական հոգս չկայ. Թափառական զանգուածները, աննշան բացառութեամբ, տեղաւորուած են, ճշտուած է նաև մեծամասնութեան իրաւական վիճակը: Առօրեայ հոգսերի բեռից ազատուած՝ գաղութահայութիւնը սկսել է աւելի լայն հետաքրքրութիւն ցոյց տալ դէպի ազգային–քաղաքական հարցերը: Երիտասարդութիւնը գործ է պահանջում: Եւ, ինչպէս ասուած է Ընդհանուր Ժողովի կոչի մէջ, «վերջանալու մօտ պէտք է նկատել վերակազմութեան և ուժերու ամփոփման շրջանը և պէտք է ժամանակը հասած համարել աշխուժացնելու պայքարը արտաքին ճակատներու վրա»:

Նո՛յնը, դժբախտաբար, չենք կարող ասել Հայաստանի և խորհրդային միւս երկներում ապրող հայկական զանգուածների մասին: Զորս տարի շարունակ խուլ, բայց երբեք չընդհատուող պայքար է մղւում այնտեղ Կոմկուսի և ժողովրդի միջև: Կոմկուսը իր քաղաքականութեամբ խեղդում է ժողովրդի նախաձեռնութեան ոգին, մահացու հարուածներ հասցնում երկրի տնտեսութեան, հարիւրաւոր ու հազարաւոր մարդկանց բանտեր ու աքսորավայրեր է լեցնում, իսկ ժողովուրդը անզօր դիմադրելու չէկայական բռնութիւններին՝ գալարւում է թշւառութեան ճիրաններում...

---

Աչքի առաջ ունենալով միջազգային ու ներքին–ազգային կեանքի չորսամեայ այս փորձը՝ Հ.Յ.Դաշնակցութեան 11րդ Ընդհանուր Ժողովը մանրազննին քննութեան ենթարկեց քաղաքական յետագայ անելիքները և տուեց որոշումներ, որոնք պիտի կազմեն կուսակցութեան յաջորդ տարիների գործունէութեան ուղեցոյցն ու բովանդակութիւնը: Այս որոշումների շարքին, առաջին տեղը, ի հարկէ, գտնւում է մեր կուսակցութեան քաղաքական դաւանանքը. այսուհետև էլ Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի հիմնական նպատակը պէտք է մնայ Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարը, որ նւիրագործուած է մեր վերջին երկու Ընդհանուր Ժողովների որոշումներով և մեր օրերի հայ քաղաքական մտքի խարիսխն է կազմում:

Միացեալ և Անկախ Հայաստանի պահանջը վերացական գաղափար չէ մեզ համար, այլ գործնական պայքարի դրօշակ: Այդ պահանջի իրագործումով միայն հնարաւոր է լինելու հայկական հարցի արմատական լուծումը: Նա միևնոյն ժամանակ և ա՛յն կենարար աղբիւրն է, որ հոգեպէս ամփոփ ու կենդանի է պահում բազմահազար տարագիր զանգուածները: Վերացրէ՛ք այսօր Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարը, և հայկական հարցը կը դառնայ անբովանդակ խօսք, իսկ գաղութահայութիւնը կընկնի յուսահատութեան անդունդ և արագ կը դիմէ դէպի կորուստ: Հասկանալի է միանգամայն, որ այդ գաղափարը մեր իրականութեան մէջ դարձել է այն ջրաբաշխը, որ բաժանում է միմեանցից հայ հասարակութեան երկու ներհակ մասերը. մի կողմը կեցած են հայ ժողովրդի բոլոր կենդանի խաւերը Հ. Յ. Դաշնակցութեան առաջնորդութեամբ, միւս կողմ՝ հայկական դատի և ազատութեան թշնամիները բոլշևիկների գլխաւորութեամբ: Հաշտութեան եզր չի կարող լինել այս երկու կողմերի միջև, քանի Միացեալ և Անկախ Հայաստանի պահանջը մնում է վէճի և պայքարի առարկայ:

Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարի մահացու թշնամին, ինչպէս երէկ, այսօր էլ շարունակում է մնալ Թիւրքիան, որը հակառակ իր կրած քաղաքական և ընկերային բոլոր յեղաշրջումների՝ հայ ժողովրդի արդար պահանջների հանդէպ միշտ պահում է միևնոյն անհաշտ կեցուածքը: Հասկանալի է, որ քանի Թիւրքիան կը շարունակէ օրօրել համաթիւրքական նեղ–շովէն ձգտումներով և իր աշխարհակալական ծրագիրներով վտանգ սպառնալ թէ՛ հայ ժողովրդի քաղաքական իդէալին և թէ՛ նրա ֆիզիքական գոյութեան, Հ. Յ. Դաշնակցութեան գործը կը լինի՝ յեղափոխական անդուլ պայքար բոլոր ասպարէզներում, մինչև որ Թիւրքերը չզիջեն հայապատկան հողերը հայերին և չդադարեցնեն թշնամութիւնը հայ ժողովրդի քաղաքական ձգտումների նկատմամբ: Պայքարի այս ճանապարհին ներելի է ամէն միջոց և բարեկամ ու դաշնակից են բոլոր նրանք, ովքեր դէմ են և իրենց գործունէութեամբ կարող են հակազդել համաթրքութեան թունաւոր ծրագիրներին: Այն օրը, երբ Թիւրքիան ճանաչէ հայկական իրաւունքները և վերջ տայ թշնամութեան, կը փոխուեն և՛ հայ–թիւրքական յարաբերութիւնները: Այդ օրը բարիք կը լինի ո՛չ միայն հայ, այլ և թիւրք ժողովրդի համար:

Հակաթիւրքական պայքարի ուղիների վրա, անտարակոյս, Հ. Յ. Դաշնակցութիւնը չի կարող հաշւի չառնել քրդական գործօնը, որ Լօզանի դաշնագրից ասդին Թիւրքիայի ներքին կեանքում դարձել է խիստ կարևոր ազդակ: Քիւրդ ժողովրդի ազգային զարթօնքը, քրդական ազատագրական պայքարը իրերի տրամաբանութեամբ ուղղուած է Թիւրքիայի դէմ, որովհետև այստեղ է Քիւրդիստանի ազատութեան բանալին: Այս հողի վրա քրդական և հայկական շահերը զուգադիպում են, և քաղաքական մեծ սխալ կը լինէր, եթէ այդ երկու ժողովուրդների կենդանի ուժերը չջանային ստեղծել պայքարի մէկ ճակատ: Այդ ճակատը ուղղուած

digitised by A.R.A.R.@

պէտք է լինի միայն Թիւրքիայի դէմ և չպիտի ծաւալի Պարսկաստանի և Իրաքի սահմաններում․ քրդական գործի յաջողութիւնը հէնց թելադրում է այդ, մի բան, որ թւում է, թէ քիւրդ ղեկավարներն էլ ըմբռնել են լաւ։ Հայկական տեսակէտից, Պարսկաստանն ու Իրաքը բարեկամ ուժեր են, և Հ․Յ․Դաշնակցութիւնը ո՛չ մի գնով չի կարող մասն ունենալ այնպիսի ձեռնարկների մէջ, որոնք որևէ կերպով կարող են ուղղուած լինել այդ երկու երկրների շահերի դէմ։ Այս պայմանը պէտք է չեչտել ուժգնօրէն, որովհետև քիչ չեն ուժեր, և առաջին հերթին բոլշևիկներն ու Թիւրքերը, որոնք ճիգ են թափում քիւրդերին կուռ զէնք դարձնելու Պարսկաստանում և Իրաքում՝ վնասելու համար բրիտանական շահերին։

Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարի միւս ոխերիմ հակառակորդը Խորհրդային Ռուսաստանն է։ Մեր դիրքը նրա հանդէպ պայմանաւորւում է հետևեալ նկատումներով․ մի կողմից Խորհրդ․ Ռուսաստանը եղաւ առաջինը, որ իր արևելեան քաղաքականութեամբ և, մանաւանդ, Թիւրքերի հետ ունեցած սերտ բարեկամութեամբ ու գործակցութեամբ ամենածանր հարուածը հասցրեց հայկական հարցին՝ պատճառ դառնալով Հայաստանի Հանրապետութեան անկախութեան խորտակման և Թիւրքահայկական դատի լուծման յետաձգման։

Միւս կողմից, այժմ, երբ Մուսթաֆա Քեմալի առաջապահները կանգնած են Արաքսի և Ախուրեանի եզերքներին, ռուս զօրքի ներկայութիւնը Կովկասում, թէկուզ և «կարմիր բանակ» անունով, որոշ երաշխիք է հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան ապահովութեան։

Եւ, վերջապէս, ինչ և լինի ներկայումս իշխող ռեժիմը, Ռուսաստանը, ինչպէս առաջ, ապագայում էլ պէտք է լինի հայկական խնդրի կարևորագոյն ազդակներից մէկը։

Հայ ժողովուրդը չի կարող հաշւի չառնել այդ ազդակը։ Եթէ Հայաստանի գոյութեան և զարգացման համար անհրաժեշտ է տանելի փոխյարաբերութեան ստեղծումը Թիւրքիայի հետ, և՛ս առաւել կարևոր է բարեկամական յարաբերութիւնների պահպանումը Ռուսաստանի հետ—մի բան, որ հնարաւոր կը դառնայ միայն ա՛յն ժամանակ, երբ Ռուսաստանը ազատագրւի բռնապետական ռեժիմից և դառնայ ազատ, լայն ժողովրդավար երկիր։ Բոլշևիկեան բռնակալութեան դէմ ռուս ժողովրդի մղած պայքարում մեր ամբողջ համակրանքը վերջինիս հետ է։ Մենք գտնում ենք, սակայն, որ այդ պայքարը պէտք է տարւի ներքին ուժերով Արտաքին միջամտութեան ամէն փորձ կը ծառայէ խորհրդային իշխանութեան օգտին՝ պատճառ դառնալով որ ռուս ժողովուրդը հայրենիքի պաշտպանութեան նպատակով համախմբւի այդ իշխանութեան շուրջը։

Մենք բարեկամական զգացմունքներ ենք տածում Հայաստանի անմիջական հարևան՝ վրացի և ազրբէջանեան ժողովուրդների նկատմամբ․ այդ ժողովուրդների ճակատագիրը անխզելի կապերով կապուած է հայ ժողովրդի ճակատագրի հետ, և մեր բուռն բաղձանքն է որ Հայաստան, Վրաստան և Ազրբէջան ապրեն հաշտ ու համերաշխ՝ փոխադարձաբար յարգելով միմեանց իրաւունքները և նեցուկ հանդիսանալով մէկ մէկու։ Դժբախտաբար, այս բաղձանքը դեռ մնում է բարի ցանկութիւնների սահմանում․ մեր հարևանները իրենց քաղաքական գործնական աշխատանքների ընթացքում ղեկավարւում են չափազանց նեղ եսական հաշիւներով և ի նկատի չեն ունենում նաև հայ ժողովրդի կենսական կարիքները։ Նրանք անտես են առնում այն անանցանելի վիհը, որ կայ հայ ժողովրդի և Թիւրքիայի միջև, և շարունակում են՝ իրենց ազատագրական յոյսերը կապել նաև Թիւրքիայի հետ։ Նրանք մոռանում են, որ Թիւրքիան կովկասեան գործերին խառնելու ձգտումը նշանակում է զոհաբերել հայերին․ նման դրութեան հետ մենք, ի հարկէ, չենք կարող հաշտուել։ Պոլսից կամ Անգորայից բխող քաղաքականութիւնը ցարդ միշտ եղել է հակահայ, ուստի և զարմանալի չէ բնաւ մեր կասկածն ու վերապահութիւնը դէպի ամէն մի ձեռնարկ, որի յետևից երևում է Թիւրքական սուսերը։ Մեր հարևանները պէտք է հասկանան, որ կովկասեան ժողովուրդներին սպառնացող վտանգը միայն Խորհրդային Ռուսաստանը չէ, այլ և Թիւրքիան իր համաթիւրքական-աշխարհակալական տենչերով։

Այս վերաբերումը, սակայն, արգելք չէ, որ Հ․ Յ․ Դաշնակցութիւնը ջանայ հաշտարար ոգիով ու փոխադարձ զիջումներով հարթել հայ-վրացական և հայ-ազրբէջանեան ներքին վէճերը — վէճեր, որոնք այնքա՛ն թանգ են նստել բոլոր կողմերի համար էլ։ Առանց այս վէճերի կարգադրութեան դժուար է երևակայել տևական խաղաղութիւն Անդրկովկասում։

Հայ-վրացական և հայ-ազրբէջանեան յարաբերութիւնները հիմնական փոփոխութեան չեն ենթարկւել և՛ խորհրդային տիրապետութեան տակ։ Մեր վերաբերումը դէպի Խորհրդային Վրաստանն ու Խորհրդային Ազրբէջանը որոշւում է նաև այն փաստով, որ նրանք ևս ամենայն յամառութեամբ աշխատում են իրենց տիրապետութեան տակ պահել Հայաստանից խլած գաւառները— Ախալքալաք, Հայկական Բորչալու, Լեռնային Ղարաբաղ-Գանձակ, Շարուր-Նախիջևան։ Բացի այդ, Խորհրդային Հայաստանի հետ դաշնակցութիւն կազմելով հանդերձ՝ նրանք զրկողի քաղաքականութիւն են վարում վերջինիս հանդէպ թէ՛ համապետական միջոցների բաշխման, թէ՛ մաքսային քաղաքականութեան և թէ՛ միւս բոլոր գործերում։ Աւելին ևս․ այդ երկրներում ապրող հայկական փոքրամասնութիւններն այսօր էլ մնում են իրաւազուրկ թէ՛ տեղական ինքնավարութեան և թէ՛ ազգային-մշակոյթի ասպարէզներում։

Այս անարդար դրութեան հանդէպ ևս մենք չենք կարող մնալ անտարբեր հանդիսատեսի դերում։ Մեր պարտականութիւնն է մերկացնել Վրաստանի և Ազրբէջանի խորհրդային իշխանութիւնների աշխարհակալական-շովէն քաղաքականութիւնը, արծարծել այդ իշխանութիւնների լծի տակ ապրող հայկական փոքրամասնութիւնների մէջ տեղական-մշակութային ինքնավարութեան պահանջները, աջակցել նրանց այդ պահանջների իրագործման խնդրում։ Մեր այս աշխատանքը, ի հարկէ, ուղղուած չպիտի լինի ո՛չ վրացի և ո՛չ Թուրք ժողովուրդների դէմ, այլ իշխանութեան։ Ընդհակառակը, մեր ամենօրեայ ձգտումը պէտք է լինի՝ պայքարել բոլոր այն երևոյթների դէմ, որոնք խանգարում են ժո-

digitised by A.R.A.R.@

ղովուրդների բարեկամութեան ու համերաշխութեան ամրացման։

Միևնոյն ուղղութեամբ պէտք է ընթանայ մեր աշխատանքը և Հայաստանի, այսպէս կոչուած, բռնագրաւած շրջանները Մայր-Հայրենիքին վերադարձնելու խնդրում։ Սա ո՛չ միայն ընկերային արդարութեան թելադրանք է, այլ և գործնական պահանջ Հայաստանի համար։

Շնորհիւ իրաւազրկման և վրացի ու ադրբէջանցի կոմունիստների հետևած նեղ-ազգայնական քաղաքականութեան Հայաստանը իրապէս վերածուած է երկրորդ Արխագիայի. մի փոքրիկ երկիր հազիւ 900,000 բնակչութեամբ։ Այնինչ զուտ հայկական և հայապատկան Ախալքալաքը, Լեռնային Գանձակը, Ղարաբաղն ու Նախիջևանը բռնի ուժով կցուած են Վրաստանին ու Ադրբէջանին։ Այս հողամասերը վերադարձնելով Հայաստանին՝ գէթ մասամբ կարելի կը լինի մեղմացնել հայ ժողովրդի վերաբերմամբ գործուած անօրէնութիւնը։

Անարդա՞ր է այս պահանջը։ Մենք վստահ ենք, որ բռնագրաւուած շրջանների ազգաբնակութիւնն էլ մեզ պէս է մտածում և եթէ ցայժմ չեչւած ձևով չի ներկայացրել իր պահանջը, պատճառը բոլշևիկեան անհեթեթ բռնակալութիւնն է, որ ճնշում է նրա կամքը։

Աւելին դեռ. մենք համոզուած ենք, որ այս հարցում հայ կոմունիստներից շատերն էլ մեզ պէս են մտածում և եթէ լռում են, պատճառը դարձեալ նոյն բռնապետութիւնն է և իրենց քաղաքացիական քաջութեան պակասը։

Գալով խորհրդային իշխանութեան՝ ո՛չ մի առարկայական ուեալ չկայ մեր դիրքը նրա հանդէպ նոր փոփոխութեան ենթարկելու։

Այսուհետև էլ Հ.Յ.Դաշնակցութիւնը շարունակելու է գաղափարական անհաշտ պայքար մղել Հայաստանի խորհրդային իշխանութեան դէմ, առանց այդ իշխանութիւնը բռնի ուժով տապալելու նպատակի։

Ոմանք մեր այս քաղաքականութիւնը համարում են հակասական. եթէ քարոզում ենք «գաղափարական անհաշտ պայքար», ապա ինչպէ՞ս կարելի է չձգտել «այդ իշխանութիւնը բռնի ուժով տապալելու»։

Նման մտածողութիւնը ճիշտ կը լինէր, եթէ Հայաստանի խորհրդային իշխանութիւնը ներկայացնէր ինքնուրոյն մի ոյժ և այդ ոյժը տապալելով կարելի լինէր ռեժիմի իրական փոփոխութիւն առաջ բերել։ Յայտնի է, սակայն, որ նա ինքնարժէք չէ, այլ մէկ մասնիկը մոսկովեան ուժի՝ Մոսկւայից բխած ու Մոսկւային ենթակայ։ Հետևաբար, Հայաստանի խորհրդային իշխանութիւնը «բռնի ուժով տապալելու» համար պէտք է տապալել Մոսկւայի իշխանութիւնը, առհասարակ, խորհրդային իշխանութիւնը։

Երէկւայ պէս, այսօր էլ մեզ համար պարզ է բոլորովին, որ բոլշևիկների իշխանութիւնը մեր երկրում կը մնայ այնքան, որքան նա կայուն է կենտրոնում։ Հէնց որ բոլշևիզմը վերջ գտնէ Ռուսաստանում, 24 ժամ չետոյ Հայաստանում էլ խորհրդային իշխանութիւն չի լինի։ Եթէ այս ճիշտ է — իսկ նման հաւանականութեան դէմ չեն առարկում և իրենք՝ կոմունիստները — ապա Հայաստանում բռնի ուժով յեղաշրջում կատարելու միտքը կը դառնայ միանգամայն աննպատակ և անիմաստ։ Դաշնակցութիւնը Խորհրդային Հայաստանի նկատմամբ վարած իր քաղաքականութեան մէջ իշխանութեան հարց չի դնում։ Նրա նպատակն է ընդդիմադիրի անաչառ և անխնայ քննադատութեամբ նպաստել հայկական կեանքի առաջադրած հարցերի լուծման։ Իշխանութեան խնդիրը աւելի լայն՝ համառուսական բնոյթ կրող, ռուսական դէպքերից կախուած խնդիր է։

Արժէք ունե՞ն մեր ընդդիմադրութիւնն ու քննադատութիւնները։ Անկասկած, ունեն։ Դաշնակցութեան մուրճի հարուածները — յաճախ ենք տեսնում այդ — անհետևանք չեն անցնում. անգամ ամենակոյր և աղանդամոլ կոմունիստները ստիպուած են հաշւի առնել մեր արած մերկացումներն ու քննադատութիւնները։ Մեր դիրքը անհամեմատ աւելի մեծ օգուտ է բերում Հայաստանին, քան ուրիշների ծառայական խնկարկութիւնները։

Հ. Յ. Դաշնակցութեան ընդդիմադրութիւնը ունի և մէկ ուրիշ կարևոր քաղաքական դեր. նա կենդանի է պահում հայ ժողովրդի ազգային իղձերը, հայրենիքի սէրն ու ազատութեան յոյսը։ Հ. Յ. Դաշնակցութիւնն է այսօր այն կենդանի շաղախը, որ համախմբում ու ամրացնում է հայ ժողովրդի ազգային հաւաքական կամքը՝ թէ՛ Մայր-Երկրում և թէ՛, մանաւանդ, տարագրութեան մէջ։

Ահա, ընդհանուր գծերով, այն քաղաքական խնդիրները, որոնք գրաղեցրին Հ. Յ. Դաշնակցութեան 11րդ Ընդհանուր Ժողովը։ Այդ խնդիրները ստացան իրենց գաղափարական ձևակերպումը և մնում է, որ դառնան գործ։ Դէպի գո՛րծ, ուրեմն, դէպի յեղափոխական պայքար, դէպի՛ կենդանի ու ստեղծագործ աշխատանք — ա՛յս պէտք է լինի այսուհետև ամենքիս օրուայ կարգախօսը։

Ս. ՎՐԱՑԵԱՆ

digitised by A.R.A.R.@

# ԱՐԵՒԵԼԵԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

## ԷՐԶՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳ

Սահման և տարածութիւն·— *Արևելքէն՝ Կարսի Սարըղամիշ և Կաղզւան, Պայազիտի Ալաշկերտ գաւառակները, արևմուտքէն՝ Կիմիւշխանէի Բաբերդ, Երզնկայի Փլոմէր գաւառակները, հիւսիսէն՝ Րիզէի նահանգը և Արդւին նահանգի Եուսուֆ էլիի գաւառակը, հարաւէն՝ Երզնկայի Քղի, Պիթլիսի Վարդօ և Կէնճ գաւառակները:*

*Տարածութիւնն է* 33,450 *քառ. քիլոմետր:*

Վարչական բաժանում·— *Ունի* 7 *գաւառակներ՝ Էրզրում, Սպեր, Օլթի, Բասէն (Հասանգալէ), Դերջան (Գըզլխաթուն), Թորթում (Պէխախ) և Խնուս: Նահանգի կեդրոնը ունի երեք գիւղախումբեր՝ Աշգալա, Օվաճըգ (Իւչ Քիլիսա) և Ըլըճա,* 51 *թաղեր և* 173 *գիւղ: Սպեր գաւառակն ունի երկու գիւղախումբ և* 130 *գիւղ: Օլթին* 3 *գիւղախումբ ու* 171 *գիւղ. Բասէնը ունի* 3 *գիւղախումբ,* 7 *թաղ և* 250 *գիւղ: Դերջանը՝* 171 *գիւղ: Թորթումը՝* 98 *գիւղ: Խնուսը՝* 5 *գիւղախումբ,* 3 *թաղ և* 216 *գիւղ:*

Մշակելի հող, ցանք և բերք·— 33,450 *քառ. քիլոմետրէն մշակւած են միայն* 1,600*–ը. մնացեալը անմշակ է: Զմշակւած հողէն* 18 *քառ. քիլոմետրը լիճ և ճահիճ է,* 6,000 *քիլոմետրը մարգագետին և արօտավայր:*

*Ցանւած է՝* 416,000 *արտավար ցորեն,* 357,000*՝ գարի,* 37,300 *հաճար,* 4850*՝ եգիպտացորեն,* 4000*՝ գետնախնձոր,* 4900*՝ լուբիա,* 3250*՝ սոխ,* 225*՝ վիգն, ընդհանուր գումար՝* 829,550 *արտավար:*

*Բերք առնւած է՝* 24,960,000 *քիլօ ցորեն,* 19,420,000 *քիլօ գարի,* 1,880,000*՝ հաճար,* 327,000*՝ եգիպտացորեն,* 1,269,500*՝ գետնախնձոր,* 261,000*՝ լուբիա,* 882,000*՝ սոխ,* 117,000*՝ վիգն* (պուրչագ)*: Ընդհանուր գումար՝* 51,116,500 *քիլօ:*

Ընտանի կենդանիներ·— 2577 *գրաստ,* 4635 *գամբիկ,* 6208 *էշ,* 46 *ջորի,* 110 *ուղտ,* 46,122 *կով,* 76,841 *եզ,* 9087 *գոմէշ,* 258,088 *ոչխար,* 125,585 *այծ: Բերք՝* 84,644,883 *քիլօ կաթ,* 258,088 *քիլօ բուրդ;* 62,791 *քիլօ այծի մազ:*

Անտառներ·— *Ընդհանուր տարածութիւն՝* 150950 *հեկտար, որուն* 64,000*–ը Օլթիի,* 38,250*–ը Սպերի,* 25,700*–ը Թորթումի,* 15,0000*–ը Բասէնի և միայն* 8000*–ը Էրզրումի մէջ:*

*Մէկ տարւան մէջ առաջ արտադրւած է* 36,550 *խորանարդ մետր, փայտ՝* 188,000 *կենդինար, ածուխ՝* 8880 *կենդինար:*

Հանքեր՝ ցարդ երևան հանւած·—

Դերջան·— *Մալֆի գիւղախումբի Փոլիք ըսւած տեղը* քարիւղ: *Վարնիք գիւղին մէջ՝* ածուխ:

Եուսուֆ էլի·— *Տէօրթ Քիլիսայի սահմանին վրայ կան* պղինձի, կապարի (2), զինկի (2), երկաթի *հանքեր, Մոսխորոնէկիգտանի մէջ՝* երկաթի *և* պղինձի: *Միլօ գիւղին մէջ՝* պղինձի *և* զինկի, երկաթի *և* կապարի: *Խօտ Սիւֆլայի մէջ՝* պղինձի *և* զինկի, *Քիվնար ու Փէնքրէկի մէջ՝* պղինձի, կապարի *և* զինկի: Փաքէթ *գիւղին մէջ՝* պղինձի և զինկի:

Օլթի·— *Հավքաս Տաղըի մէջ՝* սև սաթ:

Էրզրում·— *Աղզը Աչըգի մէջ՝* ածուխ, *Քիւքիւրթլիի մէջ՝* լինեիթ (*քարածուխ*):

Քղի·— *Քիւրքտէրէսիի մէջ՝* երկաթ, *Պէմիշանլըղի մէջ՝* քարիւղ:

Բաբերդ·—*Մատէն Նահիէի Շէնկեահ ըսւած տեղը՝* Բուշ սույի *անունով ծանօթ* պղինձ *և* Լինեիթ ածուխ. *Խալէֆ գալէ վայրին մէջ՝* լինեիթ ածուխ:

Հասանգալէ·— *Քաղաքին մէջ՝* մագութ, ածուխ, քարիւղ:

Խնուս·— *Տիվան Հիւսէյնի մէջ՝* քարիւղ, *Գաթրանլըի մէջ՝* քարիւղ, *Քիլիսա Տէրէսիի մէջ՝* ածուխ:

Թորթում·— *Օտխայի մէջ՝* սև սաթ, *Զամըլըտէրէի մէջ՝* ածուխ:

Սպեր·— *Վանիկ գիւղին մէջ՝* արծաթ, *Մասնսի մէջ՝* պղինձ, *Վերին Քէհրիկի մէջ՝* պղինձ, *Գարախանի մէջ՝* ածուխ, *Ֆանսիի մէջ՝* ածուխ, *Էքպէքրէքի մէջ՝* պղինձ, *Սալաջուր՝* պղինձ, *Կապան՝* ադբորակ, *Քիրեք՝* քարիւղ:

Գործարաններ և ջաղացքներ·—1·—*Էրզրում-Պօղազի ալիւրի գործարանը, Էմրուլլահի որդի Իբրահիմի սեփականութիւնը, հիմնւած* 1901*–ին, ունի* 12 *ձիու ուժով և ջուրով դարձող մոթէօր մը: Մէկ տարւան մէջ արտադրւած է* 328,170 *քիլօ ալիւր:* 2·—*Կէզ Թաղի ալիւրի գործարանը՝ Ալեֆտարպաշը Զատէ Ապտիւրրահիմի, հիմնւած՝* 1899*–ին, ունի* 35 *ձիու ուժով և կազով ու պէնզինով դարձող մոթէօր մը:* 8 *ամսւան մէջ արտադրւած է* 720,000 *քիլօ ալիւր:* 3·— *Էրզրումի երկաթուղիի կայարանին մէջ վայրաշարժի, վակոնի եւ նորոգութեան յատուկ գործարան, հանրօգուտ շինութեանց Էրզրումի երկաթուղիի տնօրէնութեան հրամանին տակ, հիմնւած* 1918*–ին, կը դառնայ վայրաշարժ մոթէօրով* (20 *ձիու ուժով*)*:* 4·— *Զէնքի նորոգութեան գործարան, ազգային պաշտպանութեան ռազմանիւթի գործարաններու տնօրէնութեան հրամանին տակ, հիմնւած* 1920*–ին* (իբրև զինւորական գաղտնիք անյարմար կը նկատւի Տարեգրքին մէջ յայտնել թէ մէկ տարւան մէջ ո՛րքան զէնք նորոգւած է):

Դրամատուններ·— *Էրզրումի մէջ կայ Օսմանեան պանքա և Երկրագործական դրամատուն: Այս վերջինը*

digitised by A.R.A.R.@

| | Ճամբաներու անունը | Ճամբան սկիզբը—վախճանը | Խճուղիներ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Երկարութիւն քիլոմետր | Լաւ վիճակի մէջ քիլոմետր | Նորոգել սկսուած քիլոմետր | Նորոգութիւն չսկսուած քիլոմետր | Նոր շինուող քիլոմետր | Կրկին շինելու կարօտ քիլոմետր | |
| 1 | Էրզրում—Տրապիզոն | Էրզրում—Քօփտաղը | 83.— | 83.— | — | — | — | — | |
| 2 | Տրապիզոն—Թուրքիզ | Էրզրում—Գայլաղիտի սահման | 117.— | 25.— | — | — | — | 92.— | Էրզ.—Գայլաղ. մասն է նորէն շինելիքը |
| 3 | Էրզրում—Մուշ | Քէօփրիւքէօյ—Ջօպանտէրէ | 126.— | 50.— | — | — | — | 76.— | Այս ճամբան Էրզրում-Գայլաղիտ ճամբուն 51րդ քիլոմետրին վրայ Ջօպանտէրէէն զատուած է։ Թուրքական զրաւման առեն Արաքսի հովիտին ուղղութեամբ ռուսներուն կողմէ բացուած է, մասամբ բլոկաժի, մասամբ հողային յարդարումի վիճակին մէջ է։ |
| 4 | Էրզրում-Մալազկերտ-Վան | Խնուս—Մալազկերտ | 30.— | — | — | — | — | 30.— | Խնուս-Վան ճամբուն մէկ մասն է |
| 5 | Էրզրում—Խարբերդ | Էրզրում—Երզնկայի սահման | 83.— | 10.— | — | — | — | 73.— | |
| 6 | Էրզրում—Երզնկա | Պարապոյրը—Ճէնի Խանլարը | 78.— | 13.— | — | — | — | 65.— | Այս ճամբան Էրզ.—Տրապիզոն ճամբու 38րդ քիլոմետրին վրայ Խնուս-Պարապըյրըը Խանլարըի մօտ կը զատուի։ |
| 7 | Էրզրում—Սպեր—Րիզէ | Էրզրում—Րիզէ սահման | 140.— | 1.— | — | — | — | 139.— | |
| 8 | Հասանղալէ—Մէճինկլի | Հասանղալէ—Մէճինկլի | 10.400 | — | — | — | 10.200 | 0.200 | |
| 9 | Թորթում—Փէթվահար | Թորթում—Փէթվահար | 66.— | 18.— | — | — | 1.421 | 46.579 | Այս ճամբան Էրզ.—Թորթում-Ծուսուֆ էլիի 85րդ քիլ.ին վրայ Ֆերէճլի կամուրջէն կը զատուի։ |
| 10 | Էրզրում—Ոսխանլարը | Էրզրում—Ոսխանլարը | 45.— | 20.— | — | 20.— | 5.— | — | |
| 11 | Էրզրում—Օվաճըղ | Էրզրում—Օվաճըղ | 45.— | — | 1.— | — | 8.— | 36.— | |
| 12 | Թորթում—Նարման—Օլթի | Թորթում—Օլթի | 55.— | — | — | 25.— | — | 30.— | |
| 13 | Օլթի—Ախսպուր | Օլթի—Ախսպուր | 40.— | 5.— | 35.— | — | — | — | |
| 14 | Օլթի—Արդուին | Օլթի—Արդուինի սահման | 175.— | 45.— | 70.— | — | — | 30.— | |
| 15 | Թորթում—Սպեր | Թորթ. Սպեր-Քերէսի կամուրջ | 60.— | — | 60.— | — | — | — | |
| 16 | Սպեր—Բաբերդ | Սպեր—Բաբերդ | 50.— | — | 20.— | — | — | 30.— | |
| 1. | Էրզրում—Խնուս | Էրզրում—Խնուս | 120.— | 14.— | — | — | — | 106.— | |
| 18 | Քէօփրիւքէօյ-Զաղակ-Կարս | Քէօփրիւքէօյ—Կարսի սահման | 35.— | 35.— | — | — | — | — | Այս ճամբան Էրզրում-Գայլաղիտ 51րդ քիլոմետրին Ջօպանտէրէ կամուրջին քովէն զատուելով Կարսի սահմանը կը վերջանայ։ Ռուսներուն կողմէ շինուած է։ |
| 19 | Խորասան—Խորում | Խորասան—Կարս | 87.— | 50.— | — | 37.— | — | — | Այս ճամբան բուն Էրզրում-Կարս ճամբուն մէկ մասը, Էրզ.—Գայլաղիտ—Օլթի ճամբուն 87րդ քիլոմետրին վրայ Խորասան գիւղին մօտ կը զատուի, Կարսի ճամբուն կը միանայ։ |
| 20 | Դերջան—Մալէքի | Դերջան—Մալէքի | 30.— | 2.— | — | — | — | 28.— | |

digitised by A.R.A.R.@

մասնաճիւղեր ունի նաև Սպերի, Բասենի, Դերջանի, Թորթումի և Խնուսի մէջ:

**Հասոյթներ** — Էրզրում նահանգի ընդհանուր եկամուտն է՝ 1,024,143 ոսկի, մասնաւոր եկամուտը՝ 475,127 ոսկի:

**Բնակչութիւն** — Ընդհանուր թիւ՝ 270,376 հոգի, 133,200-ը այր, 137,176-ը կին: Էրզրում գաւառակն ունի 77,966 բնակիչ, Դերջանը՝ 33,852, Սպերը՝32278, Թորթումը՝ 31,702, Բասենը՝ 34,901, Խնուսը՝ 23,033, Օլթին՝ 36,644: Մէկ տարուան մէջ ծնած են 2141 հոգի, 1062-ը մանչ, 1079-ը աղջիկ: Մեռած են 908 հոգի, 451 այր, 457 կին: Ամուսնացած են 904 հոգի, 779 այր, 125 կին: Ամուսնալուծում՝ 52:

**Դպրոց և միութիւն** — Էրզրում քաղաքին մէջ կայ մանչերու լիսէ մը՝ 78 գիշերօթիկ և 135 ցերեկեայ աշակերտներով, այրերու վարժապետանոց մը՝ 121 գիշերօթիկներով, աղջիկներու միջնակարգ դպրոց մը՝ 40 ցերեկեայ աշակերտուհիներով, կայ նաև քաղաքային դպրոց մը, 133 գիշերօթիկ աշակերտներով, և աղջկանց ու մանչերու 7 նախակրթարաններ՝ 872 աշակերտով: Ասկէ զատ Էրզրումի գիւղերուն մէջ կան 7 մանչերու դպրոց՝ 315 աշակերտով, Աշքալէ նահիէի կեդրոնը կայ գիւղական դպրոց մը՝ 50 գիշերօթիկ և 70 ցերեկեայ աշակերտներով:

**Առողջական վիճակը** — Նահանգին առողջական վիճակը լաւ է: Պարբերաբար կը պատահին թեթև բծաւոր ժանտատենդ, տղու փորհարութիւն: Գարասուի, Ճորոխի և Օլթի չայի հովիտի գիւղերուն մէջ կը տիրէ ջերմ, Բասենի մէջ յաճախադէպ է թրախոմը, Սպերի, Թորթումի և Օլթիի կարգ մը գիւղերուն մէջ կայ Ֆրանկախտ, Խնուսի և Բասենի գիւղերուն մէջ՝ բորոտութիւն:

Տեղական հիւանդութեանց շարքին կան նաև ցնցղատապը՝ գարնան և աշնան խոնաւ ամիսներուն, կոկորդի բորբոքում, ականջուկ, տղու քոլերա, երբեմն բծաւոր ժանտատենդ և այլն: Էրզրումի մէջ կայ 100 անկողիննոց տիպար հիւանդանոց մը և 400 անկողիննոց զինւորական հիւանդանոց մը: Ասկէ զատ բոլոր գաւառակներու մէջ 20-ական անկողիննոց մէկ մէկ բուժարաններ կը շինուին: Օլթիի մէջ Ռուսերէն մնացած 100 անկողիննոց հիւանդանոց մը կայ, որ նորոգութեան կը կարօտի: Նոյնպէս, Դերջանի, Թորթումի և Օլթիի մէջ 10-ական անկողիննոց բուժարաններ կան՝ առողջապահական գործավարութեան ենթակայ:

**Ջերմուկներ** — Էրզրումէն 3 ժամ հեռու Ըլըճա գիւղին մէջ կայ ջերմուկ մը, որուն ջուրը կը պարունակէ ծծումբ, ածուխ, քլոր և ածխային թթու: Հասան Գալէ գիւղին մէջ կայ ջերմուկ մը՝ որ կը պարունակէ ծծմբախառն երկաթ, ծծումբով սոտա և երկաթ: Էրզրումէն 2 ժամ հեռու՝ Գըզըլ ջերմուկը՝ որ կը պարունակէ քարպոնաթ տը սուտ, ծծմբական երկաթ, կիրի քլորական աղ: Էրզրումէն 3 ժամ անդին՝ Էրխոնի ջերմուկը, որ կը պարունակէ ծծմբային երկաթ, պարզ աղ, ծծմբական սոտա և ուրիշ աղեր: Էրզրումէն 4 ժամ հեռու Աղտաղ ջերմուկը՝ (ծծմբական երկաթ, կիրի քլորական աղ, ծծումբ և ածխային թթու): Էրզրումէն 4 ժամ հեռու Քեարքերի ջերմուկը (բնածխական երկաթ, բնածխական թթու, կիրի ծըծմբատ և կիրի քլորուտ):

Ասոնցմէ զատ կան՝ Էրզրում քաղաքէն մէկ ժամ հեռուն՝ Սօուք ջերմուկը, Խնուսի և Քղիի միջև՝ Խումրան ջերմուկը, Դերջանի գաւառակին մէջ՝ Հէօլէնկ ջերմուկը:

Քըզըլ, Սօուք և Քեարկիրի ջերմուկները պաղ են, միւսները՝ տաք:

Բացի ջերմուկներէ, Աղտաղ գիւղին, Հասանգալէի Սորիհան, Խնուսի Մամաչ գիւղերուն մէջ կան զանազան հանքային ջուրեր, որոնք չեն տարրալուծուած:

**Ոճիրներ** — Էրզրումի նահանգին մէջ 1927 յունուարէն մինչև յուլիսի վերջը՝ եօթը ամսուան մէջ պատահած են 233 ոճիրներ — 3 բռնագրաւում, եօթ սպանութիւն, 2 զէնք քաշել, 31 գողութիւն, 11 շնութիւն, 4 կուսապղծութիւն, 11 աղջկան առևանգում, 4 տան վրայ յարձակում, 42 վիրաւորում, 64 ծեծ, 3 դրամաշորթութիւն, 2 վստահութեան զեղծում, 5 կառավարական հրամաններու անսաստում, 11 ոստիկան անարգել, 41 զանազան ոճիրներ:

**Թերթեր** — Պիզիմ Կազէթա՝ կիսամսեայ, հիմնուած 29 հոկտ. 1926-ին: Կը տպւի պետական տպարանին մէջ: Ենվարը Շարքիյէ, շաբաթաթերթ, հիմնուած 1967-ին. կուսակալութեան պաշտօնաթերթն է: Խմբագրական մարմին չունի. տպարանի տնօրէնութեան կողմէ կը խմբագրուի: Շէն Եայլա Մէճմուասը, 1928ին սկսած է հրատարակուիլ:

## ՊԱՅԱԶԻՏԻ ՆԱՀԱՆԳ

**Սահման և տարածութիւն** — Սահմաններն են՝ արևելքէն Պարսկաստան և Ադրբէջան, արևմուտքէն՝ Էրզրումի Հասանգալէ և Խնուս քաղաքները, հիւսիսէն՝ Հայաստան և Կարս նահանգի Կաղզուան գաւառակը, հարաւէն՝ Վանի Արճէշ և Մուրատիէ գաւառակները, Պիթլիսի՝ Մալազկերտ գաւառակը:

**Վարչական բաժանում** — Պայազիտ նահանգի կեդրոն Քարա Քէօսէ գաւառակէն զատ կան՝ Իկտիր, Կողբ, Ալաշկերտ (Թոփրաք Քալէ), Տիատին, Թուտաք (Անթապ) և Պայազիտի գաւառակները:

Նահանգի կեդրոնն ունի 175 գիւղ և 2 գիւղախումբ, Տիատինը՝ 105 գիւղ, Թուտաքը՝ 82 գիւղ, Իկտիրը՝ 98 գիւղ, Քարա Քէօսէն՝ 60 գիւղ, Կողբը՝ 108 գիւղ, Ալաշկերտը՝ 74 գիւղ:

**Ցանք** — ցորեն՝ 224,282 արտավար, գարի՝ 104,925, վարսակ՝ 114, հաճար՝ 18,020, կորեկ՝ 4030, բակլա՝ 35, գետնախնձոր՝ 267, կանեփ՝ 4, բամպակ՝ 7538 արտավար: Մեղւի փեթակ՝ 150 հատ, բրինձ՝ 1492 արտավար, պորչաֆ՝ 30 արտավար:

**Հունձք** — Ցորեն՝ 9,359,529 քիլօ, գարի՝ 5,765,000 քիլօ, վարսակ՝ 13,170, հաճար՝ 1,240,000, կորեկ՝ 120,385, բակլա՝ 1060, գետնախնձոր՝ 12,024, կանեփ՝ 120, բամպակ՝ 430,036, մեղր՝ 1200, բրինձ՝ 97,946. պուրչակ (վիգն)՝ 96 քիլօ:

**Ընտանի կենդանիներ** — 7403 գրաստ, 7926 ղամբիկ, 5153 էշ, 837 ջորի, 797 ուղտ, 98,474 կով, 88,342 եզ, 9779 գոմէշ, 944,485 ոչխար, 240,570 այծ: Բերք՝ 13,773,196 քիլօ կաթ, 695,509 քիլօ բուրդ, 113,237 քիլօ այծի մազ:

digitised by A.R.A.R.@

**Հանքեր․**— Տիատինի Ալատաղի լեռնաշղթային ստորոտը կան բազմաթիւ հանքեր, որոնք դեռ երևան չեն հանւած։ Կեդրոն քաղաքէն ոչ հեռու Ջիրմիկի մօտ կայ ծծումբի և Վէլէտ գիւղին մօտ՝ ածուխի հանքեր։

**Գործարաններ․**— Ամբողջ նահանգին մէջ կան 86 սովորական ջրաղացքներ։ Իկտիրի մէջ կայ բամպակի գործարան մը որ բամպակը կուտէն կը զատէ և հակեր կը կապէ։

**Դրամատուններ․**— Նահանգի կեդրոն Քարաքէօսէի մէջ Երկրագործական պանքան 1890–էն ի վեր մասնաճիւղեր ունի։

**Առողջական վիճակ և ջերմուկներ․**— Պայազիտ նահանգի առողջական վիճակը գոհացուցիչ է։ Տիատինի Մէրդիհան բուած վայրը կան երեք ջերմուկներ՝ Երյանկը, Տավուտ և Ճահվէլէտ անուններով․ իսկ Թուտաքի հիւսիսը կայ ուրիշ ջերմուկ մը։

| Ճամբաներ ակիզբ և վախճան | երկայնք քիլ․ | լաւ մասը քիլ․ | նորոգւող քիլ․ | դեռ չնորոգւող քիլ․ | նոր շինւող քիլ․ |
|---|---|---|---|---|---|
| Սաչթէփէէն Գարաքէօսէ | 29. — | 10.386 | 13.474 | | 5.140 |
| Գայագիտէն Գըզըլտիզէ Գարսկա․Թրանզիտի ճամբ․) | 62 500 | — | 37.500 | 25.— | — — |
| Գըզըլտիզէէն Իկտիրի Մարգարէ կամուրջը | 80. — | — | — | 80.— | — |
| Փէրնավուտի կամուրջէն (Կարսի սահման) Իկտիրի | 95. — | 20. — | — | 75.— | — |
| Մարգարէ | 45. — | — | — | 45. — | |
| Կաղզւանի սահմանէն Գայագ․ | 37. — | — | | 37. — | |
| Գայագիտէն Վանի սահման (Թուբախի ճամբով) | 58. — | | | 58. — | |
| Ալաշկերտի կեդրոն Զիտկանէն Վանի սահմանը՝ Գըլըճ Կէտիկիի ճամբով | 63. — | | | 58.800 | 4.200 |
| Սարըղամիշի սահմանէն Էրզրումի խճուղիին միացող մասը՝ Թավեր գիւղը։ | 4.600 | | | 4.600 | |
| Սարըղամիշի սահմանէն Ալաշկերտի կեդրոն Զիտկիան | 26.300 | | | 26.300 | |

**Բնակչութիւն․**— Ընդհանուր թիւն է 103,562, որուն 56,386–ը այր, 47,176–ը կին։ Քարաքէօսէ գաւառակն ունի 20,476 բնակիչ, Իկտիրը՝ 24,697, Կողբը՝ 11,035, Ալաշկերտը՝ 8277, Տիատինը՝ 11,781, Թուտաքը՝ 5692, Պայազիտի գաւառակը՝ 21,343։ Ծնունդ՝ 1226, որոնց 657–ը մանչ, 569–ը աղջիկ։ Մահ՝ 655, որոնց 353–ը այր, 302–ը կին։ Ամուսնութիւն՝ 212, ամուսնալուծում՝ 4։

**Դպրոց և միութիւններ․**— Կեդրոնի և շրջաններուն մէջ կան մանչերու և աղջկանց վեց նախակրթարաններ՝ 330 աշակերտով։

Քարաքէօսէի, Տիատինի և Թուտաքի մէջ կան Կարմիր Մահիկի, Մանուկներու Պաշտպան, Սաւառնակի ընկերութիւններու մասնաճիւղեր։ Իսկ Քարաքէօսէի մէջ կայ նաև Թիւրք Օճաղըի մասնաճիւղ մը։

## ԵՐԶՆԿԱՅԻ ՆԱՀԱՆԳ

**Սահման և տարածութիւն․**— Արևելքէն՝ Էրզրումի նահանգին Դերջան և Խնուս գաւառակները, արևմուտքէն՝ Սեբաստիոյ նահանգին Զառա, Տիվրիկ, Շապին Գարահիսարի նահանգին Սու Շէհրի գաւառակները, հիւսիսէն՝ Շապին Գարահիսարի Ալուճրա, Կիւմիւշխանէի Շիրան, Քէլքիթ և Բաբերդ գաւառակները, հարաւէն՝ Մալաթիոյ Քէմալիէ, Էլ Ազիզի (Խարբերդ) Խոզաթ և Օվաճըգ և Կէնճ նահանգի Ճապաղջուր գաւառակները։

Տարածութիւնն է 13,720 քառ․ քիլոմետր։

**Վարչական բաժանում․**— Ունի 7 գաւառակներ՝ Երզնկա, Քէմախ, Գուրուչայ, Րէֆահիէ (Կէրճունս), Փլումէր (Գուրուչայ), Քղի, Նազըմիյէ (Քըրք Քիլիսա)։

**Մշակելի հողեր, ցանք և բերք․**— Երզնկա նահանգը 13,720 քառ․ քիլոմետր տարածութիւն ունի, որուն 4192–ը ցանւած է և 9527–ը չէ ցանւած։ Չցանւած հողերու 6549 քառ․ քիլոմետրը լեռնային և քարուտ է․ 586–ը լիճ և ճախճախուտ։ Մնացածը արօտավայր է։

**Ցանք․**— Մէկ տարւան ընթացքին ամբողջ նահանգին մէջ ցանւած է 242,837 արտավար ցորեն, 111,468՝ գարի, 337՝ հաճար, 200՝ եգիպտացորեն, 38՝ կորեկ, 40՝ բակլա, 335՝ գետնախնձոր, 30՝ բամպակ, 1020՝ ոլոռնատունկ, պահւած է 1184 մեղւի փեթակ։

**Բերք․**— 11,214,546 քիլօ ցորեն, 6,724,407 քիլօ գարի, 1,600 քիլօ հաճար, 7,020՝ եգիպտացորեն, 650՝ կորեկ, 260՝ բակլա, 4020՝ գետնախնձոր, 260՝ բամպակ, 14,908 խաղող, 13,246 քիլօ մեղր։

**Ընտանի անասուններ․**— 1587 գրաստ, 1720 գամբիկ, 7511 էշ, 309 ջորի, 609 ուղտ, 29,756 կով, 27,847 եզ, 2725 գոմէշ, 83,625 ոչխար, 111,047 այծ։

Կաթի արտադրութիւնը եղած է 2,510,9280 քիլօ, բուրդ՝ 108,814 քիլօ, այծի մազ՝ 88,948 քիլօ։

Նահանգին մէջ կան երկու գործարաններ՝ մէկը տաղծի՝ հաստատւած 1915–ին, շոգեշարժ, 25 ձիու ուժով, որ մէկ տարւան մէջ արտադրած է 1000 քիլօ տաղձ, միւսը՝ ալիւրի, հիմնւած 1926–ին, 35 ձիու ուժով, որ մէկ տարւան մէջ արտադրած է 2,500,000 քիլօ ալիւր։

**Դրամատուններ․**— Երկրագործական դրամատունը մասնաճիւղեր ունի Երզնկայի, Րէֆահիէի, Քէմախի և Գուրուչայի մէջ։

**Ճամբաներ․**— Երզնկա—Կիւմիւշխանէ—Տրապիզոն (նահանգի սահմ․)՝ 19 քիլոմետր երկարութիւն։ Երզընկա—Էրզրում՝ 67 քիլ․ (որուն 47 քիլ․ը լաւ վիճակի մէջ է, մնացեալը կը նորոգւի), Երզնկա—Սեբաստիա՝ 88 քիլ․, Երզնկա—Քէմախ—Քէմալիյէ—Մալաթիա՝ 110 քիլ․, Մաթիի կամուրջ — Փլումէր—Խարբերդ՝ 90 քիլ․, Րէֆահիյէ—Քէմախ՝ 55 քիլ․, Պէյչայըրը—Քղի՝ 92 քիլ․։

**Հասոյթներ․**— Երզնկայի նահանգի ընդհանուր եկամուտն է 334,944 ոսկի, մասնաւոր եկամուտը՝ 378,295 ոսկի։ Երզնկա քաղաքի թաղապետութեան

digitised by A.R.A.R.@

*եկամուտն է 93,940 ոսկի, Քղիինը՝ 2820, Րէֆահիէինը՝ 1282, Փլոմէրինը՝ 821, Գուրուչայինը՝ 344, Քէմախինը՝ 1500, Նազըմիյէինը՝ 120 ոսկի։*

Բնակչութիւն — *Ընդհանուր թիւն է 133,970 հոգի, որուն 63,942-ը այր, 70,028-ը կին։ Երզնկա գաւառակն ունի 51,789 բնակիչ, Քէմախը՝ 13,349, Րէֆահիյէն՝ 14,150, Քղին՝ 28,094 են։ Մէկ տարւան մէջ ծնած են՝ 1035 հոգի, 597 մանչ, 708 աղջիկ։ Մեռած են 806 հոգի, 619 այր, 187 կին։ Ամուսնացած են 319 հոգի, 258 այր, 61 կին։ Ամուսնալուծում՝ 21։*

Դպրոց և միութիւն — *Երզնկա քաղաքին մէջ կայ միջնակարգ վարժարան մը 94 աշակերտով ու մանչերու և աղջիկներու 28 նախակրթարաններ՝ 1893 աշակերտներով։ Նահանգի միւս մասերուն մէջ կան 31 մանչերու և աղջիկներու նախակրթարաններ՝ 1226 աշակերտով։*

*Նահանգին մէջ մասնաճիւղեր ունին Խալք կուսակցութիւնը, Թիւրք Օճաղըն, Կարմիր Մահիկը, Մանուկներու Պաշտպան ընկերութիւնը։ Կան նաև մարզական և ուսուցչական միութիւններ։ Բոլոր գաւառակներուն մէջ ալ Խալք կուսակցութեան մասնաճիւղեր կան, իսկ Քէմախի մէջ կան Կարմիր Մահիկի և Մանուկներու Պաշտպան միութիւն։*

*Նահանգին կեդրոնը կայ գիշերօթիկ լիսէ մը՝ 450 աշակերտով։*

Առողջական վիճակ — *Նահանգի առողջական վիճակը լաւ է։ Տեղական հիւանդութիւններն են մալարիա, ջերմ, աչքի (թրաքոմա) հիւանդութիւններ և ֆրանկախտ։*

*Երզնկայի մէջ կայ քաղաքային հիւանդանոց մը՝ 50 անկողինով, իսկ գաւառակներուն մէջ մէկ մէկ բուժակայաններ։*

Ջերմուկներ — *Երզնկայի մօտ կան երկու ջերմուկներ՝ Էքշի Սու և Ջերմիկ։*

Ոճիրներ — *Մէկ տարւան մէջ Երզնկա նահանգին մէջ գործւած են 965 ոճիրներ։*

## ԿԻՒՄԻՒՇԽԱՆԷԻ ՆԱՀԱՆԳ

Սահման և տարածութիւն — *Սահմաններն են՝ արևելքէն՝ Տրապիզոնի նահանգին Սիւրմէնէ գաւառակը, հարաւէն Երզնկայի Դերջան և Էրզրումի Սպեր գաւառակները, արևմուտքէն՝ Շապին Գարահիսարի Ալուճա գաւառակը, հիւսիսէն՝ Տրապիզոնի Օֆ, Մաչկա և Սիւրմէնէ գաւառակները։ 1926-ին այս նահանգին միացւած է նաև Բաբերդ գաւառակը։*

*Ընդհանուր տարածութիւնն է 11,095 քառ. քիլոմետր։*

Վարչական բաժանում — *Կիւմիւշխանէի նահանգը բաժնւած է հինգ գաւառակի և ինը գիւղախումբի։ Կեդրոնի գաւառակը՝ Կիւմիւշխանէ ունի 101 գիւղ։*

Մշակելի հող, ցանք և հունձք — *Մշակելի հողի տարածութիւնն է 3700 քառ. քիլոմետր, անմշակը՝ 3197 քառ. քիլոմետր։ 1667 քառ. քիլոմետր քարքարոտ ու ժայռոտ շրջան է։*

*Մէկ տարւան ընթացքին ցանւած է՝ 174,150 արտավար ցորեն, 144,400 արտավար՝ գարի, 162,000՝ հաճար, 17,800՝* պորչազ, *9750 եգիպտացորեն, 4000՝ կորեկ, 5700՝ վիգն, 23,520 գետնախնձոր, 1291՝ լուբիա, 1950՝ ոսպ, պահւած է 52,000 փեթակ մեղր։*

*Հունձք եղած է՝ 3,900,000 քիլօ ցորեն, 5,451,000 քիլօ գարի, 945,000՝ հաճար, 610,000՝* պուրչազ, *176,000 եգիպտացորեն, 170,000 կորեկ, 247,000 վիգն, 375,000՝ գետնախնձոր, 22,000՝ լուբիա, 58,000՝ ոսպ, 158,500՝ սոխ, 45,000 քիլօ ծխախոտ և 103,000 քիլօ մեղր։*

Ընտանի կենդանիներ — *2450 գրաստ, 1170 գամբիկ, 2320 էշ, 15 ուղտ, 31,747 կով, 32,773 եզ, 4193 գոմէշ, 83,389 ոչխար, 51,321 այծ, 316 բրդոտ այծ։ Արտադրութիւն՝ 113,537 քիլօ կաթ, 52,100՝ բուրդ. 1095 քիլօ այծի մազ։*

Անտառներ. — *Ընդհանուր տարածութիւնն է 391,800 հեկտար, մեծ մասամբ պետական, շատ քիչ մասը միայն անհատներու կը պատկանի։ Ծառերը բոլորն ալ յարմար են տաշտի պատրաստութեան։ Մեքենական սղոցարան չկայ. գրեթէ բոլոր տախտակներն ալ ձեռքի սղոցներով կը պատրաստւին։ Ծառերը զանազան տեսակ են՝ եղևնի, կաղնի, չոճի, նշտարի, տօսախ, կաղամախի են։ Մէկ տարւան մէջ անտառներէն կարտադրւի 1500 խորանարդ մետր տախտակ, 25,700 կենդինար փայտ և 18,000 կենդինար կաղնիի և այլ փայտածուխ։*

| *Ճամբաներ ուկիզբ և վախճան* | *երկայնք քիլ.* | *լաւ մասը քիլ.* | *նորոգուող քիլ.* | *դեռ չնորոգուող քիլ.* | *նոր շինուող քիլ.* |
|---|---|---|---|---|---|
| *Զիկանէ լերան գագաթը—Կոփ լերան գագաթը-Տրապիզ. էրզ. ճամբան* | 200 | 80 | 80 | 40 | — |
| *Շիրան—Իքիսու ճամբան* | 75 | 40 | 20 | 15 | — |
| *Փերահմէտ կամուրջէն Քէլքիթ* | 70 | 25 | 20 | 25 | — |
| *Քէլքիթէն Շիրան* | 30 | 15 | 10 | — | 5 |
| *Քէլքիթէն Փիւքէ—Երզնկա* | 40 | 30 | 10 | — | — |
| *Ֆէրուէ գիւղ—Երզնկայի ճամբան.* | 60 | 13 | — | 43 | 4 |
| *Բաբերդ—Շէնդէօլ գիւղ-Օֆի ճամբ.* | 35 | 15 | 20 | — | — |
| *Շիրան-Ֆընտըղլը—Ճէլաղը էլուճրա* | 25 | 10 | 15 | — | — |
| *Սուրաթող-Փէքիւն գիւղ-Մավրանկէլ-Քէլքիթի ճամբան* | 60 | 20 | — | 40 | — |
| *Թուրուլի կամրջագլուխ-Յորչիտ գիւղ—Թուրալ Կէօրթիւլի ճամբան* | 120 | 40 | — | — | 80 |

digitised by A.R.A.R.@

Հանքեր ·— Նահանգին մէջ կան բազմաթիւ հանքեր՝ ոսկիի, արծաթախառն կապարի, պղնձի, մանկանէզի, երկաթի և անագի։ Ժամանակին այս հանքերը կը շահագործուէին և կառավարութիւնը տարեկան 6000 օխա արծաթի, ոսկիի և մեծ քանակութեամբ պղինձի ու կապարի տասանորդ կը գանձէր։ Այժմ բոլոր հանքերը լքուած են։

Գործարաններ ·— Բաբերդի մէջ կայ « Թիւրք անանուն ընկերութեան » պատկանող ալիւրի գործարան մը, որ տարին 3 միլիոն քիլօ ալիւր կ'աղայ․ կայ նաև ալիւրի ուրիշ գործարան մը, որ կը պատկանի Քէֆէլի Զատէի։

Դրամատուններ ·—Կիւմիւշխանէ, Թուրոլ (Էրտէսէ), Քէլքիթ (Չիֆթլիք), Շիրան (Գարաճասու) և Բաբերդ գաւառակներու մէջ Երկրագործական դրամատունը մէկ-մէկ գրասենեակ ունի, հիմնուած 1889 և 1891 թուականներուն։ Իսկ Բաբերդի մէջ Օսմանեան պանքան մասնաճիւղ մը բացած է 1927-ին։

Հասոյթներ ·— Կիւմիւշխանէ նահանգի ընդհանուր հասոյթն է 433,000 ոսկի, մասնաւոր հասոյթը 261,662 ոսկի։ Կեդրոն գաւառակի թաղապետական հասոյթն է 10,127 ոսկի, Բաբերդինը՝ 73,440 են։

Բնակչութիւն ·— Նահանգի բնակչութեան ընդհ․ թիւն է 122,190, որու 57,636-ը այր և 64,554-ը կին։ Կիւմիւշխանէ գաւառակն ունի 23,836 բնակիչ, Բաբերդը՝ 48,842 են։ Մէկ տարուան ծնունդն է 4006, որուն 1975-ը մանչ, 2031-ը աղջիկ։ Մահ՝ 1307, որուն 748-ը այր, 559-ը կին։ Ամուսնութիւն՝ 945, 774-ը կոյս, կամ ամուրի, 171-ը այրի։ Ամուսնալուծում՝ 12։

Դպրոցներ և միութիւններ ·— Կիւմիւշխանէ քաղաքին մէջ կայ միջնակարգ դպրոց մը՝ 40 աշակերտով․ նոյնպէս մանչերու և աղջիկներու 18 նախակրթարաններ 516 աշակերտով։ Նահանգի միւս մասերուն մէջ կան 52 երկու սեռի նախակրթարաններ՝ 1615 աշակերտով։ Նահանգին մէջ մասնաճիւղեր ունին Թալէ կուսակցութիւնը, Թիւրք Օճաղըն, Կարմիր Մահիկը, Սաւառնակի, Մանուկներու Պաշտպան ընկերութիւնները, Երիտասարդ և Ուսուցչական միութիւններ։

Առողջական վիճակ ·— Համաճարակ կամ տեղական հիւանդութիւններ չկան։ Ո՛չ կեդրոնին և ոչ ալ միւս գաւառակներուն մէջ պետական կամ անհատական որևէ հիւանդանոց կայ։ Միայն Կիւմիւշխանէի և Բաբերդի մէջ մէկ-մէկ դեղարաններ կան։ Զօրս բուժարաններ բացուած են։

Ջերմուկ չկայ։ Սակայն թէ կեդրոնին և թէ գաւառակներուն մէջ կան բազմաթիւ հանքային ջուրեր, որոնք չեն տարրալուծուած։

Ոճիրներ ·—Մէկ տարուան մէջ 963 ոճիր գործուած է։

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

(Շարունակելի)

# ԾՐԱԳԻՐ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(խորհրդային «Հնգամեայ հեռանկարային պլանի» առթիւ)

*Ցայտնի է, որ խորհրդային աշխարհում ամէն բան ենթարկուած է ծրագրի․ «պլանը ամէն ինչ է», ասում են խորհրդային տնտեսավարները։ Կեանքի որ ասպարէզ ուզում էք առէք, բայց, մանաւանդ, տնտեսական ասպարէզը — առանց ծրագրի ոչինչ չի կատարւում։ Առաջ վիճակագրական աղիւսակներ, հաշիւ, ապա՝ ծրագիր, «պլան»։ Խորհրդային վարիչները թւերով ու հաշիւներով գիտեն, թէ այսքան տարի յետոյ ի՞նչ է լինելու, օրինակի համար, «խորհրդային էկոնոմիկայի սոցիալիստական սեկտորում», կամ թէ չէ՝ ի՞նչ ուղիով ու թափով է զարգանալու «կոլտնտեսութիւնը խորհրդային էկոնոմիկայի ագրարային սեկտորում», գիտեն, թէ այս ինչ ու այն ինչ թւականին քաղաքի կամ գիւղի տնտեսութիւնը կամ տնտեսութեան այս ու այն «սեկտորը» ի՞նչ «ներգրումներ» է ունենալու — ամէն բան գիտեն առաջուց։ Ի հարկէ, միայն թղթի վրայ։ Տնտեսական թուղթը, ծրագիրը, «պլանը» խորհրդային տնտեսական կեանքի ամենայատկանշական կողմն է։ Վիբիւրոկրատիայի ամենայատկանշական կողմն է։ Վիճակագիրների ամբողջ բանակներ են բանեցւում, «պլան»-ների հատորներ շարադրելու համար, որպէսզի Մոսկւայում յայտնի լինի, թէ, օրինակի համար, սրանից հինգ տարի յետոյ, Տանձատափ գիւղի հաւերը ինչքա՞ն հաւկիթ են ածելու կամ Մոլլա-Դուրսունի կոլտնտեսութիւնը քանի՞ ռուբլի «ներգրում» է անելու։ Չէ՞ որ մարդիկ «սոցիալիզմ են կառուցում», իսկ «սոցիալիզմի կառուցումը» պահանջում է նախ և առաջ «պլան»․ դրամատիրական տնտեսութեան տարերային ընթացքի տեղ հաստատել ծրագրուած, «պլանաչափ» տնտեսակարգ…*

*Այս տեսակէտից, մինչև այժմ կատարուած բոլոր «պլանաւորումների» համեմատութեան չգերազանցուած գլուխ գործոց կարելի է համարել խորհրդ․ տնտեսութեան «5-ամեայ հեռանկարային պլանը»՝ «համամիութենական մասշտաբով», որ ահա քանի ամիս է գրաղեցնում է խորհրդային «հասարակայնութեան» ուշքն ու միտքը և որը խորհուրդների վերջին համագումարի կողմից հաստատուեց իբրև օրէնք։ Այսուհետև Խորհրդ․ Միութեան բովանդակ տնտեսութիւնը ղեկավարւելու է այս ծրագրի գծած ուղիներով ու բովանդակութեամբ,*

digitised by A.R.A.R.@

նրա «առուգիչ թեւերով» ու «ցուցանիշներով»: Հայաստանի տնտեսութիւնն էլ, բնականաբար, ենթակայ է նոյն ծրագրին. չէ՞ որ «Խորհրդային Հայաստանը հանդիսանում է Խորհրդային Հանրապետութիւնների Միութեան օրգանապէս անբաժան և տնտեսապէս ու քաղաքականօրէն միաձոյլ սիստեմի բաղկացուցիչ մասը»*): Կամ, ինչպէս Հայ Ժողկոմխորհի Նախագահ Ս. Տէր-Գաբրիէլեանն էր ասում Հայաստանի Կոմկուսի վեցերորդ համագումարին ներկայացրած իր զեկուցման մէջ**).

«Ամբողջ Միութեան ինդուստրիան հանդիսանում է այն հիմքը, որի վրա կառուցւում է սոցիալիզմը մեր Միութեան մէջ: Այդ պատճառով էլ ամբողջ-մեր (Հայաստանի Ս. Վ.) պլանը, սկզբից մինչև վերջը, տնտեսութեան բոլոր առանձին ճիւղերում պէտք է համաձայնեցւի ամբողջ Միութեան, ինչպէս նաև Անդրկովկասեան Ֆեդերացիայի պլանի հետ: Առանձին կառուցել և կիրառել մեր ծրագիրը, առանձին զարգացնել մեր տնտեսութեան բնագաւառները՝ չհամաձայնեցնելով Միութեան և Անդրկովկասի պլանի հետ, կը նշանակէր մեր տնտեսութեան սոցիալիստական պլանի վիժեցումը, կը նշանակէր կեանքում կիրառել տնտեսական ունիվերսալիզմ, որը վերջին հաշւով տանում է դէպի փակ տնտեսութիւն: Այդ պատճառով էլ ես կրկնում եմ, որ պլանը սկզբից մինչև վերջը համաձայնեցւած կը լինի Միութենական և Անդրկովկասեան պլանի հետ»:

Ցիշեալ «հնգամեայ ծրագրի» մէջ ամենամանրամասն մշակութեան են ենթարկւած խորհրդային տնտեսութեան բոլոր ճիւղերը և ցոյց է տրւած հնգամեայ զարգացման աստիճանաչափը. որոշւած է այն պատկերը, որ խորհրդային տնտեսութիւնը ունենալու է հինգ տարի յետոյ:

«Հնգամեայ ծրագրում» Հայաստանի արդիւնաբերութեան «հեռանկարային զարգացման» համար գծւած են հետևեալ սկզբունքները.

«ա) Ամէն կերպ զարկ տալ հանքարդիւնաբերութեանը՝ առանձին շեշտ դնելով պղնձարդիւնաբերութեան և շինանիւթերի արդիւնաբերութեան գործի վրա:

բ) Էժան էներգետիկ (շարժիչ ույժ. Ս. Վ.) հնարաւորութիւնների հիման վրա զարկ տալ քիմիական արդիւնաբերութեանը:

գ) Զարկ տալ տեղական հումքը (հում նիւթերը. Ս. Վ.) վերամշակող արդիւնաբերութեանը»***):

Այս սկզբունքների կիրառման համար մինչև 1932–33 թւականը կատարւելու են հետևեալ «հիմնական ներդրումները».

Պղնձարդիւնաբերութիւնը, որ 1928-ին ներկայացնում էր 1913ի 43,4 տոկոսը, հինգ տարւայ ընթացքում, ստանալու է 15,200,000 ռուբլի և հնգամեակի վերջին տալու է 8120 տոն պղինձ՝ «գերազանցելով 1913թ. արտադրանքը 70 տոկոսով»:

«Արթիկի տուֆի պրոբլէմի» լուծման համար որոշւած է տալ մօտ 5 միլիոն ռուբլի, չհաշւելով կառուցւելիք երկաթուղագիծը, և 1932–33-ին սպասւում է արտադրել 1,5–2 միլիոն խորանարդ մետր քար:

Անի—պեմզայի (չեչաքար) արտադրութեան յատկացւելու է 1,861,000ռ. և 1932–33-ին յոյս կայ ստանալու 3,016,000ռ. չեչաքար:

Դաւալու գիւղի մօտ շինւելու է ցեմենտի գործարան, որի համար նախատեսւած է 4,200,000ռ. ծախս, հնգամեակի վերջին մօտ 300,000 տակառ ցեմենտ ստանալու ենթադրութեամբ:

Փայտամշակութեան համար որոշւած է յատկացնել 3,750,000ռ.: Երևանում հիմնւելու է փայտամշակման գործարան, Ջանգեզուրում և Սևքարում՝ սղոցարաններ, մի քանի շրջիկ սղոցարաններ և այլն: Այս ձեռնարկների հետևանքով փայտամշակութիւնը 1932–33-ին տալու է 3,332,400ռ. արտադրանք:

Երևանում, Փամբակում և Իջևանում կառուցւելու են գրանիտ և մարմար մշակող գործարաններ, որոնց վրա ծախսւելու է մօտ մէկ միլիոն ռուբլի: Հնգամեակի վերջին արտադրանքի արժէքը հաւասար է լինելու 1,047,000 ռուբլու:

Քոլագերան կայարանում պիտի կառուցւի բազալտ հալող գործարան, որի համար նախատեսւած է 632,000ռ.: Գործարանը շուկայ է հանելու հեռագրի, հեռախօսի և ելեկտրա-փոխադրութեան համար պահանջող մեկուսիչներ (իզոլեատոր):

Նախագծւում են քիմիական արդիւնաբերութեան մի շարք ձեռնարկութիւններ, ինչպէս ցինամիտի գործարանը Ղարաքիլիսայում կամ Քոլագերանում, ծծմբաթթւային և պղնձարջասպի գործարանը Ալլահվերդիում: Նախատեսւում է նաև ընդարձակել Երևանի և Ալլահվերդու կարբիտի գործարանները: Այս նպատակին Ալլահվերդու կարբիտի գործարանները: Այս նպատակին ենթադրւում է յատկացնել մօտ 5 միլիոն ռուբլի:

Հիւսւածեղէնի արդիւնաբերութեան վրա մտադրութիւն կայ ծախսել մօտ 20 միլիոն ռուբլի: 1933-ին Լենինականում պիտի գործէ 100,000 իլիկ, 2500 դազգեահ և տրիկոտաժի գործարան: Նոյն թւականին սպասւում է 48,809,000ռ. արտադրանք այսօրւայ 2,307,900ռ. փոխարէն:

«Համի և սննդի» արդիւնաբերութեան մէջ մտցւելու է 7,800,000ռ.: Ծրագրւում է հիմնել շաքարի գործարան Շիրակում, երկու պահածոյի գործարաններ Երևանում և Աշտարակում, օղայի գործարան Նոր-Բայազէտում: Ենթադրւում է նաև վերակառուցել գինու, կոնեակի և ալքոլի արդիւնաբերութիւնը:

Ապա 768,000ռ. յատկացւելու է Երևանի տպարանների շէնքի աւարտման, 45,000ռ. Երևանի մեքենայական գործարանի աւարտման, 2,070,000ռ., Տանձուտում ծծմբա-երկաթ արտադրելու, մօտ 4 միլիոն երկրաբանական-հետախուզական և գիտական-հետազօտական աշխատանքների:

«Այս բոլոր նպատակները Միութենական Պետպլանի կողմից ընդունւած են, և ամբողջ կապիտալ ծախսերի չափը հնգամեակում նրա կողմից որոշւած է 53,522,100 ռուբլի: Այդ գումարի մէջ են մտնում Ժողտնտխորհի տնօրինութեան տակ գտնւող ամբողջ արդիւնաբերութեան (բացի պղինձից և տուֆից) ծախսերը: ԽՍՀՄ Ժողտնտխորհի կողմից այդ ծախսերը ընդունւած են

*) «Լենինեան Ուղի», 1929, մարտ, էջ 36:

**) «Խորհրդ. Հայաստան», 2 ապրիլ, 1929:

***) «Խորհրդային Հայաստան», 2 ապրիլ, 1929:

digitised by A.R.A.R.@

55 միլիոնի սահմաններում: Պղնձի արդիւնաբերութեան ծախսերի հետ միասին (առանց տուֆի) արդիւնաբերութեան ամբողջ կապիտալ ներդրումները կազմում են 69–74 միլիոն ռուբլի, իսկ եթէ հաշւի առնենք տեղական տնայնագործական և ֆեդերատիւ գծով տրւելիք կապիտալ ներդրումները, այն ժամանակ ծախսերի ընդհանուր գումարը, առանց էլէկտրոֆիկացիայի, կը կազմէ 82,300,000ռ., իսկ էլէկտրոֆիկացիայի հետ միասին՝ 88,200,000 ռուբլի: Վերջին գումարների մէջ չի մտնում արդիւնաբերութեան գծով բնակշինարարութեան համար պլանով նախատեսւած 12,5 միլիոն ռուբլին»*):

Այս շողշողուն թւերը շարելուց յետոյ, Խ. Յովսէփեանը եզրակացնում է.

«Նման ներդրումների հետևանքով արդիւնաբերութեան ընդհանուր արտադրանքը 38,2 միլիոն ռուբլուց 1927–28թ. հասնելու է 155,8 միլիոն ռուբլու 1932–33 թւին — առանց տուֆի — աւել է, թէ աճելու է 307,8 տոկոսով: Իսկ ժողտնտխորհի արդիւնաբերութեան արտադրանքը (առանց էլեկտրո-էներգիայի), որը 1927–28 տարում 1926–27թ. գներով կազմում էր 8,152,700ռ., 1932–33 տարում հասնելու է 75,522,000 ռուբլու»:

Եւ մոռանալով, որ բոլոր այս թւերը, ինչպէս ասում են, «ապագայի երաժշտութիւն են», Յովսէփեանը բացագանչում է հիացած. «Մեր արդիւնաբերութիւնը հսկայական քայլերով առաջ է գնում»...

«Հսկայական քայլերով» առաջ է գնում ո՛չ միայն «քանակական ցուցանիշների» տեսակէտից. «մեր առաջ իրենց ամբողջ մեծութեամբ կանգնած են նաև որակական ցուցանիշները»: Այսինքն, իջնելու է և արտադրանքի ինքնարժէքը, միջին հաշւով, 26,2 տոկոսով: Միւս կողմից, աճելու է աշխատանքի արտադրականութիւնը — 231,2 տոկոս: Յատկապէս պղնձի արդիւնաբերութեան արտադրականութիւնը աճելու է 162 տոկոսով: Բարձրանալու է և աշխատավարձը, միջին չափով, 33,3 տոկոս:

Այս՝ միայն արդիւնաբերութեան ասպարէզում: Նոյնքան փառաւոր ապագայ է խոստանում և գիւղատնտեսութիւնը: «Հայաստանի գիւղական, անտառային և ջրային տնտեսութեան հնգամեայ հեռանկարային պլանի հիմնական ցուցանիշները»**) հետևեալ կերպով են ամփոփւում. «Հնգամեակի ընթացքում իրիգացիոն (ոռոգման) աշխատանքների համար պլանով նախատեսւած է 29,50 հազար ռուբլու հիմնական ներդրում՝ չհաշւելով այդ գումարի մէջ 3,750 հազար ռուբլու ոչ կապիտալ ներդրումները»: Այս գումարով 62,300 հեկտար նոր հող է ոռոգւելու և 12,200 հեկտար հողի ոռոգումն է նորոգւելու:

2,080,000ռ. ծախսւելու է հողաշինարարութեան վրա. «Հողաշինարարական աշխատանքները Հայաստանում ենթադրւում է բոլորովին աւարտել ինը տարւայ ընթացքում»:

«Հողօգտագործման աւելի ռացիոնալ պայմաններ ստեղծելու, այլ և գիւղատնտեսութեան ինտենսիֆիկացման նպատակով հողաշինարարութեան ժամանակ անհրաժեշտ է լինում նոր գիւղեր հիմնելով՝ գիւղացիներին վերաբնակեցնել: Հնգամեակի ընթացքում ենթադրւում է վերաբնակեցնել 10,505 տնտեսութիւն», որի համար պահանջւելու է 1,764,000ռ., մէջը հաշւելով նաև աղղաբնակութեան միջոցները՝ 591,000ռ.:

Բացի այդ, «ենթադրւում է վերաբնակեցնել և բաւարարել հողով 9640 տնտեսութիւն կամ 48,200 շունչ, որից ցուցակագրւած են իբրև փախստականներ՝ 35,000 շունչ, հողազուրկ և սակաւահող՝ 6,400 շունչ և ներգաղթողներ՝ 6,800 շունչ»: Այս նպատակով նախատեսւում է 1,446,000 ռ. և 60,000 հեկտար հող:

Սրանով, ի հարկէ, ոչ գերբնակչութեան հարցն է լուծւելու, ոչ էլ հողի սովն է յագեցում ստանալու: Գերբնակչութեան թիւը Հայաստանում հաշււում է շուրջ 130,000 հոգի, իսկ «գիւղական բնակչութեան իւրաքանչիւր շնչին ընկնում է 0,85 հեկտար տարածութիւն վարելահող և տունկ: Սա միջին նորման է, իսկ առանձին վայրերում այդ նորման աւելի է նւազում. օրինակ, Նախալեռնային շրջանում — 0,27 հեկտարի է հասնում»:

«Գիւղմեքենաների, գործիքների, տրակտորների և տրակտորային պիտոյքների ներածման, նորոգման, նոր արհեստանոցների կահաւորման, այլ և գոյութիւն ունեցողների նորոգման համար նախատեսւում է 6,838 հազար ռուբլի»: Ենթադրւում է Հայաստան ներմուծել 27,000 գութան և 680 տրակտոր. այժմ կայ 214 տրակտոր:

«Գիւղական տնտեսութեան ինդուստրացման համար նախատեսւած կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 9,800 հազար ռուբլի, որից 1,500 հազար ռուբլին յատկացւելու է կոլեկտիւ տնտեսութիւններին, 7,425 հազար ռ. գիւղատնտեսական կօօպերացիային և 875 հազար ռ. խորհրդային տնտեսութիւններին»:

Գիւղի էլեկտրականացման՝ 1,209,000 ռ.:

Պարարտացման՝ 4,944,000 ռ., որից անվերադարձ տրւելու է 200,000 ռ., երկարատև վարկի ձևով՝ 2,372,000 ռ. և կարճատև վարկի ձևով՝ 2,372,000ռ.:

Սերմի ազնւացման՝ 1,300,000 ռ.:

Խաղողագործութեան՝ 3,963,500 ռ.:

Այգեգործութեան և բանջարաբուծութեան՝ 766 հազար ռուբլի:

Հատիկային տնտեսութեան՝ 13,121,500 ռ.:

Կենդանաբուծութեան՝ 17,158,000 ռ.:

Կոլեկտիւ տնտեսութեան՝ 10,022,000 ռ.:

Այս թւերի համապատասխան էլ ցոյց է տրւած տնտեսութիւնների զարգացման «դինամիկան», ինչպէս նաև հնգամեակի վերջում ստացւելիք արդիւնքները: Այսպէս, օրինակ, 1932–33-ին Հայաստանում լինելու է — ո՛չ աւելի, ո՛չ պակաս — 35,800 գլուխ խոզ, 1,523,900 ոչխար, 2,396,000 թռչուն, որոնց «միջին ձւաբերութիւնը լինելու է 60-ից 80 հատ»...

Մենք դիտմամբ երկար կանգ առինք այս թւերի վրա, որպէսզի պարզ լինի, թէ խորհրդային տնտե-

---

*) Խ. Յովսէփեան, «Արդիւնաբերութեան հնգամեայ հեռանկարային պլանի ստուգիչ թւերը», «Խ.Հ.», 2 ապր. 1929:

**) Տե՛ս Ս. Կամսարականի յօդուածը «Խ. Հայաստան»-ի 10 և 11 ապրիլ համարներում, որտեղից անում ենք քաղուածքներ:

digitised by A.R.A.R.@

սավարները ինʼչպիսի փայլուն հմտութիւն են ցոյց տալիս «սոցիալիզմի կառուցման» ասպարէզում. երբ հաւերի ածելիք հաւկիթի թիւն անգամ նախատեսուած է, էլ ի՞նչ կասկած յաջողութեան մասին:

Բոլշեւիկների «հնգամեայ հեռանկարային ծրագիրը» կարող էր հետաքրքրական ուսումնասիրութեան նիւթ դառնալ՝ խորհրդային տնտեսական քաղաքականութեան և Հայաստանի ժողովրդական տնտեսութեան բնորոշման տեսակէտից: Մեր նպատակը, սակայն, այդ չէ: Մենք աշխատեցինք ներկայացնել խորհրդային տնտեսավարութեան ծրագիրը: Նրա արժէքը պարզ կը լինի, եթէ մի քիչ էլ կանգ առնենք նոյն այդ տնտեսավարութեան իրականութեան վրա: Այստեղ էլ, ինչպէս և առաջին դէպքում, խօսք պէտք է տալ իրենց՝ խորհրդային վարիչներին:

Թէ ծրագիրն ու իրականութիւնը խորհրդային պայմաններում ինչպէ՞ս են հաշտւում իրար հետ, հիւթեղ փաստերով ցոյց է տալիս ինքը՝ Անդրժողկոմխորհի նախագահ Էլիաւան Հայաստանի խորհուրդների վեցերորդ համագումարում.

«Ես պէտք է մատնացոյց անեմ, ասում է նա, նաև մեր շինարարութեան թերութիւնների վրա: Այսպէս, օրինակ, Բաթումի հիդրոկայանի կառուցման աշխատանքներն արդէն մի քանի տարի է, որ սկսուել են: Այդ գործի վրա մենք ծախսել ենք 6 միլիոն ռուբլի, բայց ներկայումս ստիպուած ենք եղել դադարեցնել կայարանի կառուցման աշխատանքները: Ինչո՞ւ. որովհետեւ այդ գործն սկսուել է առանց մանրամասն հաշուի, առանց անհրաժեշտ երկրաբանական հետազօտութիւնների, որի հետեւանքով և ներկայումս միայն մենք ստիպուած ենք եղել հիմնական հետազօտութիւն սկսել՝ պարզելու համար, թէ, վերջ ի վերջոյ, ինչքա՞ն գումար է հարկաւոր այդ կայանի կառուցումն աւարտելու համար: Գեանջայի տեկստիլ գործարանի կառուցման համար սկզբից նախատեսուած էր 4,7 միլիոն ռուբլի, սակայն, վերջ ի վերջոյ, այդ գումարը հասաւ 8,3 միլիոնի և միաժամանակ պարզուեց, որ գործարանն ապահովուած չէ էլեկտրօէներգիայով: Թիֆլիսի մահուդի գործարանի համար նախատեսուած էր 2,5 միլիոն ռուբլի, բայց իրապէս գործարանը նստեց 4 միլիոն ռուբլի: Լենինականի հիդրոկայանը, ինչպէս գիտէք, չափազանց էժան էներգիա է մատակարարում, սակայն, կայարանի կառուցման ժամանակ անհրաժեշտ չափով չի նախատեսուել նրա սառչելու վտանգը, և անցեալ ձմրան կայանը սառեց՝ վնաս պատճառելով արդիւնաբերութեան: Մենք Նուխիում կառուցեցինք մետաքսի գործարան, սակայն, յետոյ միայն պարզուեց, որ այդ գործարանը չի ապահովուած անհրաժեշտ հումքով: Սրանք միայն այն փաստերն են, որոնք ստուգուած են մեր Բանգիւղտեսչութեան և թրեստների կողմից: Ես չեմ թւում այն փաստերը, որոնք հրապարակուած են մամուլի մէջ: Չի կարելի այստեղ չնշել այն քաօսը, որ գոյութիւն ունի մեր ջրային տնտեսութեան մէջ: Մեզ մօտ կառուցւում են սառցարաններ, որոնք հսկայական թերութիւններ ունեն: Շատ խոշոր թերութիւններ ունի նաև ոռոգման սիստեմի կառուցումը»*):

Էլիաւայի մերկացումները բաւական տժգունանում են, երբ դառնում ենք Հայաստանի «շինարարութեան թերութիւններին»: Առնենք հէնց պղնձի արդիւնաբերութիւնը, որը Հայաստանի տնտեսութեան առաջնակարգ մէկ ճիւղն է: «Խորհրդային Հայաստան»ը հաղորդում է (7 յուն. 1929), թէ՝ «Զանգեզուրի կոմբինատում ծրագրուած էր արտադրել հանք 12,109 տոն, պղինձ 1400 տոն. արտադրուել է հանք 7150 տոն, կամ ծրագրուածի 59 տոկոսը, պղինձ 666 տոն կամ ծրագրուածի 47 տոկոսը:

Ալլահվերդու կոմբինատում ծրագրուած էր արտադրել հանք 35,128 տոն, պղինձ 1715 տոն. արտադրուել է հանք 32,119 տոն, կամ ծրագրուածի 92 տոկոսը, պղինձ 1385 տոն, կամ ծրագրուածի 80 տոկոսը:

Պղնձի գործարանային ինքնարժէքը (11 ամսուայ միջինը) ըստ նախահաշուի պէտք է լինէր Զանգեզուրում 1024 ռուբլի 65 կոպէկ, հասաւ 1381 ռուբ. 50 կոպէկի. թանգացել է 35 տոկոսով: Ալլահվերդիում ըստ նախահաշուի պէտք է լինէր 928 ռ. 07 կոպ., հասաւ 1004ռ. 15 կոպէկի, կամ 8,2 տոկոսով աւելի թանգ:

Այս տուեալների հիման վրա պղնձի արտադրութեան վնասը (գերածախս նախահաշուի հանդէպ) Զանգեզուրի կոմբինատում կազմում է 235,000 ռ., Ալլահվերդիում՝ 105,300ռ., ընդամէնը երկու կոմբինատում՝ 340,800ռ.: Իսկ ընդհանուր առմամբ, թրեստի 1927–28 տարուայ վնասը, հաշուած նաև վարչական և առեւտրական ծախսերը, վճարուած տոկոսները, կազմում է մօտ 600,000 ռ.: Եթէ դրան աւելացնենք նաև շինարարութեան գերծախսը, որը Զանգեզուրի կոմբինատում կազմում է սահմանուած արժէքի 35 տոկոսը և հանքատեղերի հետազօտման աշխատանքների թանգացումը 15 տոկոսով, ապա թրեստի ամբողջ վնասը շատ կը գերազանցի վերոյիշեալ գումարից»:

Այս է ծրագրի իրագործումը պղնձի արտադրութեան ասպարէզում: Ահա և մի քանի այլ նմոյշներ.

«Արտադրական Ֆինանսական պլանի համաձայն Ալլահվերդիում աշխատավարձի ֆոնդը կազմում էր 511,042 ռուբլի, իսկ փաստօրէն ծախսուել է 588,631 ռ., այսինքն՝ 15 տոկոսով աւելի: Զանգեզուրում աշխատավարձի ֆոնդը կազմում էր 505,000ռ., իսկ փաստօրէն ծախսուել է 610,213ռ., այսինքն 21 տոկոսով աւելի, մինչդեռ արտադրական ծրագիրն իրականացուել է Ալլահվերդիում 80 տոկոսով, Զանգեզուրում՝ 47 տոկոսով»:

Եւ «Խորհրդ. Հայաստան»ում (6 յուն.) դանգատւում են դառնօրէն. «Կանոնաւոր աշխատող մի հանքահատ մեքենայ պէտք է տայ օրական (ութժամեայ աշխատանքի ընթացքում) 400–500 փութ հանք, իսկ մեզանում տալիս է ընդամէնը 200–260 փութ»: Այսինքն, ծրագրուածի կէսը: Ուստի և զարմանալի չէ, որ պղնձի արդիւնաբերութիւնը Հայաստանում հազիւ նախապատերազմեան 43,4 տոկոսին է հասել: Ո՞վ է դրա պատասխանատուն. առարկայական պայմաննե՞րը: Ո՛չ, առարկում է Հայկենտգործկոմի փոխ-նախագահ Հայկ Ազատեանը.

«Պղնձի արդիւնաբերութեան ծանր վիճակը, գրում է նա, որևէ օբիեկտիւ պայմաններով բացատրել ու ինքնարդարացման փորձեր անել չենք կարող: Մեր հա-

---

*) «Խորհրդ. Հայաստան», 9 ապր. 1929:

digitised by A.R.A.R.@

մապատասխան տնտեսական մարմինների անհեռատեսութեանը, անկազմակերպ ու ոչ-պլանային աշխատանքին է վերագրւելու նաև ապրանքի ու կոնեակի արտադրութեան ցած մակարդակը»*)։

Պղնձի արդիւնաբերութեան ասպարէզում նկատւող «թերութիւններին» չատ են նման և խորհրդային տնտեսութիւնների մէջ տիրող կարգերը։ Նոյն Հ. Ազատեանը մեզ պատմում է*).

«Ութ տարի գոյութիւն ունեցող տնտեսութիւնները դեռ այսօր էլ պետութեանը ոչ միայն օգուտ չեն բերում, այլ վնաս են տալիս։ Անցեալ տարի նրանց արտադրանքի ընդհանուր արժէքը 70,709 ռուբլի է եղել, այն ինչ նրանց վրա 97,888 ռ. ծախս է կատարւել։ 243 դեսեատին հող մշակելով մեր գիւղատնտեսութեան սոցիալիստական սեկտորն ուժեղացնել, ի հարկէ, չի կարելի, բայց չի կարելի նաև արդարացնել 27,000 ռ. դեֆիցիտը, երբ այդ տնտեսութիւնները դեռ ևս չի յաջողւել գիւղացիութեան աչքում նախանձի առարկայ դարձնել, գիւղացիութեան համար ռացիոնալ գիւղատնտեսութեան դպրոցների վերածել»։

Այս «շինարարութիւնը» ինչքա՜ն նման է Մոլլա Նասր Էդդին հոջայի առևտրին...

Շարունակե՛նք։ Ահա և Շիրակի հիւսւածեղէնի արդիւնաբերութեան մէջ իշխող պայմանները։

Լենինականի Տեկստիլ կոմբինատի կառավարիչ Գողթունին Լենգաւկոմի 3րդ հերթական պլենումին ներկայացրած զեկուցման մէջ հետևեալ ձևով է բնորոշում հիւսւածեղէնի գործարանի ներկայ վիճակը.

«Տեկստիլն իր հիմնադրման օրից բանւորական ույժ է ձեռք բերել գլխաւորապէս Ամերկոմի մանկատներից և ներկայումս աշխատող բանւորների 75% յիշեալ մանկատների նախկին սաներ են...

Ներկայումս կոմբինատի մանւածքային գործարանում արդէն ունենք 41,000 իլիկ (որոնց մի մասը չի աշխատում), 160 գործւածքային և 120 տրիկոտաժի մեքենայ։ Յայտնի է, որ համաձայն հինգամեայ պլանի իլիկների թիւը հասնելու է 100,000-ի, իսկ 2500 գործւածքային նոր մեքենաների համար մեծ գործարան է կառուցւում։

Աշխատավարձն աստիճանաբար բարձրացել է, և ներկայումս միջին աշխատավարձը 42 ռուբլի է. սա բաւարար համարել, ի հարկէ, չի կարելի, սակայն, աշխատանքի արտադրողականութիւնը նոյնպէս գոհացուցիչ մակարդակի վրա չի գտնւում։ Համեմատաբար բարելաււել են բանւորների բնակարանային պայմանները։ Բացի կոմբինատի կառուցումներից Տեկստիլի բանւորութեան յատկացւեցին քաղաքում կառուցւած 17 տներ։

Խոշոր բաց պէտք է համարել այն, որ կոմբինատը չի ունեցել ռէալ պլան։ Հում նիւթը երբեմն չի համապատասխանում մեքենաներին, և դրա հետևանքով մենք ստիպւած ենք գերմանական որոշ մեքենաներ կանգնեցնել և գործի դնել մեր ունեցած հին մեքենաները։

Կոմբինատին չի յաջողւել ծախսերի իջեցում կատարել և այդ պատճառով ապրանքի ինքնարժէքը չի իջնում։ Խոշոր բաց է այն, որ արտադրութեան նախատեսւած պլանները խոշոր տոկոսով չեն իրագործւել։

Թէ վարչական և թէ տեխնիկական պերսոնալում որակեալ մարդիկ քիչ են եղել։ Մասնագէտներից ոմանք գործին չատ մակերեսօրէն են մօտենում։ Թոյլ է եղել նաև արտադրութեան ստորին հրամկազմի — վարպետների և ենթավարպետների որակը։

Աշխատանքային դիսցիպլինան թոյլ է. պրոգուլները (այսինքն՝ ինքնակամ աշխատանքների չգալը) հասնում են 1,5%-ի։ Աշխատանքի դիսցիպլինան խախտողների թւում խոշոր տոկոս են կազմում կոմերիտականները...

Ռացիոնալիզացիայի ասպարէզում գրեթէ ոչինչ չի արւած, մինչդեռ հրատապ խնդիր է արտադրութեան և ապարատի ռացիոնալ վերակառուցումը»*)։

Ահա բնակարանային շինարարութեան գործը։ «Заря Востока» թերթի ասելով (27 ապր.)՝ Անդրկովկասի 1,494,511 քաղաքային բնակիչների վրա ընկնում է 6,593,752 քառ. մետր բնակարան. միջին թւով մէկ շնչին 4,41 քառ. մետր։ Ըստ հանրապետութիւնների, պատկերը հետևեալն է. Վրաստանում 1928-ին շնչին հասնում էր 5,49 քառ. մետր, Ադրբէջանում՝ 3,99, Հայաստանում՝ 2,54։

Որպէսզի 5 տարւայ ընթացքում բնակարանների չափը հասնի օրէնքով սահմանւած 6 քառ. մետրին, անհրաժեշտ է շինարարութեան վրա ծախսել 516 միլիոն ռուբլի, մի գումար, որ խորհրդային իշխանութիւնը, ի հարկէ, չի կարող ճարել։ Համաձայն հաստատւած հնգամեայ նախահաշւի որոշւած է բնակարանների շինարարութեան յատկացնել 210 միլիոն ռուբլի, այսինքն նւազագոյն պահանջից երկու անգամ պակաս։ Իրականութեան մէջ այս գումարն էլ պէտք է կրճատւի առնւազն 30 տոկոսով, իբրև հետևանք շինարարութեան աստիճանական թանգացման և դրամական արժէքի անկման։ Այս 210 միլիոնը ծախսելով, հինգ տարի յետոյ Ադրբէջանում ամէն մի շնչին բաժին կը հասնի 4,42 քառ. մետր բնակարան, Հայաստանում՝ 3,17, Վրաստանում՝ 5,21։

«Խորհրդ. Հայաստան»-ը (27 մարտ) մտցնում է որոշ ուղղում. Հայաստանում 1927-ին էր մի շնչին հասնում 2,54 քառ. մետր, իսկ 1928-ին՝ աւելի քիչ — 2,51 քառ. մետր։ Որպէսզի հինգ տարի յետոյ, Հայաստանն ունենայ մարդագլուխ 6 քառ. մետր, հարկաւոր է ծախսել 122 միլիոն ռուբլի, մի բան, որ անիրագործելի է։ Ըստ հաստատւած նախահաշւի, ենթադրւում է ծախսել 40 միլիոն ռուբլի։ Երևանից խնդրել էին 45 միլիոն, բայց Թիֆլիսում այդ գումարը իջեցրել են 40 միլիոնի։

Եւ երբ երկրում բնակարանային այսպիսի սով է տիրում, տեսէ՛ք, թէ շինարարական ի՞նչ կարգեր են իշխում այնտեղ։ «Խորհրդ. Հայաստան»ն է (27 մարտ) հաղորդողը.

«Հայաստանի շինարարութեան համար պահանջւած 4 հազար տոն երկաթի դիմաց վերջին բաշխման համաձայն ստացւելու է միայն 1270 տոն։ Ցեմենտ պահանջւած է 1150 վագոն, ստացւելու է ընդամենը 520 վագոն։ Բացի այն, որ չի կատարւում պահանջը լրիւ չափով, խոստացւածն էլ ժամանակին չէ ստացւում։ Այսպէս,

*) «Լենինեան Ուղի», 1928թ. № 11։

*) Նոյն տեղ։

*) «Խորհրդային Հայաստան», 3 ապր. 1929։

digitised by A.R.A.R.@

առ 1 մարտի, համաձայն պլանի, պէտք է ստացւէր 1287 վագոն անտառանիւթ, ստացւել է միայն 587 վագոն· 380 վագոն ցեմենտի դիմաց ստացւել է 97 վագոն· 5 վագոն ապակուց ոչ մի վագոն չի ստացւել· 935 տոն երկաթեղէնի դիմաց ստացւել է ընդամենը 250 տոն և այլն: Այս բոլորը գալիս են վկայելու, որ մեր շինարարութիւնն այս սեզոնում կը հանդիպի խոշոր դժւարութիւնների: Ցեմենտի ու տանիքի թիթեղի փոխարէն առաջարկւած է շինարարութեամբ զբաղւող մարմիններին գործածել կիր ու կղմինտր: Այս բոլորի հետեւանքով շինարարութեամբ զբաղւող մարմիններից մի քանիսը մինչև այժմ շինութիւնների ոչ մի պաշար չեն պատրաստել…

«Համաձայն կենտրոնի հրահանգի՝ առաջին հերթին բաւարարւելու են համամիութենական նշանակութիւն ունեցող ձեռնարկները, երկրորդ հերթին՝ հանրապետական նշանակութիւն ունեցողները, երրորդ հերթին՝ կոմունալ ձեռնարկները և ապա մնացեալ ձեռնարկները»:

Աւել է «մնացեալ ձեռնարկներին»; այսինքն՝ ժողովրդական լայն խաւերին ոչինչ, կամ շատ չնչին բաժին է հասնելու, և առաջին հերթին, ի հարկէ, զրկւելու է գիւղացիութիւնը:

Հայաստանի շինարարութեան մասին խօսւում է և «Заря Востока»-ի 18 ապր· համարում: Երևանից գրում են· «Շինարարական շրջանը դեռ նոր է մօտենում, բայց ստեղծւած դրութիւնը այնքա՜ն անդոհացուցիչ է, որ արդէն հիմա որոշ է կառավարական հրահանգների մեծ մասի մասնակի ձախողումը… անկասկած է, որ շինարարական շրջանը կը սկսւի ծրագրային կարգի խանգարման նշանի տակ… Մի կողմից անորոշ են դրամական հարցերը, միւս կողմից պակասում են շինանիւթեր»: «Բաւարար չափով չեն պատրաստւած նաև աշխատող ուժերը»: «Հանրապետական չափանիշ ունեցող պետական շինարարական կազմակերպութիւնը (Հայպետշին) այս պահուս չունի աշխատանքների հաստատւած ծրագիր: Ծրագիր կազմելու փորձը անցաւ անհետեւանք, որովհետև պարզ չէր ապսպրողների դրամական վիճակը: Պետական շինարարական կազմակերպութեան յանձնւելիք մի շարք ձեռնարկներ չունեն վերջնականապէս հաստատւած նախագծեր, իսկ նախագիծ եղած դէպքում էլ չկան նախահաշիւներ և աշխատանքի յատակագծեր: Այս է կացութիւնը Պետապի կառուցւելիք շէնքի, Անդրկովկասեան Անասնաբուժական ճեմարանի երկու շէնքի, Զորագէսի վարչութեան շէնքի: «Արարատ» թրըստի համար կառուցւելիք մեծ նկուղի ծրագիրը չի աւարտւած, որովհետև փորւելիք փոսի տեղի երկրաբանական ուսումնասիրութիւն չի արւած: Շատ նախագծերի իրագործման համար պահանջւում են վնասաբեր շինւածանիւթեր: Նախագծերի մի մասի հաստատումը ձգձգւում է, որովհետև մանրամասնօրէն մշակւած չեն… Հայպետշինը եկամտական ծրագիր չունի… Պայմանագրութիւնների կնքումը ընթանում է դանդաղ… Բացակայում է և մատակարարման ծրագիրը… Շինարարական շրջանի նախօրեակին շինւածանիւթերի ոչ մի պաշար չունի, եթէ չհաշւենք անցեալ տարւայ փոքրիկ մնացորդները: Տեղական բնոյթ կրող շինւածանիւթերի խնդիրը աւելի լաւ չէ… Նիւթերի որակի մասին խօսելն իսկ աւելորդ է, քանի որ մէջտեղը նիւթ գրեթէ չկայ: Ստացւած է միայն վատ տեսակի փայտեղէն և ցածրորակ ներկ ու երկաթեղէն»:

Մի նմոյշ էլ «տպագրական շինարարութեան» բնագաւառից: «Խորհրդ· Հայաստան»-ը (7 ապրիլ) հաղորդում է·

«Երևանի տպարաններն ընդհանուր առմամբ Հայաստանի խոշոր արդիւնաբերութեան ճիւղերից մէկն են»: Բայց «Երևանի տպարաններում տիրող դիսցիպլինան հսկայական չափով ընկած է: Սիմուլեանտութիւնը (հիւանդ ձևանալը· Ս·Վ·), հայհոյանքները, տուր ու դմփոցը, ծուլութիւնը, գործալքումը, վերջապէս, գործը փչացնելը Երևանի տպարաններում (Հայպոլիտգրաֆ և Պետհրատ) յաճախ կրկնւող երևոյթ են: Էլ չխօսենք ուշացումների և ոչ յարգելի պատճառներով բացակայելու մասին, որովհետև այդպէս վարւողների թիւն աւելի է միւսներից: Իսկ ամենագլխաւորը՝ հարբեցողութիւնը և դրա հետեւանքով հետեւեալ օրը «մախմուր» լինելն է:

Անդիսցիպլինարութեան գործում աւելի շատ աչքի են ընկնում երիտասարդները, դրանց թւում նաև կոմերիտականները, որոնք վարպետների և աւագների հետ յաճախ անտեղի վիճաբանութեան բռնւելով՝ կոււում են, խռովում իրարից: Սակայն, այստեղ «ձեռնպահ» չեն մնում նաև վարպետները, որոնք շատ դէպքում դիտմամբ են վիճում երիտասարդների հետ: Աւելի շատ հարբում են աւագ վարպետները, որոնցից շատերը հարբած են գալիս աշխատանքի»:

Նման փաստերը անհաշիւ են արդիւնաբերութեան բոլոր ճիւղերում և շինարարութեան բոլոր ասպարէզներում: Ինչո՞վ է բացատրւում խորհրդային իշխանութիւնը այս երևոյթները: Ինչպէ՞ս է պայքարում նրանց դէմ:

Որոշ բացատրութիւն փորձում է տալ Հ·Ազատեանը: Նա գրում է· «Մեր պետական արդիւնաբերութեան ասպարէզում կատարւած շատ խոշոր և բոլորին արդէն յայտնի սխալները գլխաւորապէս նրանով են պայմանաւորւում, որ մեր տնտեսական շինարարութեան մէջ մինչև վերջերս բացակայել է պլանային աշխատանքը և տիրապետող է հանդիսացել խմբապետական ռեժիմը: Իսկ ընդունելով այդ վերջին դրութիւնը՝ միաժամանակ ընդունում ենք նաև, որ մեր կազմակերպութեան կենտրոնական ու գաւառային կոմիտէները տնտեսական շինարարութեան խնդիրներով շատ քիչ են զբաղւել և այդ շինարարութեան վրա համապատասխան հսկողութիւն չեն ունեցել: Խմբապետական ռեժիմից էր բխում նաև այն, որ մեր արհմիութիւնները տարիներ շարունակ տնտեսական շինարարութեան խնդիրներով չէին զբաղւում, տնտեսական շինարարութեան մէջ իրենցից պահանջւող մասնակցութիւնը չէին ցուցադրում… Եթէ կուսակցական մասայի և անկուսակցական բանւորութեան ձայնին ականջ դրւէր, 1928 թւականին մենք կանգնած չէինք լինի այն դժւարութիւնների և միանգամայն անհանդուրժելի երևոյթների առաջ, որոնց հանդիպեցինք պղնձի արդիւնաբերութեան երկու կենտրոններում կամ Լենինականի ու նրա շրջանի վերաշինութեան գործում»:

Ու յետոյ· «Մեր սխալներն ու թերութիւնները շատ

digitised by A.R.A.R.@

աւելի խոշոր են եղել գիւղատնտեսական շինարարութեան բնագաւառում: Պլանը և սոցիալիստական հեռանկարներն այստեղ որևէ կշիռ չեն ունեցել: Ճիշտ է. մեր տնտեսութեան հէնց այս ճիւղի նկատմամբ է, որ սոցիալիզմ բառը շատ է հոլովուել, ճիշտ է, այստեղ էլ խոշոր աշխատանքներ են կատարուած, մանաւանդ հողաշինարարական բնագաւառում, բայց և այնպէս գիւղատնտեսութիւնը բարձրացնելու և Խ. Ռուսաստանի կամ Խ. Ուկրայինայի փորձն օգտագործելու ասպարիզում համարեա ոչինչ չէ արուած: Հողժողկոմատի առանձին մարմինները և աշխատակիցներն անվերջ խօսել են մեր շինարարութեան այն էտապների մասին, որոնց հասնելու ենք 10 թէ 15 տարուց յետոյ, բայց մատը մատին չեն խփել, որպէսզի հէնց այժմեան հնարաւորութիւնների օգտագործման միջոցով բարձրացնեն հողի բերրիութիւնը, ազնւացնեն գիւղացու եզն ու կովը և այլն... Գիւղատնտեսութեան բարձրացմանը որոշ չափով խանգարել է նաև մեր կոմիսարիատներից մի քանիսի սխալ քաղաքականութիւնը միջակ գիւղացու նկատմամբ, որին շատ տեղեր կուլակ են յայտարարել և դրանով զրկել նրան իր տնտեսութիւնը բարձրացնելու ամէն մի ստիմուլից»:

Պէտք կա՞յ յաւելումների այս բացատրութեան վրա: Թւում է, թէ այսքանն էլ բաւական է հասկանալու համար, թէ ինչո՞ւ խորհրդային տնտեսութիւնը, Հ. Ազատեանի խօսքով, «Ծապլւարեան սոցիալիզմի» է վերածուել: Ցաջող է ասուած. «Ծապլւարեան սոցիալիզմ»: Այս ցուցանակը կարելի է փակցնել ամբողջ խորհրդային տնտեսութեան ճակատին:

Հասկանալի է, որ դէպի «ծապլւարեան սոցիալիզմը» աշխատաւորութիւնն էլ բացասական վերաբերում է ցոյց տալիս: Այս փաստը մէկից աւելի անգամներ արձանագրել է և Հայաստանի Արհեստակցական Միութիւնների Խորհուրդը — ՀԱՄԽը, որը մարտ 23-ին մի անգամ էլ ընդարձակ դիմումով խնդրում է «բոլոր բանւորներին ու բանւորուհիներին» «բոլոր ոյժն ու եռանդը գործադրել աշխատանքի դիսցիպլինայի ուժեղացման վրա»:

Դիսցիպլինան խախտուած է.

«Ինչպէս ցոյց են տալիս թւերը, մեզանում, Խորհրդային Հայաստանում, ընթացիկ տնտեսական տարւայ առաջին եռամեակի (հոկտ.—դեկտ.) արտադրական ծրագիրը բաւարար չափով չի իրագործուած, սրա հիմնական պատճառներից մէկն է աշխատանքի կարգապահութեան անբաւարար վիճակը, գործալքումները, ուշացումները, հարբեցողութեան և խուլիգանութեան չափերը, վարպետութեան կարգադրութիւնների չկատարելը»:

Այսպէս միայն թշնամին կարող է վերաբերուել դէպի պետական գործը. խորհրդային իշխանութիւնը իրը համարող բանւորութիւնն, ի հարկէ, չէր կարող նման վերաբերում ցոյց տալ: Հարազատութիւն, սեփականատէրի գիտակցութիւն ու սրտցաւութիւն չի նկատւում բանւորի մէջ խորհրդային տնտեսական «շինարարութեան» նկատմամբ:

Խորհրդային «պլանաւորումը» ողբալի հետևանքների է հասցրել և գիւղացիական տնտեսութեան բնագաւառում: Հետաքրքրական է, ի՞նչ արդիւնք է տուել «ագրարային յեղափոխութիւնը» Հայաստանում: Այս հարցին պատասխանում է Հայկոմկուսի Նորընտիր քարտուղար Ա. Խանջեանը Հայկոմկուսի վեցերորդ համագումարում արած զեկուցման մէջ («Խ.Հայաստան», 3 փետր.):

«Ագրարային յեղափոխութիւնը Հայաստանում, ասում է նա, և մեր քաղաքականութիւնը գիւղի վերաբերմամբ առհասարակ հիմնականօրէն փոփոխեցին գիւղի սոցիալական դէմքը և նախապայմաններ ստեղծեցին գիւղական տնտեսութիւնների յետագայ շէրտաւորման Նոր ընթացքի համար: Պրոլետարական յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ գիւղացիական հողօգտագործութեան զգալի լայնացումը (կալւածատիրական, վանքապատկան և պետական մօտ 200,000 դեսեատին հողերի գիւղացիութեան ձեռքն անցնելը*), հողահաւասարեցումը կուլակային և ունևոր տնտեսութիւնների հաշւին յօգուտ սակաւահող և հողազուրկ տնտեսութիւնների), չքաւոր տնտեսութիւններին ցոյց տրւող նիւթական և վարկային աջակցութիւնը, դասակարգային քաղաքականութիւնը հարկաւորման և այլ աշխատանքների ասպարէզներում արդիւնք ունեցան գիւղացիական լայն մասաների տնտեսական դրութեան համեմատական բարելաւումը և գիւղացիութեան միջին շերտի զգալի ընդլայնումը»:

Ահա և «համեմատական բարելաւումը» ցուցադրող թւեր.

«Ըստ ԿՎՎ (Կենտր. Վիճակ. Վարչ. Մ. Վ.) 10 տոկոսային ընտրովի վիճակագրութեան արդիւնքների, մենք ունէինք Հայաստանում.

| | 1925թ. | 1926թ. | 1927թ. |
|---|---|---|---|
| Ցանքազուրկ տնտեսութիւններ | 17,7% | 15,9% | 13,5% |
| Մինչ 1 դես. ցանք ունեցողներ | 36,7% | 15,9% | 34,5% |
| 1-ից մինչև 3 դես. ունեցողներ | 36,1% | 39,1% | 39,1% |
| 3-ից մինչև 6 դես. ունեցողներ | 8,1% | 9,4% | 10,5% |
| 6 և աւելի դես. ունեցողներ | 1,4% | 1,8% | 2,5% |
| Տնտեսութիւն առանց անասունի | — | 19,8% | 15,2% |
| Տնտեսութիւն առանց լծկանի | 55,4% | 48 % | 37,5% |
| Տնտես. առանց գիւղինվենտարի | 63,1% | 55,8% | 46,7% |

Փորձեցէ՛ք թափանցել այս թւերի մէջ և պարզել իմաստը «համեմատական բարելաւման»: Հարիւրին երեսուն և եօթն ու կէս տնտեսութիւն Հայաստանի գիւղերում լծկան չունի, 46,7 տնտեսութիւն զուրկ է գիւղատնտեսական կայքից՝ արօրից ու ցաքանից, սայլից ու կալսիչից և 15,2 տնտեսութիւն բոլորովին անասուն չունի: Ինչո՞ւմն է հապա այդ թշւառների «տնտեսագործութեան» ոյժը, ինչո՞վ են ճարում իրենց հանապազօրեայ հացը և «նեցուկ հանդիսանում» խորհրդային իշխանութեան:

Միւս կողմից շատ հետաքրքրական է հայ գիւղացիութեան շերտաւորման պատկերը. եթէ « միջին շերտ » ասելով հասկացւում է 1-ից մինչև 3 դեսեատին ունեցող խաւը, ապա 3-ից աւելի ունեցողը արդէն կուլակ է, այսինքն՝ շահագործող, վաշխառու և այլն:

---

*) Այդ հողերը գիւղացիութեան ձեռքն անցել էին դեռ 1920թ. ամառը, «դաշնակ»-ների իշխանութեան օրով:

ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@

Ասել է, միջին առումով, 4–5 դեսեատին ցանքս ունեցողը մեր երկրում կուլակ է, մինչ 4–5 դեսեատինը մի ընտանիքի համար տարրական բարեկեցութիւնն իսկ ապահովող չափ չէ:

Հետաքրքրական է և տարբերութիւնը «աղքատի» ու «միջակի» միջև — մէկից երկու դեսեատին: Ուրիշ խօսքով, «միջակ» կոչուածը Հայաստանում աղքատ, օրուայ հացի կարօտ գիւղացի է:

Նոյնն է և ընդհանուր պատկերը. ԿՎՎ–ի թւերը վկայում են, որ Հայաստանում վաշխառուական, կուլակային տնտեսութիւն գրեթէ գոյութիւն չունի: Եւ, առհասարակ, աննշան է չքաւորման աստիճանն ու խաւերի տարբերութիւնը. հաւասարութիւնը համարեա թէ կատարեալ է — հաւասարութիւն աղքատութեան և թշուառութեան մէջ: Ա՛յս է բոլշեւիկների «ագրարային յեղափոխութեան» իրական արդիւնքը:

Այս թշուառութիւնը աւելի ցայտուն է դառնում, երբ լսում ենք Հայժողկոմխորհի նախագահ Ս. Տէր-Գաբրիէլեանի հաղորդած թւերը.

«Ցոյց տալու համար, թէ ի՞նչ դրութեան մէջ է գիւղատնտեսութիւնը, ասում էր նա Հայկոմկուսի վերջին համագումարում, ես ցանկանում եմ բերել թւեր, որոնք տրուած են Կենտրոնական Վիճակագրական Վարչութեան կողմից: Մեզ մօտ ամենահացառատ շրջանը համարւում է Լենինականը... Լենինականի գաւառի գիւղական բոլոր տնտեսութիւնների 86,6 տոկոսը աշխատում է արօրով... Դարալագեազի գաւառում հողը 99 տոկոսով մշակում են արօրով, Լոռի–Փամբակի՝ 54%, Զանգեզուրի՝ 66%, Էջմիածնի բամբակացանի շրջանում՝ 48%»*):

Զութի տիրապետութեան այս խաւար աշխարհում է ահա, որ բոլշեւիկները զբաղուած են «սոցիալիզմի կառուցումով»...

«Սոցիալիզմի կառուցման» մի օրինակ էլ կարող է ծառայել բրնձի մշակութիւնը: Խօսքը տանք «Խորհրդ. Հայաստան»–ին (2 ապրիլ). — Մալարիայի վտանգից դրդուած, 1923թ. մայիս 21–ին, խորհրդային կառավարութիւնը յատուկ դեկրետով արգելեց բրնձի մշակութիւնը Հայաստանի սահմաններում: Այդ արգելքի հետևանքով բրնձի արտադրութիւնը գրեթէ վերջացաւ: Այսպէս, 1913 թւին Հայաստանի ներկայ տարածութեան վրա ցանւել էր 3,277 հեկտար բրինձ և ստացւել էր 6,854 տոն, որից 5,307 տոնը հանւել էր շուկայ, 1928–ին ցանւել է միայն 109 հեկտար, որից ստացւած 229 տոնից շուկայ է հանւել 115 տոն: Հայաստանը, որ բրինձ արտածող երկիր էր, այժմ բրինձ է ներմուծում Պարսկաստանից: 1913–ին մէկ տոն բրինձը Հայաստանում արժէր 61 ռուբլի 05 կոպ., իսկ 1927–ին՝ 174 ռ. 60 կ. Ներկայումս՝ է՛լ աւելի թանգ: Բրնձամշակութեան արգելքով Հայաստանի ժողովրդական տնտեսութիւնը ամէն տարի կորցնում է մօտ մէկ ու կէս միլիոն ռուբլի: Մինչ անդին, Ադրբէջանում, բրնձի մշակութիւնը ոչ միայն արգելուած չէ, այլ և տարէց տարի զարգանում է:

Մալարիայից աւելի բրինձ ցանելու արգելքին նպաստել է այն մտածումը, որ բրնձից ազատ մնացած հողերը կը յատկացւեն բամբակամշակութեան: Փաստը, սակայն, այս յոյսն էլ չարդարացրեց. ներկայ Հայաստանի սահմաններում 1913–ին բամբակ ցանւած էր 15,296 հեկտար, 1924–ին՝ 15,284 հեկտար, 1925–ին՝ 16,501 հեկ., 1926–ին՝ 12,714 հեկ., և 1928–ին՝ 14,422 հեկտար: Ուրեմն, ոչ միայն բրնձի հողերը բամբակի չեն յատկացւած, այլ բամբակացանքսն էլ կրճատւած է:

Բայց, գուցէ, բրնձի հողի վրա ցորե՞ն է ցանւած: Այդ էլ ճիշտ չէ. 1913–ին ներկայ Հայաստանում կար 291,271 հեկտար ցորենի ցանքս, 1924–ին՝ 220,662 հ., 1925–ին՝ 235,277 հ., 1926–ին՝ 249,514 հ. և 1928–ին՝ 273,954 հեկտար: Բրնձի հողը, մեծ մասամբ, յատկացւել է բոստանի, որ ժողովրդական տնտեսութեան ամենաանարժէք ճիւղերից մէկն է:

«Թերութիւնների» բնոյթը նոյնն է և աշխատանքի ասպարէզում. բոլշեւիկները ճառում են «արդիւնաբերութեան յաղթական վերելքի» մասին, իսկ ԿՎՎի թւերը անողոք քարսրտութեամբ արձանագրում են աշխատաւորութեան թշուառութիւնը և գործազրկութեան յարաճուն զարգացումը: Հայաստանի պէս սակաւաթիւ բանւորութիւն ունեցող մի երկրում այսօր 12,000 գործազուրկներ կան, որոնց Աշխատանքի Բորսան չի կարողանում գործ հայթայթել: Եւ այս թիւը դեռ աննշան մասն է այն բազմութեան, որ ամէն տարի պանդխտութեան է դիմում մի կտոր չոր հաց վաստակելու յուսով: Մենք դեռ չենք խօսում աշխատավարձի ողորմելի չափի մասին. վերև տեսանք, որ Լենինականի հիւսածեղէնի գործարանում, որը Հայաստանի առաջնակարգ ձեռնարկն է համարւում, աշխատավարձի միջին չափը 42 ռուբլի է, այսինքն, խորհրդային դրամի պաշտօնական արժէքով, շուրջ 500 Ֆրանկ կամ 20 դոլար (իրապէս խորհրդային դրամը այժմ չորս անգամ պակաս արժէ): Ինչպէ՞ս կարելի է այդ աշխատավարձով ապրել Հայաստանում, ուր ապրուստը աւելի թանգ է, քան եւրոպական որևէ երկրում:

Հետևեալ աղիւսակը ցոյց է տալիս Հայաստանի գործազուրկների «դինամիկան»:

| Գործազրկութիւնը | 1925/26 | 1926/27 | 1927/28 | 1928/29 |
|---|---|---|---|---|
| Հողի և անտառի աշխատաւորներ | 959 | 1,786 | 3,085 | 3,791 |
| Արդիւնաբերական ,, | 1,543 | 1,512 | 1,776 | 1,300 |
| Շինարարական ,, | 615 | 1,382 | 2,171 | 1,690 |
| Փոխադրական և կապի ,, | 231 | 403 | 484 | 545 |
| | 3,354 | 5,083 | 7,516 | 7,326 |
| Մտաւոր աշխատաւորներ | 1,399 | 2,078 | 2,680 | 3,132 |
| Այլ և այլ ,, | 444 | 730 | 778 | 704 |
| Առաջին անգամ գործ փնտռողներ | 1,828 | 1,552 | 754 | 754 |
| Համագումար | 7,025 | 9,443 | 11,728 | 11,916 |
| Որից Երևանում և Լենինականում | 5,853 | 6,411 | 6,650 | 6,209 |

Աչքի է զարնում առանձնապէս «մտաւոր աշխատաւորների» շատութիւնը և նրանց թւի արագ աճումը: Մի հանգամանք, որ հաստատում է այն դժոխային վիճակը, որի մէջ ապրում է մտաւորականութիւնը Հայաստանում:

---

Այսքանը, մեզ թւում է, բաւական է հաստատելու համար, որ խորհրդային աշխահում այլ բան է ծրագի–

*) «Խորհրդ. Հայաստան», 1 փետր. 1929:

digitised by A.R.A.R.@

րը, այլ բան իրականութիւնը: Եթէ բոլշեւիկների կազմած ծրագիրներին նայելու լինես, աշխարհիս ամենայառաջադէմ, բարեկեցիկ, տնտեսապէս լաւ կազմակերպուած, արագ զարգացող երկիրը Խորհրդային Միութիւնն է իր ստորաբաժանումներով: Երբ մօտից ծանօթանում ես այդ ծրագիրների գործադրութեանը, թափանցում ես խորհրդային իրականութեան խորքերը, տարսափում ես առջեդ բացուած ահաւոր տեսարանից. աշխարհիս երեսին չկայ աւելի յետամնաց ու խեղճ, աւելի վատ կազմակերպուած տնտեսութիւն, քան խորհրդային տնտեսութիւնն է, չկայ աւելի հարստահարուած ու թշուառ աշխատաւորութիւն, քան խորհրդային աշխատաւորութիւնը:

Ս. Վ.

# ԹԻՒՐՔԻՈՅ ՑՈՒՐՋ

Երեւութապէս խաղաղ է քեմալական Թիւրքիան և նուիրուած՝ շինարարական աշխատանքներու, ինչպէս իր հարեւանն ու գինակիցը, Խորհրդային Միութիւնը: Դեռ նոր, Ազգային Մեծ Ժողովը 140 միլիոն ոսկիի վարկ մը քուէարկեց, երկաթուղիներ շինելու համար Սըվազ-Երզնկա-Էրզրում, Ատափազար-Պոլու-Պայանտըր և Ֆիլիոս-Էրէյլի ուղղութեամբ. ինչպէս և նոր նաւահանգիստներ ու քարափներ՝ Սամսոնի, Մերսինի, Էրէյլիի, Տրապիզոնի և Ինէպոլուի մէջ: Հարիւր միլիոնի ուրիշ վարկ մըն ալ քուէարկուեցաւ, գետային նաւարկութեան համար:

Թիւրք մամուլին մէջ անպակաս են այս կարգի աւետիսներ, որոնց իրականացման համար ամէն բանէ առաջ խաղաղութեան և դրամի կը կարօտի Էնկիւրին:

Այս տարուան ելեւմտացոյցն ալ զգալի յաւելում կը ցուցնէ,— 18 միլիոն ոսկի: Մուտքն է՝ 230,546,000 ոսկի, ելքը՝ 220,408,481: Ելքի գումարին մէջ նորէն խոշոր տեղ մը կը բռնէ ազգային պաշտպանութիւնը, բաժնուած՝ զանազան գլուխներու: Այսպէս, բուն ազգային պաշտպանութիւն (ցամաքային) յատկացուած է 56,372,208 ոսկի. ծովային ճիւղին՝ 6,183,354, օդային ուժին՝ 1,215,980, պատերազմական շինութեանց՝ 4,842,389, քարտէսներու պատրաստութեան՝ 681,526: Ազգային Պաշտպանութեան մաս համարելով նաև ոստիկան-զօրքի ճիւղը (8,945,948 ոսկի) և Ապահովութեան տեսչութիւնը (4,529,948 ոսկի), կունենանք 82,700,000 ոսկիի պատկառելի գումար մը՝ 220 միլիոնի մէջ: Այնպէս որ, կեղծիք է ելմտական գործավարին այն հաւաստիքը թէ Թիւրքիան կը հետեւի խաղաղասիրական քաղաքականութեան մը և թէ երկու միլիոն ոսկի խնայած է ազգային պաշտպանութեան գլուխէն:

Անցեալ տարի, ազգային պաշտպանութեան բաժինը կը հաշուէին 67,614,948 ոսկի (պատերազմական, ծովային գործավարութեան և ռազմական պիտոյքներ), և այս առթիւ պահպանողական «Իգտամ»-ը դիտել կուտար թէ այս գումարը ելմտացոյցին կէսը կը կլանէ, մինչդեռ հողագործութեան յատկացուած է 3,927,205 ոսկի, հանրային կրթութեան՝ 6,558,000. «չնչին գումարներ, որոնց հետեւանքները կրնան աղիտալի ըլլալ ապագային համար: Այսպիսի երկիր մը կրնա՞յ փստահիլ իր ապագային: Որքան ալ լաւ տրամադրութիւններ ունենանք և որքան ալ լաւ աշխատենք, կարելի չէ 4 միլիոն ոսկիով բարելաւել մեր հողագործութիւնը և վեց ու կէս միլիոնով՝ մեր հանրային կրթութիւնը: Հարկ է ամենաքիչը քսան միլիոն յատկացնել հողագործութեան և տասը միլիոն՝ կրթութեան»:

Ինչպէս կերեւայ, կառավարութիւնը այս տարի ալ նկատի չէ առած «Իգտամ»-ի խելօք խրատները, քանի որ կրթական գործին համար նախատեսուած է միայն 8,100,000 ոսկի, որուն 1,450,000 ոսկին յատկացուած է նոր տառերու ընդհանրացման:

Ելմտացոյցին մէջ ուշագրաւ գլուխ մը կը կազմէ նաև գաղթականներու զետեղման բաժինը, որու համար նախատեսուած է 1,460,690 ոսկի, ինչ որ զգալի յաւելում մը կը նշանակէ նախորդին վրայ:

Ամէն տարուան պէս, այս անգամ ալ ելմտացոյցը հաւասարակշռուած է, անշուշտ, թուղթի վրայ: Եկամուտի հիմնական աղբիւրը կը կազմեն տուրքերը, որոնց բարդութեան և ծանրութեան մասին գաղափար կազմելու համար, կը բաւէ տեսնել Պոլսէն հասած ո՛և է ճամբորդի հետ: Առաջ Անատոլուի գիւղացին էր, որ կը հեւար տուրքերու բեռին տակ: Ան չէ ազատած նորէն, հակառակ զանազան բարեփոխումներու, իսկ առեւտրական կեդրոնները, և բուն առեւտրական դասը՝ Պոլսէն սկսելով, մատնուած է այնպիսի վիճակի մը, որ իր նախընթացը չունի Թիւրքիոյ մէջ: Սովորական անանկութիւններէն զատ, ամէն օր խանութ և վաճառատուն կը փակուի, իբրև կարճ միջոց՝ տուրքերու բեռը թօթուելու: Խորհրդային կարգերը չեն, որ կը տիրեն Թիւրքիոյ մէջ, բայց հարկահանութեան ձեւը շատ ալ տարբերութիւն չունի ռուսական ձեւերէն:

Այս կացութեան հետեւանքով, ոչ միայն օրէ օր կը սաստկանայ առեւտրական տագնապը (ստերլինի գինը անցաւ հազար ղրուշը), այլ և անտանելի չափերու կը հասնի ապրուստի սղութիւնը: Քեմալական մամուլը

digitised by A.R.A.R.@

աղչութեան մատնուած է, իմանալով որ ամենէն աժան բանջարեղէնին, մէկ օխա բակլայի գինը 30-35 ղչ· է Պոլսոյ մէջ, իսկ 100 փարա՝ Ատանայի մէջ: «Աշխարհի մէջ չկայ տեղ մը, ուր երկաթուղիով իրարու կապուած երկու քաղաքներու միջև գիներու այսքան տարբերութիւն գտնուի»: (Ազգամ):

Մամուլը չի ծածկեր իր դժգոհութիւնը՝ տուրքերու ծանրութեան դէմ, և անոր կը վերագրէ ապրուստի սղութիւնը: Օրինակ՝ շաքարը: Տնտեսական բարձրագոյն խորհուրդը հաշուած է որ մէկ քիլօ շաքարը (մեծաքանակ) 45 ղչ.-ի կառնուի, բայց իւրաքանչիւր քիլօին 26 ղչ· տուրք կը գանձուի (3·80 մաքս, 15 ղչ· սպառման տուրք, 8 ղչ· մենաշնորհի տուրք), «այսինքն արժեգնին հաւասար տուրք»: «Վագըթ» արդարացնելով հանդերձ կառավարութեան քաղաքականութիւնը, կը հաստատէ որ տուրքերու ծանրութեան հետևանք է ապրուստի սղութիւնը·

— «Քանի մը տարիէ ի վեր տիրող երաշտութիւնը ստիպեց ուշադրութիւն դարձնել ջուրի գործերուն վրա: Թիւրք ազգային ելևմտական վարկը փրկելու համար համաձայնութիւն գոյացաւ պարտատէրերուն հետ: Մէկ կողմէ հարկ է գոհացում տալ երկրին վարչական պէտքերուն, միւս կողմէ միլիոններ ծախսել, երկաթուղիներ շինելու և երկիրը օժտելու համար քաղաքակրթութեան ամենէն արդիական միջոցներով: Այս միլիոնները տուրքի ձևով պիտի ելլեն ազգին գըրպանէն և այս պատճառով յառաջ պիտի գայ քիչ-շատ սղութիւն ապրուստի: Հետևաբար, չիտակ չէ թէ քաղաքակիրթ երկիրներու յատուկ գործեր սպասել կառավարութենէն և թէ պահանջել որ «տուրքերը գեղջւին, որովհետև ապրուստի սղութիւն կայ»: Բայց երբեք անհրաժեշտ սննդեղէններ կան, հաց, միս և շաքար, զորս որքան աժան կարենայ հայթայթել ժողովուրդը, այնքան կը դիւրանայ անոր ապրուստը»:

Այս՝ դեռ Պոլսոյ պատկերն է: Տարիներով Անատոլու ապրած իրազեկ մը, որ վերջերս յաջողած էր արտասահման ապաստանիլ, թւանշաններով կը ներկայացնէ Խարբերդ-Մալաթիա-Սեբաստիա շրջանին տնտեսական պատկերը: 1925-ին, այդ արգասաբեր նահանգներուն մէջ ցորենի 12 օխան կարժէր 110 ղրուշ, 926-ին՝ բարձրացաւ 180-ի, 1927-ին՝ 240-ի, 1928ին՝ 290-ի, իսկ այսօր կարժէ 350: Գարիի տասը օխան նոյն թւականներուն հասաւ 35 ղչ.-էն 60-ի, 85-ի, 136-ի և 210ի: Լուբիան՝ (12 օխա) 75էն՝ 90ի, 160ի, 280ի, 630ի, միսը՝ (օխան) 18էն 78ի, պանիրը՝ (օխան) 15էն 80ի, բուրդը (օխան)՝ 50էն՝ 210ի ևն.: Սամսոնի նաւահանգիստը յանձնելի 20 ղրուշի իտալական շաքարը 86 ղրուշի կը ծախուի Սեբաստիոյ մէջ (42 ղչ· տուրքով), իսկ 12 ղրուշի գնուած քարիւղը՝ 100 ղրուշի կը ծախուի Խարբերդի մէջ:

Ահա թէ ի՛նչպէս ինքն իր մէջ կը տապկւի Թիւրքիոյ սիրտը, անծայրածիր Անատոլուն, որ կրնար 60 միլիոն մարդ կերակրել, «Թայմզ»ի մէկ թղթակցին հաշւով, բայց ոչ իսկ 8 միլիոնի բեռին կը դիմանայ:

«Ընդարձակ տարածութիւններ անմշակ կը մնան պատերազմէն ի վեր: Ուրֆայի և Այնթապի շուրջը, նոյնիսկ Ատանայի շրջակաները կը փռւին ամայի դաշտեր և աւերակ գիւղեր: Էնկիւրիէն Էսկիշէհիր 300 մղոն տարածութիւնը կը մնայ ամայի: Թիւրքիան գերազանցապէս հողագործական երկիր է, և սակայն կառավարութիւնը հարկադրւած է ալիւր ներածել: Գիւղերուն մէջ գիւղացիները աղքատ են անհաւատալի կոչւելու աստիճան: Ատանայի դաշտը որ, եթէ պէտք եղածին պէս մշակւէր, կրնար այնքան հարստութիւն արտադրել որքան Եգիպտոսը, հազիւ ակօսւած է և քիչ մը չոր բամպակ կարտադրէ: 1927ի հունձքը միջակէն 25% պակաս էր, իսկ 1928ի հունձքը ձախողեցաւ, որովհետև երաշտ մը փճացուց ցորենին և գարիին մեծ մասը: Գոնիայի շրջանին մէջ, բացի այն մասէն, ուր Գերմանները ոռոգում կատարած էին, ամբողջ տարածութիւններ լքւած են ջուրի պակասէն»: Թայմզ, 23, Մարտ 1929):

* * *

Կարելի չէ ուրանալ որ, երկաթուղիներու և ճամբաներու շինութեան հետ զուգընթաց, Էնկիւրի յառաջ կը տանի գաղթականներու տեղաւորման գործը: Բայց ոչ իր ուզածին պէս: Սեբաստիայէն անդին, մինչև կովկասեան և պարսկական սահմանները, աւերներ են, որ կը յածին: Տնտեսական ձեռնարկներն ալ կանգ կառնեն կեդրոնական նահանգներուն մէջ, սկսելով ծովափներէն կամ յանգելով ծովափ, հակառակ շռայլ խոստումներու կամ սպառնալիքներու: Փաստ է, որ մաքսային պաշտօնեաներն անգամ չեն ուզեր արևելեան նահանգներն երթալ, և կը նախընտրեն հրաժարիլ իրենց պաշտօններէն: Մաքսային վերատեսչութիւնը վերջերս որոշած էր Պոլսէն այդ նահանգները ղրկել շարք մը պաշտօնեաներ, և անոնց փոխարէն պաշտօնի կոչել Անատոլուի խորերը մնացած պաշտօնեաները: Ինչպէս պետական պաշտօնատարներն ու վարժապետները, Թիւրք «մաքսաւոր»ներն ալ բաւական խելք ունին, իրենց ողջ գլուխը Գուրանին տակ չդնելու համար· մանաւանդ որ, ոչ միայն վաղւան անակնկալը մղձաւանջի մը պէս կը ցցւի իրենց աչքին առջև, այլ և քաջ ծանօթ են այսօրւան վիճակին,— բացարձակ անապահովութեան և թշւառութեան: 1922-էն ի վեր մշակւած խոշոր ծրագիրները՝ գաղթականներ տեղաւորելու համար,— կը մնան թուղթի վրա: Ոչ Բալկանի Թիւրքը կերթայ Վան, ոչ ալ Հարաւի Կովկասցին կուզէ շարժիլ տեղէն: Ի հարկէ, Թիւրքիան անսահման երկիր է, և տեղ չի պակսիր հարիւր հազարաւոր գաղթականներու համար: Բայց, «արևելեան նահանգները» կը մնան միշտ ամայի ու աւերակ: Եւ այդ աւերակներուն վրա, այդ ամայութեան մէջ կը լսւի նորէն մէկ ձայն,— Թիւրք հեծելազօրքին երթևեկը մէկ դիրքէն միւսը, փոխադրութիւն զօրքի և ռազմամթերքի, փոփոխութիւն հրամանատարներու և շարքերու: Պատերազմական վիճակ՝ առանց թնդանօթի որոտման: Ջղագրգիռ անձկութիւն՝ քրդական վտանգին հանդէպ:

Եւ բոլորովին անտեղի չէ այդ անձկութիւնը: Հակառակ բոլոր սարսափներուն կամ ընդհանուր ներումներուն, երկու ոսոխները կանգնած են դէմ դիմաց, և մէկը միւսը կը հետապնդէ վճռական հարւածը տալու համար: Էնկիւրի վերջերս շատ կը զբաղի արևելեան ճակատով, և պահ մը լուր տարածւեցաւ

digitised by A.R.A.R.@

թէ սուր տագնապ մը կը տիրէ դահլիճին մէջ, մանաւանդ, որ Փարիզէն յատկապէս կանչուած էր դեսպան Ցէթհի պէյը։ Այս նոյն մարդը, 1925–ին, մերժեց Քիւրտերու արիւնով «արատաւորել» իր ձեռքերը, և քշուեցաւ Փարիզ, իր տեղը տալով Ըմէթի։ Երևի նորէն ամուր կեցած է իր տեսակէտին վրա, և միևնոյն դահլիճին կը մնայ շարունակել քրտական հարցին հաշուեյարդարը, համոզելով, կաշառելով, կամ նորէն շողացնելով սուրը։

Իրողութիւնը այն է որ Էնկիւրի զինուորական համախմբումներ կը կատարէ քրտական ճակատին վրա, կը տեղափոխէ քիւրտ կամ այլացեղ կասկածելի զինուորները և նոյնիսկ հաւանական ռազմադաշտը փոխադրած է բանակի քննիչներէն Ցախրի փաշան։ Վերջերս Թոքատի զօրքերը փոխադրուած են Խարբերդ, իսկ Տիգրանակերտը գրաւած է քեմալական կառավարութեան մասնաւոր ուշադրութիւնը։

Միւս կողմէ, քիւրտ ժողովուրդը, խրատուած՝ 1925–ի դէպքերէն և ընդհանուր ներումներու խեղկատակութենէն, և ականատես՝ այս խորհրդաւոր շարժումներուն, բնազդաբար կը զգայ թէ իր գլխուն ալ պիտի պայթի ա՛յն ինչ որ խորտակեց Թիւրքիոյ հայ ժողովուրդին ողնաշարը, իր իսկ մեղսակցութեամբ... Տասը հատոր յեղափոխական գրականութիւն կարժէն Շէյխ Սայիտի ապստամբութեան զսպումէն մինչև հիմա պատահած դէպքերը, կախաղաններէն, ջարդերէն և տեղահանութիւններէն մինչև ներկայ «խաղաղ» մաքրագործումը։ Կը թուի թէ առանց մասնաւոր կազմակերպութեան ալ, քիւրտ ժողովուրդը, մանաւանդ սարերուն կապուած մեծամասնութիւնը գերագոյն ճիգ մը պիտի փորձէ, եթէ ոչ յաղթելու, գոնէ թրքական դաւադրութիւնը ի դերև հանելու համար։ Այդպիսի կացութեան մը բոլոր ախտանշանները կան այսօր։

Բայց բոլորովին անգլուխ չեն Քիւրտերը։ Անոնց յեղափոխական առաջին կոմիտէն, Հօյբունը, հետզհետէ կը տարածէ իր հեղինակութիւնը երկրին խորերը, շնորհիւ ափ մը ուխտեալներու։ Խրատուելով Շէյխ Սայիտի տարերային ապստամբութեան ելքէն, Հօյբունի վարիչները չեն ուզեր կանխել դէպքերը, կամ ազդանշանը տալ այնպիսի շարժումի մը, որ սահմանուած է խեղդուելու։ Այս գործելակերպը, անշուշտ, աւելի վճռական և ծանրակշիռ հանգամանք պիտի տայ գալիք փոթորիկին, որ կրնայ պայթիլ ո՛րև է ատեն։

Կազմուած՝ 1927–ի աշնան, Հօյբունը արդէն դարձեր է հանգոյց մը՝ քիւրտ ժողովուրդի անկախութեան կուսակիցներուն համար։ Կայծ մը, որ կրնայ զարգանալ, եթէ վարիչները հաւատարմօրէն փարին իրենց հռչակած սկզբունքներուն, և մանաւանդ, ցոյց տան կենդանի գործունէութիւն։

Անշուշտ երկու տարին բաւարար ժամանակ չէ, խոշոր և ամուր կազմակերպութեան մը վերածելու համար «Հօյբուն»ը։ Մանաւանդ որ, պայմաններն ալ բոլորովին տարբեր են։ Քիւրտ ժողովուրդը տակաւին թօթուած չէ բէյերու և շէյխերու կախարդական լուծը։ Եւ իբրև անգիր զանգուած, չի հասկնար մտաւորականներու և յեղափոխականներու լեզուէն։ Անհրաժեշտ է երկար ու յամառ աշխատանք, որպէսզի քրտական առաջին կոմիտէն ալ ունի խիտ–խիտ շարքերով և դառնայ անքակտելի կազմակերպութիւն մը, թէ իր ժողովուրդին բարիքին համար և թէ իբրև գործօն ազդակ մը Առաջաւոր Ասիոյ ճնշուած ժողովուրդներու ազատագրութեան և բարօրութեան համար։

Բայց և այնպէս, իր այս համեստ վիճակին մէջ ալ, Հօյբունի անունը բերնէ բերան կը պտտի Արարատէն մինչև Տերսիմ և Կարինէն մինչև Տիգրանակերտ, — ամէն ուր որ քրտական բազմութիւններ կը գտնուին։ Անոր ղեկավարութեան կը սպասեն «ընդհանուր ներում»էն չարաչար զզջացած երևելիներ, ինչպէս և 1925–էն ի վեր անվհատ մարտնչող «փէտայի»–ներ։

Այս բոլորին մէջ, վճռական դերը կիյնայ Արարատի միջնաբերդին, որ կը դիմանայ երկու–երեք տարիէ ի վեր։ Դարպասողներ պակաս չեն այդ միջնաբերդին շուրջը։ Մասնաւորապէս բոլշևիկները։ Այս վերջինները ամէն միջոց փորձեցին, Խոյի, Սալմաստի, Ուրմիոյ, Թաւրիզի, մինչև անգամ Տրապիզոնի և Էրզրումի հիւպատոսներուն միջոցաւ քրտական այդ ճակատը կազմալուծելու կամ զայն հարևան Իրանի և Իրաքի դէմ դարձնելու համար, և ձախողեցան։ Բայց, իբրև վարպետ լարախաղացներ, այժմ կը փորձեն Հօյբունի կեդրոնին միջոցաւ յաջողցնել իրենց կասկածելի խաղերը։ Վերջերս կարմիր գործակալներ երևցած են մինչև Սիւրիա, Միջագետք և Գաղեստին, հրապուրիչ խայծերով, որոնց մէջ առաջին տեղը կը բռնեն կարմիր ոսկին ու զէնքը,— երկուքն ալ հաւասարապէս թանկագին՝ Քիւրտին համար։

Վա՛յ քրտական դատին, եթէ յաջողեցան հրապուրել մէկով կամ միւսով։ Մանաւանդ որ, այս մաքիավէլեան թակարդին գլուխը կանգնած է արիւնռուշտ Էնկիւրին։ Ա՛ն է որ, յուսահատ՝ ջարդերու, կախաղաններու և տեղահանութեանց հետևանքներէն, կը ճգնի խաղաղութեամբ որսալ Քիւրտերը, կամ գոնէ հարևաններուն դէմ ուղղել անոնց զէնքը։

Ճակատագի՞ր է թէ պատմական անէծք,— ամէն անգամ որ Թիւրքը ծրագիր և որոշում կունենայ ջլատելու, կոտորելու ազատատենչ ժողովուրդ մը,— իր կողքին կանգնած կը տեսնէ ռուսական արջը, բթամիտ և նենգամիտ «Քեռի»ն, երէկ՝ «պաշտպան քրիստոնէից», այսօր՝ «յառաջապահ» ճնշուած ժողովուրդներու ազատագրութեան։ Թղթատեցէ՛ք մեր պատմութիւնը, սկսելով 1878–էն մինչև 1920, և շարունակութիւնը փնտռեցէք քրտական դէպքերուն մէջ, 1925–էն մինչև մեր օրերը։

* * *

Վերջերս առիթ ունեցանք տեսակցելու Հօյբունի վարիչներէն մէկուն հետ, իրենց կազմակերպութեան վիճակի և յառաջիկայ գործունէութեան մասին։

Մեր խօսակիցը, իսկական Քիւրտի դիմագծով զինուորական մը, վառվռուն և վճռական, պարզեց իրենց մտածումներն ու ծրագիրները, առանց պատ ի պատ ձևերու․

— Դեռ երկու տարի առաջ, Հայերն ու Քիւրտերը թշնամի կը համարէին իրար, իբրև հետևանք անցեալի դէպքերու։ Այս անհամաձայնութիւնը յիսուն տարին չանցնիր և առեղծուած էր Թիւրքերուն կողմէ, որոնք

digitised by A.R.A.R.@

օսմանեան միութեան համար սպառնալիք մը կը նկատէին Հայերը և Քիւրտերը։ Անոնք մեզ կը բաժնէին տիրելու համար և դժբախտաբար կը յաջողէին իրենց նպատակին հասնիլ։ Խիստ դժնդակ և արիւնալի դէպքերէ յետոյ, երկու ազգերը տեսան ճշմարտութիւնը և այժմ կը հասկնան իրար։

Ինչպէս որ հայ ազգը ջարդուեցաւ պատերազմի ընթացքին, քիւրտ ազգն ալ նոյն վիճակին մատնուեցաւ 1925–ին։ Թիւրք հոգին, որ նոյնը կը մնայ եւրոպական գլխարկին տակ, քիւրտ կնոջ և մանուկին չխնայեց այն բոլոր գարշութիւնները որոնց ենթարկած էր հայ կինը և մանուկը։ Թիւրքը, որ ժամանակին պղծած էր հայ մայրերուն պատիւը, այս անգամ նոյն գարշելի արարքը գործեց քիւրտ մայրերուն պատւին դէմ։ Քստմնելի դէպքեր, որոնց արհաւիրքը կուզեմ խնայել ձեզի։ Նոյն տառապանքը կը միացնէ զոհերը՝ դահիճին դէմ։

Քիւրտերը լսելով այս մերձեցումը, կը յայտարարէին միաձայն. «Ահա՛ իրական փրկութեան ճամբան»։

— Ի՞նչ վիճակի մէջ է Հոյբունը։

— Հոյբունը նախ և առաջ զբաղեցաւ կազմակերպութեամբ։ Յարմար կեդրոնէ մը վարելով գործը, երկու տարուան յարատև աշխատանքէ մը յետոյ, յաջողեցանք երկրին ներսը հաստատել կազմակերպութիւն մը՝ համաձայն մեր ազգային աւանդութեանց։ Այնպէս որ, այսօր երկրի գրեթէ բոլոր կարևոր կէտերուն մէջ մասնաճիւղեր և գործակալներ ունինք, իսկ երկրի կեդրոնին մէջ՝ կոմիտէ մը, որուն անդամները մտաւորականներ են։ Միւս կողմէ, բոլոր զինեալ ուժերը մեր հրամանին տակ են։ Կրնամ առանց չափազանցութեան ըսել, որ Հոյբունը ճանչցուած է իբրև միակ հեղինակաւոր ուժը՝ Քիւրտերու ճակատագիրը վարելու համար։

Համաձայն մեր համագումարի որոշումներուն, որոնք կը պարտադրեն բարւոք յարաբերութիւններ հաստատել հարևան և մանաւանդ ցեղակից երկիրներու հետ, պատուիրակներ ղրկեցինք զանազան վայրեր, մեր նպատակները բացատրելու համար։ Ընկեր մըն ալ ղրկեցինք Ամերիկա, այնտեղ հաստատուած Քիւրտերու մէջ պրոպագանտ ընելու և նիւթական միջոցներ ճարելու համար։ Այս առաքելութեան* մանրամասնութիւնները հրատարակուած են թերթերու մէջ։

Ինչպէս ըսի, մինչև հիմա մենք զբաղեցանք վարչական կազմակերպութեամբ։ Ժամանակը եկած է որ միջոցներ ճարուին, գործի ձեռնարկելու համար պատեհ ժամուն։

— Վախ չունի՞ք, որ Քիւրտիստանի Քիւրտերն ալ բնաջինջ ըլլան, ինչպէս եղան Հայաստանի Հայերը, և Թիւրքերը իշխեն երկու ազգերու դիակներուն և աւերակներուն վրայ։

— Տարօրինակ չեմ գտներ այդ հարցումը, ծանօթ ըլլալով ձեր դառն փորձութեան։ Իմ կարծիքով, պայմանները տարբեր են այսօր։ 1915–ի կոտորածներուն ատեն, հայ ազգը, բացի խիտ շրջաններէն, ցրուած էր կայսրութեան մը մէջ որ 30 միլիոն ժողովուրդ կը հաշուէր։ Կար հայկական բնակչութիւն մը, որ կը սկսէր Պոլսէն և կը վերջանար արևելեան սահմաններուն վրայ։ Հայերուն դէմ կարելի էր գործածել կայսրութեան զանազան տարրերը, ինչպէս որ ըրին։ Հայերը միայն մէկ ելք ունէին արևելեան սահմանին վրայ։ Թիւրքիան պատերազմի մէջ էր, իր զինակիցները յաղթանակէ յաղթանակ կը սուրային։ Թիւրքիան վախ չունէր ո՛և է մէկէն ու ոչինչ կը վտանգէր։ Ջարդելով Հայերը, կրնար գրաւել անոնց տուները և հարստութիւնը և զանոնք յատկացնել Քիւրտերուն, որոնք այն ատեն հաւատարիմ էին օսմանեան վեհապետին։

Իսկ այսօր Թիւրքիան վերածուած է տասը միլիոն բնակչութեամբ պետութեան մը։ Այդ բնակչութեան տասը մէկ մասը կը կազմեն Քիւրտերը, որոնք կապրին բոլորովին խիտ ու համախումբ։ Թիւրքերուն ձեռքը չկայ տարր մը, որ ուղղեն Քիւրտերուն դէմ։ Թիւրքիան շրջապատուած է եւրոպական պետութեանց հոգատարութեան ենթարկուած երկիրներով։ Քիւրտերը տէր են իրենց շրջանի բոլոր լեռներուն, իսկ ուրիշ լեռներ ալ կան, ուր կրնան բարձրանալ իրենց ուզած ատենը։

Մնաց որ, Թիւրքիան ինքն ալ առաջին փորձով ըմբռնեց երկու ջարդերուն տարբերութիւնը և կասեցուց իր յառաջխաղացութիւնը։ Քրտական ջարդերու ատեն, որովհետև կռիւը տեղի կունենար միայն Թիւրքերու և Քիւրտերու միջև, Թիւրքերը նոյնիսկ աւելի ծանր կորուստներ կրեցին քան մենք։ Այս տեսակէտէն չափազանց պերճախօս է ընդհանուր ներումը, որ նորոգուեցաւ երեք անգամ։ Ուրիշ զանազան փաստեր ալ կապացուցանեն թէ Թիւրքիա չի կրնար այնքան անողորմ դառնալ մեզի հանդէպ, որքան կուզէ։ Քրտական լեզուն, որ արգիլուած էր, այժմ ազատօրէն կը խօսուի Տիարպէքիրի փողոցներուն մէջ։ Թրքական ո՛րևէ ջոկատ, որ 150 զինուորէն պակաս է, չի համարձակիր տեղէն շարժիլ, վախնալով Քիւրտերու յարձակումէն։ Այս բոլորը կապացուցանեն թէ ո՛րքան տկարացած են Թիւրքերը։ Մենք զօրաւոր ենք և այդպէս ալ պիտի մնանք։

digitised by A.R.A.R.@

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔ

Վերջին ամիսների միջազգային կեանքի ամենախոշոր երեւոյթը, անկասկած, Անգլիայի խորհրդարանական ընտրութիւններն են, Մայիս 30-ին: Անգլիական ընկերվարութիւնը տարաւ փայլուն յաղթանակ, որի հետեւանքով անխուսափելի է Աշխատաւորական Կուսակցութեան կառավարութեան գլուխ անցնելը — մի փաստ, որ կարող է ահագին անդրադարձում ունենալ և՛ Անգլիայի սահմաններից դուրս:

Մայիս 30-ի ընտրութիւնների արդիւնքը գնահատելու համար, հարկաւոր է նախ յիշել 1924թ. հոկտ. 29-ին եղած ընտրութիւնների արդիւնքը. այն ժամանակ Պահպանողական կուսակցութիւնը ստացաւ 7,854,523 քուէ և անցկացրեց 400 պատգամաւոր, Աշխատաւորական կուսակցութիւնը՝ 5,489,077 քուէ և 162 պատգամաւոր, Ազատական կուսակցութիւնը՝ 2,928,747 քուէ և 39 պատգամաւոր և, վերջապէս, միւս խմբակցութիւնները (կոմունիստ, անկախ)՝ 367,932 քուէ: Կոմունիստները չահեցին մէկ աթոռ:

Ապա՝ անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ և այն, որ ա՛յս ընտրութիւններին ձայնի իրաւունք ունէին 20–30 տարեկան կանայք էլ, որով քուէատուների ընդհանուր գումարը հասաւ 28 միլիոնի և քուէարկութեան մասնակցեցին շուրջ 22 միլիոն երկսեռ քաղաքացիներ:

Ընտրողների այս պատկառելի թիւը, մայիս 30-ին, հետեւեալ ձեւով ուեց իր քուէները.

| | | | |
|---|---|---|---|
| Պահպանողականներ | 8,536,285 | քուէ 255 | պատգամաւ. |
| Աշխատաւորականներ | 8,317,025 | ,, 288 | ,, |
| Ազատականներ | 5,226,594 | ,, 57 | ,, |
| Այլ խմբակցութիւններ | 307,931 | ,, 6 | ,, |

Այս թւերը (առ 1 յունիսի) ամբողջական չեն. մնում է դեռ չպարզւած 9 շրջանի արդիւնքը, որով պատգամաւորների քանակը կը լինի 615: Հաւանական է համարւում, որ այդ 9 տեղերը չահեն պահպանողականներն ու ազատականները: Դրանից, սակայն, դրութիւնը չի փոխւի. աշխատաւորականների յաջողութիւնը անվիճելի է*):

Ճիշտ է, եթէ առնենք քուէների համեմատութիւնը, պահպանողականների կուսակցիներն աւելի շատ են, քան աշխատաւորականներինը. 8,536,285 պահպանողականներ ունել են 255 պատգամաւոր, մինչդեռ 8,317,025 աշխատաւորականները՝ 288 պատգամաւոր: Նոյն կարգի անհամաչափութիւն կար և նախորդ ընտրութիւններին. այն ժամանակ էլ 7,854,523 պահպանողականներ ստացան 400 տեղ, այնինչ 5,489,077 աշխատաւորականները՝ 162 տեղ: Այս տարօրինակութիւնները բխում են անգլիական ընտրական օրէնքի առանձնայատկութիւններից և, ի հարկէ, կազմում են Անգլիայի խորհրդարանական կարգերի ստւերաւոր կողմը:

Այս պայմաններում, լուրջ դժւարութիւններ են սպասւում աշխատաւորականներին: Բացի այն, որ քուէարկողների մեծ մասը նրանց հետ չէ — փաստօրէն պահպանողականների ու ազատականների բուրժուական միութիւնը երկու անգամ աւելի զօրաւոր է երկրում, քան աշխատաւորականները — խորհրդարանում էլ նրանք բացարձակ մեծամասնութիւն չունեն և ստիպւած պիտի լինեն դիմելու ազատականների օգնութեան:

Ըստ անգլիական խորհրդարանական կարգերի, աշխատաւորականների իշխանութեան կոչւելը անխուսափելի է: Մակդոնալդը, իբրև ամենամեծ խորհրդարանական հատւածի պետ, ի հարկէ, կը հրաւիրւի պալատ և կը ստանձնէ նոր կառավարութիւն կազմելու պաշտօնը: Նրան կը յաջողւի տեւական կառավարութիւն կազմելը երկու պայմանով. կա՛մ ազատականների լռելեայն օժանդակութեամբ, կամ համագործակցութեամբ նրանց հետ: Այսպիսով, հակառակ տարած անվիճելի յաղթանակի, այս անգամ էլ աշխատաւորականները չպիտի կարողանան ամբողջութեամբ գործադրութեան դնել իրենց ծրագիրը. նրանք ստիպւած պիտի լինեն զիջումներ անել ազատականներին:

Տեսականօրէն հնարաւոր է և ուրիշ դրութիւն. կարող են պահպանողականները համաձայնութեան գալ ազատականների հետ և կազմել կօալիսիոն բուրժուական կառավարութիւն: Այդ դէպքում, հակառակ չահած մեծամասնութեան, աշխատաւորականները նորից կը մնան ընդդիմադիրի դերում:

Այս հնարաւորութիւնները ցոյց են տալիս մի չափազանց հետաքրքրական երեւոյթ. փաստօրէն՝ փոքրամասնութիւն կազմող ազատականներից է կախւած նորընտիր խորհրդարանի վիճակը. Լոյդ Ջորջը որ կողմը անցաւ, այն կողմն էլ կը կազմէ կառավարութիւնը: Իսկ Լոյդ Ջորջը, ի հարկէ, բաւական փորձւած քաղաքագէտ է, օգտւելու ստեղծւած կացութիւնից իր կուսակցութեան համար քաղէ առաւելագոյն օգուտը:

Այս հնարաւորութիւնները ցոյց են տալիս և մի ուրիշ բան. հազիւ թէ նման պայմաններում հնարաւոր լինի կայուն ու տեւական կառավարութեան կազմակերպումը: Դժւար թէ բուրժուական կուսակցութիւնները հանդուրժեն ընկերվարական կառավարութեան գոյութիւնը, եթէ սա փորձէ իրականացնել իր ծրագրի էական կէտերը: Անհաւանական չէ, որ ո՛չ-հեռաւոր ապագային Անգլիայի քաղաքացիները նորից հրաւիրւեն քուէարկութեան՝ ստեղծելու համար բացարձակ մեծամասնութեան վրա յենւած մի կառավարութիւն: Եւ եթէ բացարձակ մեծամասնութիւն չահողը դուրս գայ Աշխատաւորական կուսակցութիւնը, այդ կը լինի յաղթանակ ո՛չ միայն անգլիական ժողովրդի, այլ և ամբողջ մարդկութեան համար:

---

*) Պէտք է արձանագրել կոմունիստների խորտակումը. ո՛չ մի պատգամաւոր չանցկացրին. նախկին խորհրդարանի միակ կոմունիստ պատգամաւորն էլ՝ Հնդիկ Սակլատւալան տապալւեց: 22 միլիոն քւէարկութեան մասնակցողներից կոմունիստները հաւաքեցին հազիւ 50,614 ձայն:

digitised by A.R.A.R.@

## «ԴՐՕՇԱԿ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Հ․Յ․Դ․ 11րդ Ընդհանուր Ժողովի աշխատանքների հետեւանքով և մի շարք տեխնիկական պատճառներով, «Դրօշակ»-ի վերջին համարները լոյս տեսան անկանոն կերպով։ Ձեռք են առնուած միջոցներ, որպէսզի նման թերութիւններ չկրկնուեն։ «Դրօշակ»-ի յաջորդ համարն էլ կը լինի միացեալ — յունիս-յուլիս — սովորականից մեծ ծաւալով, իսկ այնուհետեւ լոյս կը տեսնէ միշտ իւրաքանչիւր ամսի սկզբին։ Նաև միջոցներ են ձեռք առնուած ապահովելու համար նոր աշխատակիցների մասնակցութիւնը «Դրօշակ»-ին։

---

### *ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՍ*

Կը խնդրէ հայերէն թերթերու և պարբերականներու խմբագրութիւններէն, հրատարակիչներէն ու հեղինակներէն, փոխանակութեան սկզբունքով «Դրօշակ»-ին ուղարկել իրենց հրատարակութիւնները։

---

### *Հ․Յ․Դ․ ԺՐՆԵՒԻ ԳՐԱՊԱՀԵՍՏԻ ԿՈՂՄԷՆ*

*Հ․Յ․Դաշնակցութեան Ժընեւի գրապահեստը որոշուած է փոխադրել Փարիզ։ Այդ պատճառով առենք մը համար գիրքերու և նկարներու վաճառքը կը դադրեցւի։ «Դրօշակ»-ի յաջորդ համարներէն մէկուն մէջ կը դրւի գրապահեստի նոր հասցէն և վաճառման պայմանները։*

---

### «ԴՐՕՇԱԿ»-Ի *ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ*

« Դրօշակ » – *ի տարեկան բաժնեգինն է՝*

Ֆրանսայի, Յունաստանի, Բուլգարիայի, Ռումանիայի, եւրոպական այլ երկրների և Սիւրիայի համար 25 փրանկ։

Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Միջագետքի, Հնդկաստանի, ամբողջ Պարսկաստանի *և* մնացած բոլոր երկրների համար՝ երկու դոլար։

### *ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ*

*Նոր տարեշրջանից — յուլիս ամսից սկսած՝ Պարսկական Ատրպատականի համար եւս «Դրօշակ»-ի տարեկան բաժնեգինը*

երկու դոլար է։

---

### *ԼՈՅՍ ՏԵՍԱՒ*

Ողբացեալ Տոքթ․ Երուանդ Ֆրանգեանի գիրքը

### *ՄԵՐ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՔԸ*

Ս․ Վրացեանի յառաջաբանով և հեղինակի նկարով
Սահմանափակ թիւով տպագրւած

*Ստանալու համար դիմել՝ Տիկին Ա․ Ֆրանգեանի, Համատան, (Պարսկաստան), Տպարան* Navarre, 5 Rue des Gobelins, Paris, *և «Յառաջ»-ի խմբագրատունը։*

Գին 1 դոլար կամ 25 փրանկ։ Փոստի ծախք չկայ։

---

### *ՀՐԱՊԱՐԱԿ ԵԼԱՒ*

« Մատենաշար Դրօշակ »-ի թիւ 67

Վ․ Լէվինսկի

### ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ և ՃՆՇԻԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

*Թարգ*․ Կ․ Սասունի

Գին 10 փրանկ

*Ստանալու համար դիմել «Դրօշակ»-ի խմբագրութեան։*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յայտագիր Հ․Յ․Դ․ ԺԱ․ Ընդհանուր ժողովի . . 65
Հ․ Յ․ Դ․ ԺԱ․ Ընդհանուր ժողովը . . . . . . . . 68
Կազմակերպական խնդիրները Հ․Յ․Դ․ ԺԱ․ Ընդհ․ ժողովում (*Ա․ Ջամալեան*) . . . . . . . . . . 69
Քաղաքական խնդիրները Հ․Յ․Դ․ ԺԱ․ Ընդհանուր ժողովում (*Ս․ Վրացեան*) . . . . . . . . . . 72
Արեւելեան Նահանգները (*Հ․ Սամուէլ*) . . . . . 78
Ծրագիր և իրականութիւն (*Ս․ Վ․*) . . . . . . . 83
Թիւրքիոյ շուրջ . . . . . . . . . . . . . . . . 91
Միջազգային կեանք . . . . . . . . . . . . . . 95

«ԴՐՕՇԱԿ»-Ի
*Թիւն արժէ* 2 *Ֆր*․ 50 *սանտ*․

«ԴՐՕՇԱԿ»-Ի *հասցէն՝*
M[lle] S. AGOPIAN.
5, rue des Gobelins, 5. Paris (13e)

Société Anonyme de Navarre, 5 rue des Gobelins. Paris (13e). Gérante: Delacuvellerie Hampartzoumian

digitised by A.R.A.R.@